



ՀԱՅԻՒԹԻՒՆ







Ծ  
ՏԱՐԵ

# ԷՂՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱ  
ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷՂՄԻԱԾԻՆԻ

Յուլիս Օգոստոս

1993



ՀՐԱՄԱՆԱԻ


S. S. Վ. Ա. Զ Գ Ե Խ Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Յ

ՎԵՀԱՓԱԼԻ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՑՈՅ

18245m



71-95



## ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ՎԱՐԺԱՐՄԱՆ 1992—1993 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

«Թոյլ տորք մանկուոյդ և մի՛ արգելուք զդոսա գալ  
առ իս, զի այդպիսնացդ է արբայութիւն երկնից»:  
(Մտթ. ԺԹ 14—15):

Հավիտյաններից եկող Տերունական այս խոսքը ևս մեկ անգամ հաստատվեց սույն տարրա հովիսի Յ-ին, երբ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Արցախի թեմի առաջնորդ գերշ. Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանի, Մայր Այսոնի միաբանության, հոգևոր ճեմարանի սամերի և մեծաթիվ հյուրերի ներկայությամբ տեղի ունեցավ Ս. Էջմիածնին կից Ս. Մարիամ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի տառմնական տարեշրջանի փակման համեմար:

Տերունական աղոթքից հետո վարժարանի երգախումբը կատարեց «Եկեղեցին Հայկական» երգը: Երեխաններին իրենց ի խորոց սրտի հնչող բարբառով և յուրովի մասուցմամբ նիրավի ներկաներին հոգիններում և մրարքերում Հայաստանյաց Սուրբելական Սուրբ Եկեղեցու հությունն ու առաքելությունը նորովի ընկալելու լույս սինեցին, որը, սակայն, ավելի ինաստավորվեց և ամբողջացվեց «Էջմիածնի զանգերը» ստեղծագործությամբ՝ նեղինակի՝ Արքուր Բորիկյանի սրբանչելի կատարմամբ:

Այնուհետև հանդիսության բացման խորով հանդես եկավ վարժարանի տեսուչ Տ. Վազգեն արդ. Միրզափանյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազն հայո, հոգենորհ և արժանապատիլ հայրեր, հարգելի ոսուցիչներ, սիրելի սամեր և ներկաներ:

Այսօր մեզ համար հոգևոր միհիթարության և ուրախության օր է, քանզի շատ տասնամյակներ անց հայոց դպրոցներում սկսեցին աղոթքներ և շարականներ հնչել, ազգային դպրոցների կողքին սկսեցին կիրակնօրյա դրայոցներ բացվել, որտեղ այսօր ավելի քան երբեք անհրաժեշտությունը եղալ հայ մանուկների կրթության, հայ մանուկների հոգևոր դաստիարակության:

Հայկական կիրակնօրյա վարժարանները տասնամյակների պատմություն ունեն: Շատ ծանր պայմաններում կյանքի կոչվեցին կիրակնօրյա դրաբանը՝ սկսած 1915 թվականից, երբ հայոց Մեծ եղասպանությունից հնատո թափառական մեր հայ զավակների կրթության հարցը օրինասական վիճակում էր: Հիրավի պետք է որ մեկ անգամ ևս այդ ծանր ու դժվարին պարտականությունը որոշեր և իր ուսերին կրեր Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Եվ ամբողջ Սիխոսորի տարածքով մեկ եկեղեցիներին կից ստեղծվեցին կիրակնօրյա վարժարաններ, որտեղ մեր հոգևոր հայրերը հայ մանուկին ծանոթացրեցին հայ հոգուն, հայոց հավատքին և Ավետարանի լույսին:

Անավասիկ վերջին տարիների մեր հոգևոր-ազգային վերազարթունքից հետո Հայաստանում և բացվեցին և օր-ավոր շատանում են կիրակնօրյա վարժարանները և դրանց թվում նաև Ս. Մարիամ Աստվածածնի անոնը կրող մեր վարժարանը: Մենք այսօր գոհություն և փառք են տալիս Աստծուն և մեր անշափ մեծ գոհունակությունը հայտնում Վեհափառ Հոռը, որ իր օրինությամբ և իր շամադրությամբ ստեղծեց այս դպրոցը, որը գրեթե կես տարվա ընթացքում կարողացավ մեր մանուկներին տալ հոգևոր-բարոյական և իմացական դաստիարակությունն և կրթություն:

Այսօր մեզ համար կրկնակի ուրախության օր է, որովհետև Ամենայն Հայոց Հայրապետն իր օրինությունն է բերել մեզ ամենքիս, մեր դպրոցի սամերին, որպեսզի Աստվածո օրինությամբ այս վարժարանը շարունակի իր գործունեությունը և տա Աստված, որ ինչպես Էջմիածնում, նոյնպես և Հայաստանի մյուս քաղաքներում բացվեն նորանոր կիրակնօրյա վարժարաններ, որպեսզի հայ մանուկները ապելի կենդանի կերպով շնչեն Ավետարանի ճշմարտություններին, մեր հոգեցունց շարականներին ու ասղմուներին:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստվածամոր անոնը կրող կիրակնօրյա այն վարժարանը, որը դեռևս իր առաջին քայլերն է անում, կարողանաւ կանաչ ճանապարհված առաջնորդվել խաղաղության նախանձիքստ, հայ մանուկի հոգուն կերտի ճշմարտի հայեցի ու եկեղեցաներ ոգի, հայոց հայրապետների և մեր վարդապետների շնչով դաստիարակի և մեր անկան պատմության համար պատրաստի արժանավոր զավակների:

Հոգեշնորի Հայր Սուրբի խոսքից հետո վարժարանի սաների հոգեթով կատարմամբ հնաշած «Չոն Վարդանաց», «Հիմի՛ է լունը, եղբարը», «Պը-պուն Ավարայրի» երգերը դամիինի ողջ ներկաներին հոգեպես տեղափոխեցին Ավարայրի դաշտ՝ մերթ ականջալուր լինելով ուզմի ահեղագոռ շնչորների որոտին, մերթ սուսերների և վահանների կուան-կոփունին, մերթ հայ քաջերի խրոխտ ձայնին և մերթ այս արիասիրտ հայորդների խոկելի հիշատակը դայլայող բրուլի քարին:

Սակայն այս ամենի ամփոփումն էր Արմինե Մարտիրոսյանի «Անի» երգի քաղցրածործոր և հոգաթթիթի մատուցումը:

Այնուհետև Ս. Մարիամ Աստվածածնի կիրակնօրյա վարժարանի աշակերտության անոնցից երախսիքի խորսոր հանդես եկավ Արմինե Շուղուրյանը:

Մի պահ տևած դադարից հետո, դահլիճը կրկին լցվեց Փրկչի ԾԱՅՆՅԱՆ Ավետիսիներով. «Ավետիս մեծ խորհրդի», «Ավետիս», «Լուս գիշեր», «Մի զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» շարականների երգեցողությամբ ներկաներն զգացին Բերդինեմը՝ Աստվածո Որդո, Փառքի Տիրոց մարդեղա-

նալը անշուք մտորում, Սուրբ Կույսի ապրումները, հովհակների փառաբանությունը, մոգերի երկրպագությունը, ինչպես նաև Տիրոջ մկրտությունը Հորդանանի կոհակներում, և այդպիսով մեկ անգամ ևս հաղորդակից լինելով Տօնօրինական ճշմարտություններին: Խոկ Տիրոջ հարության փառաբանությամբ ամենքին կյանքի լեխառն ծովի խաղաղ նավահանգիստը հանգրվանելու հույս ներշնչեցին: Ասպա Կարինե Քեշիշյանի «Հարության աղողքի» պրտարուիս արտասանությամբ և երգչախմբի «Ով պարտիզան» երգի գեղեցիկ կատարմամբ դաճիճն ապրեց իր հոգնոր վերացման բարձրագույն պահը: Սակայն փոքրիկները չմոռացան երախտիքի տուրք մաստցել նաև Սուրբ Ավետարանի լեզվին իրենց հալորդակից դարձնող առանջին թարգմանիչ-ուսուցիչներին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցին և Ս. Սահմակ Պարթևին և մյուս սրբազն վարդապետներին՝ Կարդան Սրբելցու «Ոք զարդարեցին» գեղեցկահյուս շարականով:

Այնուհետև վարժարանի ուսումնական տարվա հաշվետվությամբ հանդես եկավ վարժարանի տնօրինութիւն Զովհիետա Ավագյանը, որ ի մասնավորի ասաց.

«Միրելի Վեհափառ, Զեր բարձր կարգադրությամբ և բազավերանքով 1992 թ. նոյեմբերի 22-ին բացվեց Մայր Աթոռուն կից Էջմիածին քաղաքի առաջին կիրակնօրյա վարժարանը Ս. Մարիամ Աստվածածին անունով: Զեր օրինությամբ և բարձր կարգադրությամբ բացման խորով և օրինությամբ հանդես եկավ սիրելի Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուրաֆյանը: Այսպես կիրակնօրյա վարժարանը կյանքի կոչվեց իր 80 աշակերտներով: Խըստաշոն ձմուն և վառելանցութիւն բացակայության պատճառով փակվեցին հանրակրթական դարցները, լուսի և սենյի բացակայության պատճառով իջել էր տիբության և մոպայության քողը բաղարի հատկանի կրտսեր բընակչության երեխաների վրա: Մեր կողմից որոշվեց երեխաների հոգու խավարը փարատել Հիսոս Քրիստոսի Կենդանի լուսով՝ շարունակել դասերը: Մայր Աթոռու ունեցած առանց այն էլ սուր վառելանցութիւն պաշարից մեզ բաժին համվեց և բարի մարդկանց շնորհիվ շարունակվեց նորածիլ վարժարանի կյանքը, որը լուել էր 70 տարիներ առաջ: Բացվեց մանուկ և Աստված հարաբերության 70 տարի առաջ փակված էքը:

Հիմնվելով մեր Հայոցերի տեսակետի բարձր ու եզակի գնահատականի վրա, անհրաժեշտ է փոթորիկներով ու փորձություններով լի կյանքի շեմին կանգնած աշակերտուն զիմել Աստվածաշնչի կենդանի կյանքի գիտելիքներով, որպեսզի վաղվա Անկախ Հայաստանի բաղաքացին կարողանա պաշտպանել իր հայրենիքը և իր համբայա Սուրբ Եկեղեցին ու մշակույթը, որպեսզի հարատել Հայաստան աշխարհը: Ամեն մեկս հպարտ ենք աշխարհի մշակութային գանձարանում մեր հայրերի թողած փալուն ավանդով: Մենք են պետք է փորձնեք մեր ավանդը թողնել հաջորդ սերունդներին: Մեր նըպատակն է՝ ‘ուսուցանել մանուկներին’ փորձության ժամին համբերել, դրժվարության մեջ՝ ելք փնտորել, տոկալ, հախանձի, ատելության պահը շրջանցել սիրով ու հարգանքով: Հնազանդվել պետության, իշխանության, ուսուցի, ծնողի, մեծերի հրահանգներին և արդուն լինել Հայրենիքի և Եկեղեցու պաշտպանության մեջ: Ապրել և ստեղծագործել հայի հախնաց արժանապատվությամբ:

Այս բողոք հաջողությունները, սիրելի Վեհափառ Հայո, ի վերջո բերում են մեզ խնարինելու Զեր գահի առջև, ասելու Զեզ երախտիքի և շնորհակալության խոսքեր և մաղթելո՛՝ երկար օրեր Հայոց Հոր...»:

Հանդիսության ավարտին վարժարանի շնորհալի ասճ Շողակաթ Հարույտյանը ֆելյուայով ներկայացրեց «Ենու է աղմկում գետը» Փիլմից մեղեղի: Հարկ է նշել, որ իրենց անզուգական նվազակությամբ մեծ ոգևորություն էին առաջացնում և փառ հաղորդում հանդիսությանը դաշնակահար Արթոր Բորիկյանը և ջութակահարուինի 13-ամյա Տաթևիկ Սահմակյանը:

Հանդիսության ավարտին իր հայրապետական մաղթանքներով և օրննույթամբ վարժարանի սամերին, ուսուցիչներին և ներկաներին դիմեց Ամենայն Հայոց Հայրապետը.

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Սիրելի սաներ և ծնողներ,

Ես շատ հավանեցի այս ամենը, այս դահլիճը՝ լուսավոր, բարեկարգ, ձաշակավոր, և մանավանդ ինձ ուրախացրեց ձեր բոլորի ներկայությունը: Երևի մեծ մասամբ ծնողներ եք կիրակնօրյա վարժարանի: Բոլորիդ բերում եմ իմ հայրական ողջունը՝ բարի մաղթանքներով լի: Ես իմ գոհունակությունը պեսք է հայտնեմ ձեզ, հարգելի ծնողներ, որ ձեր զավակներին բերեցիք այս կիրակնօրյա վարժարանի հարկի տակ, որպեսզի նրանք բրիտոննեական ուսում ստանան և դառնան ավելի բարոյական և հոգևոր նկարագիր ունեցող ապագա զավակները մեր ազգի:

Մենք, իրեւ հոգևորականներ, համոզված ենք, որ որևէ ժողովուրդ, այդ թվում նաև մեր ժողովուրդը, չի կարող բարոյական հիեալյների բարձունքին համանել՝ առանց կրոնական գատարակության, առանց Ս. Ավետարանի և ընդհանրապես Ս. Գիրքը ճանաչելու, առանց մեր Եկեղեցին ճանաչելու և նրա կամարների տակ աղոյելու, կամ առանց Ա. պատարագներին մասնակցելու՝ արժանի լինելու համար աստվածային շնորհների բաշխմանը Ա. պատարագի սեղաններից: Այս ամենը մի ամբողջ ուսուցում է, որ մեր ժողովորդի կաներում խարսխված է 1700 տարիներից ի վեր:

Դժվար և տխոր ժամանակների բերունք այդ ուսուցման ընթացքը ընդհատվեց մեր երկրում, բայց հիմա, փառ Աստոծո, մեր ժողովուրդն ապրում է իր հոգևոր վերածնունդը, զգում հոգևոր արժեքների ծարավը, որ շատ մարդկային է և բնական հնագույն ժամանակներից ի վեր, մինչև մեր օրերը:

Տեսնելով այստեղ Ս. Գայանե վանքի վանահոր՝ Տ. Գորգենին, ես հիշեցի վերջերս իս հանդիպումը գրեթե ծերունի մի մարդու, որը հիշում էր հիսուն-վախոսն տարի առաջ Ս. Գայանե վանքում ծառայող մի սարկավագի, Հարույտյուն սարկավագին, այդ դժվար օրերին, երբ Եկեղեցին հալածվում էր, և համարյա ժողովուրդը համարձակություն չէր ունենում Եկեղեցի մունելու, բայց մի քանի տարեցներից: Այդ սարկավագն ասելիս է եղիլ իր կնօշը և իր վատահեղի մտերիմներին, թէ՝ մի՛ վախենաք, ես էլ կանցնի, և լի Եկեղեցին կծաղկի:

Ահա այս մարգարեւությունն իրականացավ, ձախորդ օրերը ձմռան ըրման եկան ու անցան, և մեր Եկեղեցին այսօր կոչված է իր առաքելությունը շարունակելու լայն հորիզոնների վրա: Այս ճանապարհի վրա ես մեծապես տիհարական տեսակետից վճռական Եշանակություն ունեն քրիստոնեական բարոյականություն շամբելու համար նրանց: Եվ ես պարտը եմ զգում

իմ շնորհակալությունը հայտնելու բոլոր նրանց, ովքեր կազմակերպեցին Ս. Մարիամ Աստվածածին այս կիրակնօրյա վարժարանը: Իմ հատուկ գընահատանքը վարժարանի տնօրենություն, որ թիշ առաջ հանդես եկավ իր սրանչեղի խոսքով: Մաղրում եմ, որ սկսված այս գործը շարտնակվի Էլ ավելի լայն շաբերով, և վարժարանը ոչ միայն 250 աշակերտ ունենա, այլև առաջիկա տարիների ընթացքում կրնկնապատկվի և եռապատկվի այդ թիվը: Մեր Էջմիածին քաղաքի ողջ աշակերտությունը պետք է ներգրավվի այս քրիստոնեական դաստիարակության գործի մեջ:


Իմ գնահատանքը նաև այսօր երգերով ու նվազներով հանդես եկող աշակերտներին, հատկապես երիտասարդ դաշնակահարին, որ շնորհալի կատարող է: Այն բոլոր արտասանություններն ու երգերը, որ մենք լսեցինք, ինձ խորապես միտիարեցին և լավատեսություն ներշնչեցին: Թույլ տվեք ասել, որ այսպիսի մթնոլորտում ես իմ տարիքը մոռանում եմ և կարծում, որ ես ել ձեզ նման երիտասարդ եմ:

Իմ գնահատանքը նաև Հայր Վազգենին, որ փայլուն աշխատանք է կատարում այստեղ: Կարծում եմ, վերջին անգամը չէ, որ այցելում եմ ձեզ: Հիմա, որ ձեզ նաևաչեցի, ձեզ լսեցի, հասկացա ձեր հոգին, ցանկալի կլիներ ինձ համար տարին մեկ-երկու անգամ այցելել ձեր հավաքույթներին և ձեզ հետ մեկտեղ ուրախանալ: Հայտնեմ նաև ձեզ, որ առաջիկա սեպտեմբերի երկրորդ կեսին մենք աշխարհի տարրեր երկրներից հրավիրել ենք և նրանք եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին՝ եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ, պատրիարքներ, շորջ հիսուն հոգի, որոնք պիտի գան Էջմիածին ժողովի: Եթե համաձայն եք դուք, հատկապես տնօրենություն, կկամենալի առաջարկել, որ մեր բարձրաստիճան հոգևորականներին հրավիրեք այստեղ և նման հոգևոր հանդիսություն կազմակերպեք, որպեսզի նրանք ևս, ինչպես հիմա ես, հոգևոր միմիթարություն ստանան և փառ տան Աստծոն, որ այսպիսի օրեր է ապրում մեր երկիրը և հատկապես Էջմիածինը, որ սուրբ քաղաք է մեզ համար, որովհետև այստեղ է գտնվում այն տաճարը, որը ինքը՝ Հիսուս Քրիստոս, իշավ 1700 տարիներ առաջ և հիմնեց Հայաստան-յաց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այդ սուրբ տաճարից, այդ սուրբ խորանից բերում եմ ձեզ բոլորիդ, իրեն Ամենայն Հայոց Կաթողիկոս, իմ հայրական ողջումը, իմ հայրապետական օրինությունը՝ բարի մաղթանքներով:

«Ողջ լերուք, զօրացեալք Ս. Հոգով և յաւէտ օրինեալ ի Տեառն և ի մէնջ այժմ և միշտ և յախտեան յախտենից. ամէն»:

Ս. Մարիամ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի հանդեսը եզրափակվեց աշակերտության և ներկաների միասիրու աղոթքով՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան Սրբոյ Եկեղեցոյ», ինչպես նաև ազգիս Վեհափառ Հայրապետի համար առ Աստված ուղղված մաղթերգով:



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻՑ

Ի գիտութիւն մեր բարեպաշտ ժողովրդեան, հայորդում ենք տուեալ-  
ներ Հիսիսային Կովկասի եկեղեցական կեանքի մասին:

Հիսիսային Կովկասը մասն է կազմում Ռուսաստանի Հայոց թեմի:  
Թեմակալ առաջնորդն է Տ. Տիրան արքեպիսկոպոս Կիրեղեանը: Հիսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդն է Տ. Եղիշիկ ծ. վարդապետ Պետրոսեանը: Հիսիսային Կովկասում հայութեան թիւն է շուրջ ութ հարիւր  
հազար շոնչ (Թուստովի մարզը չհաշուած):

Կազմուած են 18 եկեղեցական համայնքներ, այդ թուս՝

Գործող եկեղեցներ և մատուներ՝ 8, վերակառուցուղ եկեղեցի՝ 1,  
կառուցուղ եկեղեցներ՝ 3, աղօթատներ՝ 5, հողամասներ եկեղեցի կառու-  
ցելու համար՝ 6, խաչքարեր-ուխտավայրեր՝ 5:

Գործում են 15 բահանաներ, 8 սարկաւագներ և 8 դպիրներ: Գործում  
է 8 երգչախումբ:

1993 թ. Յունուարի 1-ից Մայիսի 1-ը Սոչիում կազմակերպուել է սար-  
կաւագական չորսամսնայ դասընթացք, ութ առարկաներով: Քննութիւնները  
յաջողութեամբ յանձնեցին 16 սաներ: Ուժն արդէն ձեռնադրուել են սարկա-  
ւագ և ոյթը՝ դպիր: Դասաւանդութիւնները վարել են 5 դասախոսներ:

Հրատարակում է «Խաչքար» ամսաթերթը՝ ուսւերէն, 16 մեծադիր էջե-  
րով, 15,000 տպաքանակով: Խմբագիրն է Հիսիսային Կովկասի առաջնոր-  
դական փոխանորդ Տ. Եղիշիկ ծ. վարդապետ Պետրոսեանը:

Հայ ազգաբնակչութեան ընդհանուր թիւը Հիսիսային Կովկասում հաս-  
նում է 800.000-ի: Գլխաւորաբար՝ Սոչի քաղաքում՝ 120.000 հայեր, Կրասնո-  
դարի երկրամասի 14 մեծ գիտերում՝ 400.000 հայեր, Ստարուպովի երկրա-  
մասի 12 քաղաքներում՝ 200.000 հայեր, նաև Դաշտանում՝ 10.000 հայեր,  
Չեչնիայում՝ 5.000 հայեր, Արդիգեմիայում՝ 2.500 հայեր, Հիսիսային Օսեթիա-  
յում՝ 26.000 հայեր, և այլ բազմաթիւ գիտերում՝ մոտ 30.000 հայեր:

Հիսիսային Կովկասում այժմ գործում են հետեւեալ համայնքները  
իրենց եկեղեցներով:

### 1. Սոչիում Ս. Խաչ մատուն

Կառուցուել է ժողովրդական հանգանակութեամբ 1991—92 թթ.: Օծու-  
մը կատարուել է 1992 թ. Նոյեմբերի 7-ին, ձեռամբ Տ. Տիրան արքեպիսկո-  
պոս Կիրեղեանի:

Հոգեւոր հովին է Տ. Տաթև քմն. Յարութիւննանը: Ունի 1 սարկաւագ և 1 դպիր:

## 2. Աղեքում՝ Ս. Սարգիս Եկեղեցի

1993 թ. Մայիսի 9-ին կատարուեց Եկեղեցու հիմնարկեքի արարողութիւնը, ձեռամբ Տ. Տիրան արքեպիսկոպոս Կիրեղեանի: Ծարտարապետ՝ Յովհաննէս Զատիկեան: Կառուցում է ժողովրդական հանգամակութեամբ:

1992 թ. Փետրուարի 22-ից գործում է փոքրիկ փայտաշէն Եկեղեցի: Հոգեւոր հովին է Տ. Եղիշիկ քմն. Ղազարեանը: Ունի 1 սարկաւագ և 1 դպիր:

## 3. Մակոպսէ-Վիշնյովկապի գերեզմանատան Ս. Սարգիս մատուռ

Տրամադրուած է 0,5 հա հողատարածութիւն:

## 4. Տուապսէում՝ Ս. Մեսրոպ-Մաշտոց ծովս

Տրամադրուած է 2 հա հողատարածութիւն: Հոգեւոր հովին է Տ. Սարգիս քմն. Պողոսեանը:

## 5. Չահումեանում՝ Ս. Էջմիածին Եկեղեցի

Չահումեան գիլը եղել է Ամասկին Հայկական շրջանի (մինչև 1953 թ.) կելորնը: Նրա շուրջ կամ այլ 10 հայկական գիլեր: Եկեղեցին լիշեցնում է Ս. Էջմիածնի Մայր տաճարը, հինգ գմբէթներով, անշուշտ փոքր մասշտարներով: Կառուցում է բարերար Պրճ. Նիկողոս Հայկացի Քոչեանի նոիրատութեամբ: Արդէն ծախսուել է աելի քան 30 մլն ռ.: Մինչև վերջ կանգնեցուած են պատերը և զանգակատունը:

Հոգեւոր հովին է Տ. Յովհաննէս քմն. Սողբաթեանը: Ունի 4 հոգիանոց երգչախումբ:

## 6. Տեմգինկապում՝ Ս. Կարապետ Եկեղեցի

Գտնուում է Տուապսէ շրջանում: Կառուցուել է 1860-ական թթ.: Ծովափմանաւ շրջանում պահպանուած միակ քարեղեն տաճարն է: Սովետական տարիներին քանդուել է զանգակատունը, կառոյցը ենթարկուել ձեւափոխութիւնների և դարձել թունառը նիթերի պահեստ: Այժմ հիմնական վերանորոգութեան կարիք ունի: Հոգեւոր հովին է Տ. Պետրոս քմն. Բաղրամեանը:

## 7. Նովոռոսիյսկում՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ աղօթատուն

Կրօնական համայնքին տրամադրուել է 2 հա հողատարածութիւն: Պատրաստ է և շուտով տեղադրուելու է խաչքար: Հոգեւոր հովին է Տ. Մակար քմն. Տէրտէրեանը: Ունի 1 դպիր:

## 8. Անապալում՝ Ս. Գեորգ ծովս

Տրամադրուած է 4,5 հա հողատարածութիւն: 1992 թ. Մայիսի 30-ին կանգնեցուեց խաչքար: 1993 թ. Մայիսի 30-ին, խաչքարի տարեթարձի տօնակատարութեան օրը, բացուց ՑԱՆՔ մշակութային միութեան շենքը՝ աղօթատուվ և դասասեմեակով:

#### **9. Կրասնոդարում՝ Ս. Աստուածածին ծովին**

Տրամադրուած է 2 հա հողատարածութիւն: 1993 թ. Մայիսի 8-ին տեղադրուեց խաչքար: Հոգեւոր հովիւն է Տ. Յարութիւն քին. Բայադեանը: Ունի 8 հոգիանոց երգչախումբ, 1 սարկաւագ և 1 դպիր:

#### **10. Մակոպում՝ Ս. Յարութիւն ծովին**

Կայ աղօթատուն Տուլսկի գիւղում: Հոգեւոր հովիւն է Տ. Գեւորգ քին. Պողոսեանը:

#### **11. Արմափիրում՝ Ս. Աստուածածին Եկեղեցի**

Կառուցուել է 1839 թ.: Վերջերս Եկեղեցուն վերադարձուեց յարակից շինութիւններից մեկը, որ այժմ վերանորոգում է իրեւ հովուատուն: Հոգեւոր հովիւն է Տ. Ղեւնդ աւագ քին. Աղաջանեանը: Ունի 8 հոգիանոց երգչախումբ, 1 սարկաւագ և 1 դպիր:

#### **12. Ստարոպողում՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի**

Քաղաքի կեդրոնում տրամադրուել է հողատարածութիւն Եկեղեցի կառուցելու համար: Այժմ կատարում են նախագծային աշխատանքները: Հոգեւոր հովիւն է Տ. Կոմիտաս քին. Խաչատրեանը:

#### **13. Պետականութիւնում՝ Ս. Սարգիս Եկեղեցի**

Կառուցուել է 1991—1992 թթ.: Օծումը կատարուել է 1992 թ. Սեպտեմբերի 27-ին, ձեռամբ Տ. Տիրան արքեպիսկոպոս Կիւրեղեանի:

Հոգեւոր հովիւն է Տ. Սարգիս քին. Յունանեանը: Ունի 6 հոգիանոց երգչախումբ, 1 սարկաւագ և 1 դպիր:

#### **14. Կիպովոդսկում՝ Ս. Վարդան մատուռ**

Տրամադրուած է հողատարածութիւն Եկեղեցի կառուցելու համար: Նախագծային աշխատանքներն աւարտուած են: Ծուտով կը կատարուի Եկեղեցու հիմնարկերի արարողութիւնը: Ունի 2 սարկաւագ:

#### **15. Բուլեննովսկում՝ Ս. Խաչ Եկեղեցի**

Կառուցուել է ամենավ դարի վերջին: 1993 թ. կատարուեց հիմնական վերանորոգութիւն: Եկեղեցու բակում կառուցում է հովուատուն: Հոգեւոր հովիւններն են Տ. Յովսէփ արքայա Յակոբեանը և Տ. Միքայէլ քին. Խաչատրեանը:

#### **16. Եղեսիայում՝ Ս. Աստուածածին Եկեղեցի**

Կառուցուել է մեր դարի սկզբին: 1991 թ.-ից կատարում են հիմնական վերանորոգման աշխատանքներ: Վերականգնուել են գլխաւոր և զանգակատան գմբէթները, զետեղուել դռներն ու լուսամուտները, աւարտուել ծեփային աշխատանքները: Այժմ կատարում են յարակի, Ս. Սեղան և Անդրին Անդրեարարական աշխատանքները: Հոգեւոր հովիւն է Տ. Սարգիս քին. Կասամանեանը: Ունի 12 հոգիանոց մանկական երգչախումբ և 1 դպիր:

#### **17. Մոգրեկում՝ Ս. Վարդան Եկեղեցի**

Փայտաշէն է: Այժմ օգտագործում է Ռուս Պրաւոլա Եկեղեցու կողմից: Ստարոպողի Գեղեն միտրոպոլիտը տուել է իր բանաւոր համաձայնութիւնը:

թիմը՝ ամիսը 1 անգամ հայկական պատարագ կատարելու համար: Մողղովով ունի 2.000 հայ:


### 18. Վաղիկաւկազում՝ Ս. Գրիգոր Լուատորիչ Եկեղեցի


Կառուցուել է 1843 թ.-ին: Այս տարի, Յովիսի 1--3-ը, օշուելու է եկեղեցու 150-ամեայ յորելեանը: Ստեղծուել է Յորելեանական յանձնաժողով՝ Հիսիսային Օսեթիայի Հանրապետութեան Մինիստրելորի խորհրդի հայագահի տեղակալ Է. Կ. Կարգիելի նախագահութեամբ: Այս կապակցութեամբ հիմնական վերանորոգութեան ենթարկուեց եկեղեցու տաճիքը, պարսպապատուեց եկեղեցու բակը և վերանորոգուեց եկեղեցու ներքին պատերը՝ ներկարարական առումով: Հոգեւոր հովիս է Տ. Գրիգոր քհնյ. Մուրադեանը: Ունի 8 հոգիանոց երգչախումբ, 1 սարկաւագ և 1 դպիր:

Վերոյիշեալ բոլոր հայաբնակ քաղաքներում վերջին տարիների ընթացքում կազմուել են ու գործում են հայկական մշակութային-հայրենախրական միութիւններ: Շատերն ունեն իրենց ակումբները:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,  
14 Յովիս 1993





## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հովհանի 1-ին, հինգշաբթի.—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ:**

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում և. պատարագ մատուցեց S. Մկրտիչ քին. Երանյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 2-ին, շաբաթ.—Սրբոցն Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխենի տիկնոջն և Խոսրովիդասոյն:**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում և. պատարագ մատուցեց S. Ստեփանոս քին. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 4-ին, կիրակի.—Գիտ տփոյ Սրբունոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ և. խորանի վրա, և. պատարագ մատուցեց S. Խորեն քին. Մարտիրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 7-ին, շորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:**

\* \* \*

**Հովհանի 10-ին, շաբաթ.—Սրբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Սրբոյն Պողոսի երեստասաներորդ առաքելոյն:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում և. պատարագ մատուցեց S. Տիգայր քին. Գլըզճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 11-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ովհանակորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Բարի քին. Մեթնյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 17-ին, շաբաթ.**—Յիշատակ Տապանակին հնոյ և տօն նորոյ Մրբոյ Եկեղեցոց:

Այսօր Ս. Գյանն եկեղեցում և պատարագ մատուցեց Տ. Խորեն քին, Մարտիրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 18-ին, կիրակի.**—Վ.Ա.ՐԴԱՎ.Ա.Ռ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց ովհանակորաբար Մայր աթոռում գտնվող գերշ. Տ. Շահն արքեպո. Անձնյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց (տես էջ 16):

\* \* \*

**Հովհանի 19-ին, երկուշաբթի.**—Յիշատակ մետեղոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Կորյուն քին. Կարապետյանը:

Հավարտ և պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ «վաս յամօրէն ննջեցելոց»:

\* \* \*

**Հովհանի 24-ին, շաբաթ.**—Մրբոցն Թաղէոսի առաքելոյն մերոյ և Սահնդըստոյ կոտսին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում և պատարագ մատուցեց Տ. Գրիգոր ավ. քին. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 25-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Թափես արդ. Զիրեկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Հովհանի 31-ին, շաբաթ.**—Մրբոց որդուց և թոռանց Մրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Ս. Քրիստոնիսի, Վրբանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Պանիկի:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում և պատարագ մատուցեց Տ. Խորեն քին. Մարտիրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 1-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց ովհապերաբար Մայր Աթոռում գտնվող S. Արշավիր վրդ. Գաբրիջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 7-ին, շաբաթ.**—Եփեսոսի Ս. Ժողովոյն երկու հարիւր հայրապետացն:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում և պատարագ մատուցեց S. Մյուսոն քին. Աղամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 8-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Խաչատոր ավ. քին. Ֆրանկյանը:

\* \* \*

**Օգոստոսի 14-ին, շաբաթ.**—Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեպեան Արքոյն Գրիգորի Լուսատորչին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 15-ին, կիրակի.**—ՎԵՐՍՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՃԱԾ-ՆԻ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց գերշ. S. Ներսէս արքեպոս. Պողապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց (տես Էջ 20):

Հավարտ և պատարագի կատարվեց խաղողի ավանդական օրինություն:

\* \* \*

**Օգոստոսի 16-ին, երկուշաբթի.**—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Եղիշէ ավ. քին. Բաղրամյանը:

Հավարտ և պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»:

\* \* \*

**Օգոստոսի 21-ին, շաբաթ.**—Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 22-ին, կիրակի.**—Սյսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց ովատավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. S. Մեսրոպ արքեպոս. Աշճանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 24-ին երեքաբթի.**—Սրբոց Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց Ս. Աստուածածնի և Կանանցն Խոլաբերից:

Սյսօր Ս. Աստվածածին եկեղեցում և պատարագ մատուցեց S. Հառություն քին. Դարբինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 28-ին, շաբաթ.**—Սրբոց առաքելոցն Թովմայի, Յակովբայ և Շմատնի:


Սյսօր Ս. Գայանե եկեղեցում և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

\* \* \*

**Օգոստոսի 29-ին, կիրակի.**—Տօն գիտի գոտույ Սրբուհու Աստուածածնի:

Սյսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Տիրապ քին. Գլըզճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:





**ԳԵՐԵՌԱԾՆՈՒՀ Տ. ԾԱՀԿ ԱՐՔԵՊՈ. ԱՃԵՄԵՍՆԻ ՔԱՐՈՉԸ  
ՄԱՅՐ ՏԱՋՄՈՒԽՄ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԻՆ  
(18 Ցույիս 1993 թ.)**

Յանոն Հօր և Որդու և Հոգուց Սրբոյ, Ամեն:

«Համբարձի զաշս իմ ի լերինս, ուստի եկեցք իմ՝ օգնութիւն»:

«Բարձրացուի աչքերս լեռներուն, որիէ պիտի զայ իմ օգնութիւն»:  
Սաղմոսի այս բառերով կը սկսիմ խօսքս, որպեսուու Պայծառակերպութեան տօն է այսօր և սոյն խօսքերը կը նրանիրեան մեզ վեր մայելու լեռներու, որոնք խորհրդանիշ են բարձրութեան:

Պայծառակերպութեան տօնին առիթով, մեր Եկեղեցին կը լիշեցնէ իր նաւառացեալներուն Աւետարանին մէջ պատմուած դէպք մը, որ կապ ունի լերան բարձունքի մը նես: Յիսուս, առած իրեն նետ իր առաքեալներէն երեքը՝ Պետրոսը, Յակոբոսը և ասոր եղանաց Յովհաննէսը, բարձրացուց Թափոր լերան գագաթը, ինչպէս կ'ընէր յաճախ, երբ աղօթել ուզէր առանձինն: Սակայն, այս անգամ, երբ Ան Կ'աղօթէր, երեք աշակերտները տեսան, որ Յիսուսի հագուստը կը սպիտականար, լոյս կը տարածուէր անոր շորշ և այդ լոյսին մէջ կ'երևէին երկու մարգարեններ, մին՝ Մովսէս, և միսաը՝ Եղիա:

Պայծառակերպութեան տօնը նրանէր մըն է ուղղուած ամեն քրիստոնայի, որ, նման երեք առաքեալներուն, տեսնէ: Յիսուսի մէջ իր Աստուծը և, ունենալու համար նման տեսիլը, բարձրանալու սովորական կեանքի ուրուտն դէպքի բարձունքը հոգևոր կեանքին:

Բարձրանալ աստուծաքանակ լերան բարձունքին, կ'ենթադրէ կոնակ դարձնել երկրի փորձութիւններուն, գեղսութիւններուն, խարեւոյթիններուն, կը նշանակէ նոռանալ շարէն, կեղծիքն, սուտէն, ոճիքն և կեղտէն, բրուելու համար վերելքի ճամբան, դժուար ճանապարհ, որ կը տամի բարեգործութեան, երայրասիրութեան և սիրոյ բարձունքին: Այնտեղ, հաւատքի աչքերը կը տեսնեն Սատուծոյ Որդիին լոյս ներկայութիւններ, սիրոյ թագաւորութեան մէջ, սէր՝ դէպի Սաստուծ, արարիչը երկնի և երկրի, սէր՝ նմանին համենա, մարդկային համատարած սիրոյ երկնակամարդին տակ: Սիրոյ բարձունքին վրայ միայն կը յայունուի Սաստուծ և այդ բարձունքէն միայն կը տարածուի մեր դէպի մեր ընկերը՝ ամրող մարդկութիւնը:

Պայծառակերպութեան տօմը նրաէք մը կը կարդայ նաև մոքի մարդոց, որ բարձրանան մարդկային միտքի սահմանափակումներէն և կորութիմներէն դէպի լոյսը աստուածգիտութեան և ընկերային ունայն տեսութիւններու խարկամբ-ներուն մէջ: Նօթանասուն տարիներու մտածումի պարտադրուած բանաձները, որոնք կը փորձէին գիտութիւն բանին տակ ծածկել նոգին ապանող իրենց բարբառամբները և դասակարգային պայքար կոչուած տեսութեամբ բացատրել իրենց աստուածասպան աւերմերը, թող արմատախիլ բլլան մեր մտածումն և շտարտղնենք մեր մտածողութիւնը անաստուածութեան բարողներ կադարվ մեր երիտասարդութեան առաջ: Թող հասկնայ վերջապէս Հայ մուտրականը, թէ երբ մեռնի մարդուն մէջ բնակող Սատուածը, գազանն է, որ կը մնայ միայն: Անաստուածութեան բարյախօսները թող անդրադառնան վերջապէս, թէ սպաննելով Սատուծոյ երկիողը, կը մոցնեն նաև իմաստութիւնը: Խոկ երբ լոյ Սատուծոյ երկիողն սկիզբ առած իմաստութիւնը, կը մնայ միայն գայերու անտառ մը, որ զիրար կը լոշունն զայլացած մարդիկ:

Ժամանակը եկած է այլևս, որ Հայ միտքը բարձրանայ յախտենական ճշմարտութիւններուն: Հասաւ օրը, որ բարձրանամ աշքերը դէպի երկինք նիստումով և հասաւորի բարձրամբէն նային դէպի երկիր սբանչացումով, տեսմելու բնութեան մեծ նրաշքը, որ չի' բացատրովիր պատահականութիւններով և չի' հասկցուիր տեսութիւններով, որքան ըլլան անոնք գիտական: Երկինքն ու երկիրը նրաշք են և կը բացատրովին միայն մեծ խորհուրդով, որ կը կոչուի արարչագործութիւն: Ամէն բան ունեցած է սկիզբ և պիտի ունենայ վախճան: Այս է պարզ և լուսաւոր ճշմարտութիւնը, որ կը բարձրացնէ միտքը դէպի սատուածգիտութիւն: Ազարուան տօմը կը փորձէ տանիլ բանաւոր արարածներս ճշմարտութեան այն բարձրամբն, որ Կ'երևի Սատուածութեան լոյսը, որ կը բացատրէ ամէն բան:

Պայծառակերպութեան տօմը կը նրաիրէ հասաւացեալմերը, որ բարձրացնեն իրենց նոգին աշքերը դէպի մեր լուններուն վրայ նսկող մեր նին վանքերը և սրբավայրերը, նոն, որ ապրեցան, ճգնեցան և աղօթեցին մեր Եկեղեցւոյ Հայութերը, մեր մեծ վարդապետները, մեր նոգեշունչ բարողիչները, մեր նոգելոր առաջնորդները՝ մեր Սուրբերը, որոնք ուսուցին մեզ զրանն ճշմարտութեան:

Այս օրը նրաէք մը ունի բոլոր Հայ հաւատացեալմերուն, որ իրենց նոգիով ևս բարձրանան կեանքի չարիբներէն վեր, միտքի մոլորումներէն վեր, նոգեկան ախտերէն վեր, բարձումքի մը, որ անպայման պիտի տեսմեն լոյսը, այն լոյսը, որ կը ճառագայթէ հասաւորէն, երկիղածութենէն, այն լոյսը, որ կուգայ Սատուծէն դէպի մարդը, վերադառնալու համար դէպի Սատուած իրուն աղօթը, իրքն փառարանութիւն, իրքն սլ:՝

Այսօր Եկեղեցին Կ'ողողէ իր աշքերը Յիսուսի երկու կողմը երևող մարգարէներուն: Նախ մարգարէներուն մեծագոյննին՝ Մոլիսէմի, որ իր ժողովուրդը փրկեց չարին ստրկութենէն, տարա դէպի Սիմա լեռ, բարձրացա վեր, ընդունեն Սատուծոյ ձեռքերէն և վար իշեցուց տասնարաննայ պատուիրանները, այն ժողովուրդին, որ մոոցած իր Սատուածը, կուրքերու պաշտամութիւնը էր տարաւած: Նոյն մեծ մարգարէն էր, որ անապատի պաշխարանքն անցուց իր փրկած ժողովուրդը, տասնար համար զայն անտեսաց երկիրը՝ միակ Սատուծոյ պաշտամունքից:

Մեզի ցոյց տպառվ Մովսէս աստուածատես մարգարէն, մեր Եկեղեցին կ'ուղիք մեր աշքերը դէսի միւս այն բարձումքը, որ Աստուծոյ օրէնքն է, որպէսզի մեր կեանքը շաղախտի աստուածային սկզբունքներով, ապաշխարհներ, ազատութիւնը մնութերու կապամբներէն, մեռանանք սուս պաշտամունքներէն, չպաշտենք մենք զմեզ, չպաշտենք մարդուն ստեղծած արժեքները, այլ, բնդմակառակը, դառնանք դէսի Աստուած և կեանքի մեր ճանապարհը լուսատորենք Անոր պատուիրաններով, որոնք մարդոր ուկի՞ նըման իտայուն պիտի ընկն մեր մողին:

Խակ միւս մարգարէն՝ Եղիան, որուն կ'ուղղուիմ մեր աշքերը, յանդուգն, կրակի նման այրող այն մարգարէն է, որ դրկուեցաւ երկիր մաքրելու համար զայն սուս աստուածներու պաշտամունքն է: Սղիս մարգարէն նախանձախմեջիր այն պայքարողն էր, որ պատերազմ յայտարարեց Հրէաստանի թագաւորի օտար կնոշ միջոցաւ իր երկիրը ներխուժող օտար պաշտամունքներուն դէմ և յայտեց անոնց ուննագութիւններուն ազգային իր կրօնքին դէմ: Ան առաջնորդեց իր ժողովուրդը, որ իր մոդէն դուրս վտարէ օտարամուս կրօնիք բարողիչները և վերականգնէ իր մայքերու Աստուծոյն պաշտամունքը:

Սայօր չեմք կրնար լոկ դժբախտ այն իրականութեան առջև, որ մեր երկիրն մէջ տարածում կը գտնէ: Ազգակերպութեան տօնն թող ըլլայ նրաւէր մեր ժողովորդին՝ նաևատարին մնալու իր նաևատրին և իր Եկեղեցին: Խայեցէք լեռներու բարձունքներու մեր կանգուն և աներուած վանքերուն, որոնք սրբավայր են և գանձատուն մեր նայենքու նաևատրին: Ցիշեցէք մեր նաևատակները, որոնց արիմով սրբագործուած է մեր նայենին նողը: Խայեցէք մեր բլուրներուն և դաշտերուն ցանուած խաչքարերուն և ցիշեցէք մեր վարդապետները, նայրապետները և Սուրբերը, որոնք կառուցին մեզի նամար նրաշալի բարձունք մը, որ կը կոչուի Հայ Եկեղեցի, և այդ բարձունքին վրայ, լուսաւոր պատկերը գծեցին մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի, որպէսզի բոլոր անոնք, որոնք նօգիտ կը բարձրանան դէսի Տէրը, նրամարին մեղքն և անոր խարեւութեմն, ապաշխարութեամբ և զղումով բարձրանան միջնա նամանին իրենց Փրկիչը ու խօսին Անոր մետ իրենց նայենքու, իրենց Սուրբերու շարականներով և նոգեշունչ երգերով: Խակ եքք կը մօտենար Ս. Սեղանին, ընդունելու նամար սրբագործող նաց ու գիմին, ցիշեցէք, թէ դուք ոխառով կապուած էք, նաևատարմութեան ոխառով, ձեր Սուրբ Եկեղեցին: Մտիկ մի՛ ընէք օտար ձայներուն, որոնք կը փորձեն խախտեն ձեր նաևատարմութիւններ:

Պայծառակերպութեան նրաշրին պատկերը և մեր խորիշածույթիններ որ կը տամին մեզ լուրջ մոտանգութեան մը, որ մերն է այսօր մեր Հայրենիքին մէջ: Երկումն է ան օտար բարողիչներու, որոնք եկած են քրիստոնեայ մեր ժողովորդին նաևատրը խախտելու: Օտար ձայներ կը լսուին մեր նողին վրայ, որոնք մեր Եկեղեցիի զաւակներուն նաևատարմութիւնը կը փորձեն կապել օտար Եկեղեցիններու և կրօնքներու:

Մի՛ լսէք ամոնց, որոնք կը ձգտին գայքակեցնել ձեզ և բակել ձեր նաևատարմութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչի Գամէն, կառելու նամար զայն օտար նայրապետական Աթոռներու, որոնց մետ մեր պատմութիւնը շոմի ոչ մէկ կապ: Պայծառակերպութեան ախօրուած տօնն թող ըլլայ նրաւէր մեր ժողովորդին նաևատարին մնալու իր Եկեղեցին, նիմնուած իր Սուրբերու և նաևատակներու վկաբույժեան վրայ:

Ականց մի՛ տաք անոնց, որոնք կը խօսիմ ձեզի Աւետարանիմ անոնց և կը կարծեմ, թէ մեր ժողովուրդը պէտք ունի մտիկ բնելու իրենց Աւետարանին: Գոյութիւն չունի Եկեղեցի մը աւելի աւետարանական, քան Հայ Եկեղեցին: Անոնք իրական մովինները չե՛ն, որոնք պատրաստ են իրենց ամձը զոմեկու իրենց ոչխարմներու համար, ալ գողեր, որոնք յափշտակելու փորձեր Կ'ընեն Հայ Եկեղեցւոյ զաւակմերը և կտրել զամոնք իրենց ազգային աւանդութիւններէն: Անոնց մենք կ'ըսնեք, «Մի՛ խօսիք մեզի Աւետարանի մասին, ալ գացէ՛ք Մատենադարան և պիտի տեսմէք այսուեղ, թէ մեր բան հազար ձեռագիր մատենաններու քառորդը Աւետարաններն են, ըսդորինակուած երկխուածութեամբ և հաւատքով»: Աւետարանը եղած է մեր լոյսը, մեր մերժնուումը, մեր ուսուցուումը, երկնային պատգամը, նոգիի սմունուը, երդման գիրքը, գիրքերուն գիրքը: Դուրսերէն եկած նոր օքերու մարգարէններ թող չխօսին մեզ Աւետարանին անունով, մեր պաշտօած, մեր սիրած, մեր բարձրացուցած, մեր համրուրած Աւետարանին անունով:


Տակայիմ կամ այլ սուստ մարգարէններ մեր երկիրը մտած կողմնակի դուռերէ, որոնք կ'ոգեն խոռվել և մողորեցման ձեր հաւատքը: Հեռացուցէք զամոնք ձեր աշքերուն առջևէն և դարձաւ ոխտեցէ՛ք հաւատարիմ մնալ ձեր հաւատքին, ձեր աւանդութիւններուն, ձեր լուսու խորանին, ձեր Սուրբ Եկեղեցիին:

Այս է պատգամը, որ անգամ մը ևս կը ճաճանչէ մեր Թափոր լիսնէն, մեր սուրբ բարձունքէն, մեր Մայր՝ Ս. Էջմիածինէն: Հաւատարիմ եղէք ամոր, հաւատարիմ եղէք և պիտի մնար բարի և ազնի քրիստոնեաններ, ինչպէս ձեր հայրերն էին: Պիտի աղօթէք և ձեր աղօթքին մէջ պիտի գտնէք ձեր միխթարութիւնը: Պիտի հաւատար և ձեր հաւատքին մէջ պիտի գտնէք ձեր կեանքի ճշմարտութիւնը: Պիտի բարձրանար և նոգեկան ձեր բարձունքին մէջ պիտի գտնէք ձեր լոյսը:

Երբ Սաստած վերադարձն մեր ժողովուրդի մոլորեալ զաւակմերը մեր Եկեղեցիմ փարախն, այն ատեն պիտի տեսմէք, թէ մեզի համար ևս այլակերպեցաւ Տէրը և, ինչպէս իր աշակերտները, մեզ ևս լուսատքը իր բյուռով:

Այն ատեն բոլորս միասին պիտի բանք, փառք թեզ, Տէր, որ տուիր մեզի Ս. Գրիգոր Լուսատորիչը, որ դրկեցիր մեզի Ս. Թաղէոս և Ս. Բարյուղիմէոս Սուարենակները, որ քո ձեռքիդ ոսկի մուրճով իշար դէաի Այրարատեան մեր դաշտը և կառոցից մեր Տաճարը, որ տուիր մեզի սուրբ Հայրապետներ, իմաստուն Հայրապետներ, որոնք մինչև այսօր, ինչպէս անոնց շառադիղը՝ Տ. Վազգեն Սորբազան Կաթողիկոսը, պամեցին մեզ ճշմարտութեան ճամբուն մէջ:

Դուք ևս երէ զգաք Պայծառակերպութեան տօնին խորմուրդը, երկք առաքեալներուն նման, պիտի բաէք, «Բարոր է մեզ ասու լիմել», որովհետև մեզի համար ևս լոյս է Ցիսոս Քրիստոս, որուն փառք, յախտեանս, ամէն:



ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՎՈՒՄ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ  
ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ Ս. Ա.ՍՎԱԾԱԾՆԻ  
ՎԵՐՍՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ  
(15 օգոստոս 1993 թ.)

«Յամուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, ամէն»:

«Անթառամ ծաղիկ ամդատապարտ շառախի վերաբուժալ յարմատոյն յեսանայ, զքիզ Նսայիաս կամսար վերագոչեաց Կօթնարփեան շնորհաց նոգոյն ընդունարան գոյ»:

Սիրելի Բավառացյալներ,

Այս գեղեցկանիոս շարակամի տողերը նվիրված են սուրբ կույս Աստվածածնին: Հավանաբար սովոր տողերը գրաբար և բարդ ինքով լինելու պատճառով չկարողացաք բովանդակությունը ամրողությամբ ընթրչինել և հասկանալ:

Ամեա թարգմանությունը. «Անթառամ ծաղիկ, չդատապարտված շառախի Հեսանի արմատից վերաբուժած, քեզ Նսայի մարգարեն կամսար գուշակելով ասաց, որ դու և Ս. Հոգու յոթմարփան շնորհները ընդունող»:

Այսօր սուրբ կույս Աստվածածնի վերափոխման տոնն է, ամենակարևոր թերևս Աստվածածնի միջրված եկեղեցական տոններից: Այս տարի օգոստոսի 15-ը համդիպելով կիրակի օրվան, քրիստոնեական բոյոր Նկաղեցիները այն ստուժ են միասին: Սուրբ կույս վերափոխման այս տոնը մեր Նկաղեցու մինգ կարևոր տաղակարմերից շորորդն է իր շարաթապահով և իմնօրյա տոնակատարությամբ:

Այս տոնին աղօիկ Բավառացյալներս վերատիմ ամդուադառնում ենք Աստվածածնի կատարած դերին, օրինակ ենք վերցնում նրա կյանքը մնաց Բամար և Բիանում նրա փառավորք անձնափորտթյամբ: Այդ մկանի ունենալով է, որ շարականագիրը նրան նմանեցրել է «Ս. Հոգու յոթմարփան շնորհների ընդունարամի»:

Ո՞վ էր Սուրբ Կույսը: Նա դուստրն էր Հովակիմի և Ամայի: Վերջիններս ամլոթյան պատճառով զավակ չէին ունենում. նրանք ունետ կատարեցին և խստացան Աստծուն, որ զավակ ունենալու դեպքում՝ տղա կամ աղջիկ, նրան նվիրելու են տաճարին: Աստված լինց նրանց աղերը և հակա-

ուսկ Ամենայի առաջացած տարիքին, պարզեց Արանց անուշիկ մի դուստր, որի անունը դրեցին Մարիամ: Մեզ հայտնի չէ, թե Մարիամը նազարեթում ծնվեց, թե՞ Բեթղեհեմում: Այս մասին պատմական ոչ մեկ տեղեկություն չըկա: Կարևոր այն է տակայն, որ առ լոված էր Սատուծ պարզեց շնորհներով, և նրա կյանքը, մասնկության շրջանից սկսած, եղավ նվիրությի կյանքը. նվիրություն և ծառայություն Սատուծ տաճարին: Երբ նրա հասունացման տարիքը հասավ, առ տաճարից վերադարձավ տուժ, նշանից Հովսեփ անունով ատաղձագործ մի մարդու մետ, որ նույնպես Սատուծ շնորհով էր լոված:

Սատված տեսմենով Մարիամի սրբակյանց կյանքը, աշխարհի բոլոր կամանց միջից միայն Արանց ընտրեց, դառնալու խոսուացված Փրկչի մայրը, դառնալու «Աստվածամայր», «Քրիստոսակիր»: Մարիամը Ս. Հոգու այցելությամբ նոյնացավ և Բեթղեհեմում ծննդուն տվեց մարդկության Փրկչին՝ Հիսուսին:

Սուրբ Կույս Մարիամի ամձի մասին Նոր Կոտակարանում շատ քիչ տեղեկություն է տրված: Հավանաբար նա 14—18 տարեկան էր, երբ ծննդուն տվեց մամուկ Հիսուսին: Մարիամին և Հովսեփին Նոր Կոտակարանում համդիմասն ենք կրկին ամօամ, երբ Հիսուս 12 տարեկան հասակում ընծանվեց տաճարին: Այս առջևիկ Սպիտարանն ասում է, թե նրա ծննդենքը Երուսաղեմից դեպի Գալիլիա երկօրյա ճամապարհ էին կտրել: Նորանք երբ Հիսուսին շգտան ուխտավորների բազմության մեջ, եսու դարձան Երուսաղեմ և նրան գտան տաճարում, օրենքի վարդապետների մետ զրոյցելիս Հիսուսագայում Մարիամին նորից նամդիպուտ ենք Կամայի հարսանյաց նամդիմության ժամանակ, երբ առ խնդրում էր իր Որդուն սպառված գիմու փոխարհն գիմի մարել: Հիսուս նր վարդապետության սկզբին իր առաջին նրաշրջն էր գործում, Կամայի հարսանիքի ընթացքում կուժերի թակումկմերի մեջ պամված ջուրը ընտիր գիմու վերածելով:

Հիսուսի ծննդենքի մասին Ավետարանում նշված նաջորդ դեպքը նետկալին է. երբ Հիսուս քարոզությամբ գտնվում էր Կափառնաում, այսուղ նրան հայտնում են, որ իր ծննդենքը փնտում են իրեն:

Անոնթեն սուրբ Կույսին նամդիպուտ ենք Գողգոթայի բարձունքում, խաչախայտի մոտ, երբ Հիսուս, իրեն դատապարտյալ, խաչ էր բարձրացված և կիմաց ու մամվաճ տագմապենքի մեջ էր: Այդ պամին նա իր ակնարկը դեպի իր մայրը դարձնելով պատվիրեց իր սիրելի աշակերտ Հովհաննեսին և ասաց, «Անս քո մայրը»:

Հավանաբար սուրբ Աստվածածինը լուրակեր կանանցից մեկն էր, որ առաջիններից եղավ վկայելու իր Որդու նարությունը մեռելենքից:

Հիսուսի համբարձումից մետու, սուրբ Կույսը մնացել էր Երուսաղեմում, մյուս աշակերտների մետ, սպասելով իր Որդու խոստումին, ու շնորհենքի և երկմային առատ պարզեների բաշխման համար Սուրբ Հոգուն է առաքելու իր բոլոր աշակերտներին, մայսրան Արանց մեկնումը քարոզության:

Պեճտեկուստեկ օրը, Քրիստոսի նրաշախատ նարությունից միշտ միտուն օր մնատ: Սուրբ Հոգին նրեղեմ լեզուների կերպարաներով իշավ վերմատանք Բավարձած Ս. Աստվածածնի, առաքյալների և մյուս աշակերտների վրա: Նրանք զարմանաթրաց գորությամբ լոված՝ սկսեցին խոսել աշխարհի տարերեր լեզուներով: Երուսաղեմում գտնվող տեղացի և օտար մարդիկ, տեսմենով արդ, զարմացել էին, նրանք ենթադրում էին, որ Հիսուսի աշակերտները թերևս գիմու են: Վերմատան բնակիչները, միշտ է, նարեկ էին,

բայց ոչ թե սպորտական գիմիով, այլ՝ Սուրբ Հոգու շնորհմերի, երկնակար խնջութիւ նոգեր գիմիով։ Հիսուսի աշակերտմերը, թիւ ժամանակ անց, գընացին այն ժամանակվա ծանոթ աշխարհով մենք, բանին կենաց բարզությամբ ուսուցանելու, մկրտելու և դարձի բերելու ներանու աշխարհի։

Կամ մի ավանդություն, ըստ որի սուրբ Կույսը զնացել է Եփեսոս Հոգ-Բամբեն առաքյալի նետ։ Առավել ճշմարտացի ավանդությունն ասում է, որ նա մնացել է Երուսաղեմ Հիսուսի աշակերտմերի նետ և գրեթե ամեն օր և եկել է Արանց շրջապատում։ Արանք միասին են աղողել, նոգեր միխարդություն ստացել և օգտվել են հավաքական եղանակի բարիքմերից։

Եթեադրվում է, որ Սատվածամայրը իր աշքերը փակել է հասուն տարիքում։ Հիսուսի աշակերտմերը Տիրամոր մամվանից նետու Երուսաղեմում երա մարմինը տարան ու ամփոփեցին Գեթսեմանի պարտեզի լանջին զրուցվող Արանց ընտանեկան դամբարանում։ Ասկում է, թե Տիրամոր գերեզմանի մոտ երեք օր ո գիշեր լսվել են Արեշտակային երգասացության ձայներ։ Բարբողիմենու առաքյալը իր բարոցչական աշխատանքից թիւ ժամանակ անց երբ վերդառնում է Երուսաղեմ, լսելով Տիրամոր մամվան մասին, շատ է փափառում այցելել Արա դամբարանը՝ վերջին անգամ տեսնելու և իր որդիական սերն ու հարգանքը մատուցելու Արան։ Երբ գլորում են դամբարանի բարը, տեսնում են, որ Տիրամոր մարմինը չկա այլունել, և անմիջապես միշտում են իրենց Տիրոց խոստումը, թե Սատվածամայրը նոյն մարմնով փոխադրվելու է երկինք Աստուծու արքայության մեջ բնակվելու համար։ Անու այս հրաշք դեպքի միջատակն է, որ այսօր քրիստոնեական Եկեղեցիները տոնախմբում են։ Սուրբ Կույս Մարիամը գերեզմանից իր խնկ նողենեմ մարմնով փոխադրվել է դրախտ ներշտակելերի թևերով իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի փառքը փայելելու, աստվածային լուսեղեն նարկերի մեջ բնակվելու համար։

Միեղի հավատացյալ բույրեր և եղացրմեր, սուրբ Կույս Մարիամը ամեն բանից առաջ տիպար մի մայր է մեզ համար, նման բոյը մաքերին։ Այս խնկ պատճառով Տիրամոր վերափոխման տոնը տոնել է նաև բոյը կամանց, մեր սիրելի մայրերի և բույրերի, մեծ լինեն Արանք թե փոքր։ Այս սրտառուչ տոնի առթիվ մատյոսում ենք, որ Տիրամայր Ս. Աստվածածին շընորմերը, որպես ցոյ երկնքից իշենք մեր մայրերի վրա։ Ինչպիս սրբազն շարականացին է Անրիկացցնում, սուրբ Կույսը իրեն ողկոյզ ձմվեց, և այդ ողկոյզի ճմրումից ծննդեղ առաջ Սատվածորդին՝ Հիսուս Քրիստոս։ Եվ թիւ նետ մեր կատարելիք խաղողի օրինության արարողությունը խորհրդանշում է նաև Քրիստոսի գօտողությունը մարդկության մեղքերի բալության համար։ Հիսուս Սպիտարանում ասում է. «Ես եմ որթը կենդանի», և իմ Հայու ալգեգործն է։ Հիսուս իմբ է խաղողը, որը մեզ կցանք կապարծեի և զվարություն կպատճառի։ Հիսուս իմբը ևս իրեն ողկոյզ ճմվեց, մատունից, դատապարտվեց, ծեծվեց և խաչվեց։ Գողգոթայի բարձունքում նա ճմվեց և իր արյաման փրկեց մարդկային ցեղը մեղքի կապամբմերից։ Սատվածամայրն իրեն ողկոյզ ճմվում է, և Քրիստոս է ծնվում։ Քրիստոսի ճմրումից մարդկության մեղքերն են բավկում։ Որքան գեղեցիկ և որքան գրավիչ աստվածային զբանագործություն է աս։ Վերաստան մեջ Հիսուս կանխազգարով իր մահը՝ հացն ո գիմին մատուցեց իր աշակերտմերին և պատվիրեց, որ ուսեն և խմեն իր մարմնը ու արյունը՝ արժանանալու համար փրկության։


Միեղի հավատացյալներ, Տիրամոր կերպարի մեջ մենք տեսնում ենք Արանքածած սերն ու զրուղությունը, Արա նմիրումն ու պաշտամունքը, Արա

անսակարկ ծառայությունը Աստուծ սուրբ սեղանին: Երբ խօսում ենք Հիսուսի մասին, տեսնում ենք, թե նա այլրան մեծ սեր ունիր մարդկության համելակ, որ նոյնիսկ Եր առևնարանկ կյանքը զոմեց մարդկության փրկության համար: Նշանակում է, որ մեր կյանքում շատ կարևոր է ազնիվ ու վեճ նպատակի համար զոհողություն հանձն առնել: Որևէ զոհողություն, որ նպատակ չտնի, անարժեք է: Նպատակն է, որ զոհողությունը վեմացնում ու սրբագրում է: Այս իմաստով որքան ճշմարիտ և այժմեական է նմչում Վարդանաց նշանարանը. «Մաս իմացեալ անմանություն է»:

Այսօր Ս. Աստվածածնի, մեր Տիրոց՝ Հիսուս Քրիստոսի զոհագործությունը խոսացվում է խաղողի ճմլումի խորհրդով: Մեր ժողովուրդը ևս գիտակցված զոհողություն է համձն առել Հարատառի սամանմերից մինչև Արցախ նոյն բաջությամբ և նավատով, իմշալու Սարդարապատում և Վարդանաց օրերին: Եվ այս գիտակցված զոհողությունը անպայման կիմուտավորվի և կպտղարեի: Մեր ժողովուրդը մի օր որ իր ազնիվ ու վսեմ նպատակներին կմասնի և խաղաղ ու երջանիկ կյանքով կապրի բաղարակիրթ այլ ժողովուրդների շարքում: Մաղթում եմ, որ դուք լինեք բազ, նավատով ին, անաղարտ պամենք մեր պատմությունը, մշակոյթն ու ավանդությունները՝ ամուր կանգնած մեր նավատի վեմի վրա, որ Մայր Աթոռ Ս. Եջմիածինն է այսօր և նախիտյան:

Ս. Աստվածածնի տոնի առթիվ շնորհավորում եմ ձեզ բոլորին, սիրելի կանաքը և տղամարդիկը: Լավ իմացեք մարդու արծերը, խզուր թշնամություն, կագ ու կոկիվ մի ստեղծեք միխանց մեկանամբ, եղեք սիրով և նամքերությամբ լիցում, միշտ նարգելով և օգնելով իրար: Եվ իրկանուր Հայրը, իրը պատասխան, մեզ ուրախություն կպարգևի և կօրմնի մեր ընտանեկան բոյմերը, դարձնելով դրանք դրախտ երկրի վրա:

Մեր Տիրոց Քրիստոսի անունով լինեք օրմնալ այժմ և նավիտրան, ամեն:



## ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

### ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

1993 թվականի հուլիսի 5-ից Թբիլիսիի «Մետեխի» հյուրանոցում տեղի ունեցավ հարցազրոյց կրոնի ուսուցման և վերածննդի վրացական միջազգային ֆոնդի ներկայացմամբ:

Ներածական խոսքը հանդես եկավ պարոն Բարդավելիձեն՝ հավաքածներին տեղեկացնելով ֆոնդի նպատակներին: «Նաև և առաջ, — ասաց նա, — սա մարդու իրավունքների և ազատության պաշտպանության, Վրաստանի տարածքում ապրող այլ ժողովուրդների, ինչպես նաև այլ պետությունների կրոնների վերաբերյալ տեղեկությունների փոխանակության համար է, Վրաստանի տարածքից դուրս գտնվող վրացական հուշարձանների ուսուցման, Վրաստանից դուրս ապրող վրացիների հետ կապի պահպանման, իր նշանակությամբ եզակի կրոնների պատմության թանգարանների ստեղծման համար է»:

Այնուհետև խոսք առավ պարոն Պատառ Շեպուրիշվիլին՝ Ֆոնդի նախագահը: Իր ընդարձակ նելցողում նա հաղորդեց, որ չնայած Ֆոնդի նորաստեղծությանը, այն արդեն ունի ընդարձակ գրադարան և ֆիլմադարան: Ստեղծված է տեղեկատվական-վերլուծական կենտրոն, որն ուսումնասիրում է կրոնական իրավիճակը Վրաստանի շրջաններում: Կենտրոնի աշխատանքներին մասնակցում են բարձրորակ իրավաբաններ, տնտեսագետներ, ազգագրագետներ: Ֆոնդի նախագահն ընդգծեց, որ դա ոչ թե տնտեսական, այլ ավելի շուրջ բաղաքական կազմակերպություն է, որը ժամանակի ընթացքում կվերածվի պետական մարմնի՝ արտասահմանյան նույնատիպ հայարարությունների նմանությամբ: Փաստորեն Ֆոնդը նախատեսում է տարբեր կրոնական դավանանքների պաշտպանվածություն, յուրաքանչյուր քաղաքցու խղճի ազատություն, ինչպես նաև հասարակական կարծիքի ձևավորում, տարբեր կրոնների ներդաշնակ գոյատևման պայմանների ստեղծման նպատակ: Այդ ամենը պետք է կանխի միջոհականական պառակտումները և լուծի ներդավանական խնդիրները: Նշվեց նաև, որ Վրաստանի միավորում չի կարող ընթանալ «Կեցցե քրիստոնեական դեմոկրատական Վրաստանը» նշանաբանվ, որովհետև վրացիների մեծ մասը ինչպես Վըրաստանի տարածքում, այնպէս էլ նրա տարածքից դուրս դավանում է Խւլամը: Բոլոր մահմեդական վրացիների միավորման նպատակով պետք է Թբիլիսիում բացվի իսլամական կենտրոն և դպրոց, որտեղ կպատրաստվեն հոգևոր անձինք, որոնց համար Վրաստանի խնդիրները կդառնան առաջ-

Անհրաժեշտ է վերականգնել և պահպանել հնագույն սրբությունները՝ անկախ նրանց ծագումից: Մոտ ժամանակներս կվերականգնվի Վրաստաճի Կաթողիկ Եկեղեցու եպիսկոպոսական Աթոռը, և Ֆոնդը դրա համար քիչ ճիգեր չի գործադրում: Մեծ գոհունակությամբ հախագահը նշեց, որ Վրաստաճի հայոց թեմի առաջնորդի ճիգերի շնորհիվ և Աստուծո ողորմածությամբ բոլորովին չեն վատացել հարաբերությունները հայկական և վրացական դպրանանքների միջև: Նույնը կարելի է ասել նաև մահմեդական, հրեական համայնքների հետ վրացական դպրանանքի փոխհարաբերության մասին: Տարբեր դպրանանքների միջև ծագող խնդիրների ճիշտ ժամանակին բացահայտումը և ուսումնասիրումը հնարավորություն կտա խուսափելու տիան միջադեպերից:

Ֆոնդի աշխատանքային պլանը վերանայվել է Նորին Սրբություն Համայն Վրաստաճի Պատրիարք-Կաթողիկոս Խիս Բ-ի կողմից, ինչպես նաև ներկայացվել Վրաստաճի կառավարությանը:

Հարցազրուցին ներկա էին Վրաստաճի Պատրիարքարանի, Կաթողիկ Եկեղեցու, Թքիլիսիի հրեական համայնքի, Վրաստաճի մահմեդական սունիների և շիաների ներկայացուցիչները:

Հայ Եկեղեցու կողմից Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Վիրահայոց թեմն էր ներկայացնում տեղի հոգևոր առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը: Նրան ուղեկցում էին Տ. Հովհաննես ավագ քահանա Դանիելյանը և թեմական խորհրդի քարտուղար Վիլի Գրիգորյանը:





## ԿՈՒՍԱԿՐԾՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՆ ՆԵՐՄ

Իրաքանակ թեմը երիտասարդ էք զարգացած հոգեւորական ոյժերով օժտվող ճանապարհին աշակերտներ կը դրկուին Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարնը, հոգեւոր ուսանողներու դասընթացքներ կը կազմակերպուին Առաջնորդարանի հսկողութեան ներքոյ Պաղտաս, ինչպէս նաև երիտասարդ հոգեւորականներ կը դրկուին արտասահմանի համալսարաններ բարձրագոյն մասնագիտական ուսում սուանալու:

Թեմին հոգեւոր ուսանողներէն մէկն էր բարեշնորհ Հրաշ Սարկաւագ Յակոբեան որ ժամանակ մը առաջ աւարտած էր Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարնի շրջանը:

Թեմին բարեխնամ առաջնորդի միջնորդագրութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ս. Ամենայն Հայոց Կայողիկոսը բարձր հասանութիւնը տուարեշնորհ Հրաշ Սարկաւագ Յակոբեանը կուսակրօն քահանայ ձեռնադրելու:

17 Փետրուար 1993ի երեկոյեան տեղի ունեցաւ «կրչումն քահանայութեան» կարգ՝ խարտակիակութեամբն արժանաշնորհ Տ. Վարդան Քին. Պուտորեանի, որը վկայեց նորընծափի հոգեւոր և իմացական պատրաստակամութեան ու արժանիքներու մասին:

Քահանայական կոչումի արարողութեան եւքը, նորընծան հրապարական արտասանեց Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ «Հայոց խոստվանութիւն»՝ ըստ Ս. Գրիգոր Տարեացիի սահմանած բանաձեւի:

Յաջորդ օրը, մինօշաբթի 18 Փետրուար, Սրբոց Վարդանանց մէծ տօնին առթի հայ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը փութացած էր Պաղտասի Սբ. Գրիգոր Լուսատորիչ առաջնորդանիստ Եկեղեցին մասնակցելու ազգային այս մէծ տօնի հոգեւուարար և հանդիսաւոր Ս. պատրարքին և արեղալական օծման: Օրուան պատրարքին էր թեմին բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ Եպս. Աստուրեանը: Առաջնորդարանի հրամերով արարողութեան ներկայ գտնուեցան Պապական դեսպանն ու քոյլ Եկեղեցիներու հոգեւոր պետերը և այլ Եկեղեցականներ:

Պատարագը կանգ առա «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով» աղօթքը: Նորընծան ծննադիր քայլերով բարձրացաւ Ս. Սեղան: Քիշ լևոյ հնչեց «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգեւորոգ շարականը: Եկեղեցին նուիրելոյն կը կոչէ ձեռնադրութեան:

Ողջոյնի պահէն առաջ պատարագի Սրբազն հայրը սրբալու միունվ օծեց ճակատն ու ձեռքը նորմնային զայն վերանուանելով Տ. Տաթէ արելայ: Քարոզի ընթացքին Սրբազնը տուաւ սա բացարութիւնը նոր անուան առնչութեամբ:

«Այս օրերու Հայաստան աշխարհ կը ներխուժեն բազում քարոզիչներ քրիստոնէական տարբեր դաւանանքներու պատկանող, ինչպէս ևս առ բազում տեսակի աղանդաւորներ: Մարտրուսորեամբ կ'ուզեմ գմել մեր ժողովորդի խիղճը, դարերու հոլովոյթով վասն Յիսուսի և հաւատոյ համատակեալ ժողովորդ մը դարձեաւ «քրիստոնէացնելու» հիմանդրագին եւ մոլեստանի մոլեգնութեամբ: Քրիստոնէական ոգեկանութենէ զորկ այս գործեակերպը նոր չէ մեր ժողովորդին համար, անցեալի մէջ ալ նմանօրինակ փորձեր եղած են: Սակայն մեր ժողովորդի և մեր Եկեղեցւոյ պատմութեան մէջ գտնուեցան քաջարի Եկեղեցականներ, որոնք բանի և գործով պայքարեցան ընդունել այդ միարարական շարժումներուն... իր օրին մշտապէս պատնեշի վրայ մնաց մեր ամենամեծ, ամենահմտու հոգեւորականներէն Գրիգոր Տաթեացին: Մեր Եկեղեցւոյ այս վերջին Սուրբը ծնած է 1346 թուին և վախճանած 1410 թ.: Տաթեացին՝ բազմակողմանի տաղանդաւոր որպէս գիտնական, քարոզիչ, Ակադիչ, գեղագրիչ, հմուտ լեզուաբան ու Ասուածաբան պայքար մղեց ի խնդիր Հայաստաննայց Եկեղեցւոյ ուղղափառութեան ու ընդհանրական հանգամանքին: Ուստի մեծ վանրին ու վանականին ի լիշտավակն մենք երբեմնի Հրաշ Սարկաւագը կոչեցինք Տաթեւ անոնկ որպէսզի նորօծ Հայր Սուրբը հախանձախնդրութեամբ ծառայէ մեր Մարենի Եկեղեցւոյ, ջանադիր անոր պայծառացման ու վերելքին»:

Վեղարի օրինութեան և տուչութեան հանդիսութիւնը կատարուեցաւ ուրբաթ, 19 Փետրուարին Ս. պատարագի ընթացքին: Աստրտիմ՝ յանուն-Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին Սուաշնորդ Սրբազնը, Տ. Տաթեւ արելային պաշտօնապէս ընդունեցան Մայր Սորոն Ս. Էջմիածնի Միաբանութեան շարքերէն ներ: Ֆեռ պատարագի առաջնորդաբանի դակիին մէջ, խարտակիլակ Տէր Հայրը ներկայացուց նորօծ հոգեշնորհ Հայր Սուրբը՝ Առաջնորդ Սրբազն Հօր: Ապա Նորընձայ Հայր Սուրբը արտասանեց իր խօսքը՝ շնորհակալութիւն յայտնելով Սուաշնորդ Սրբազն հօր և Ազգային Կենդրումական Վարչութեան ու խաստացաւ հարազատ գլաւակը մնալ Հայաստաննայց Սուարեկան Եկեղեցւոյ և ըլլալ հաւատարիմ մէկ անդամը Ա. Էջմիածնի Լուսաւորչանին միաբանութեան: Սուաշնորդ Սրբազնը՝ նորաօծ հայր սորբն և ներկայ բարեսէր հայրենակիցներուն բաշխեց իր օրինութիւնը: Տեղի ունեցաւ շնորհաւորութիւն:

Հայր Սուրբը քառասունքի կանոնական շրջանը պիտի անցնէ Ա. Կարապէս վանքի և Ազգային ծերանոցի շրջափակէն ներալ

## ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԱԹԵՒ ԱԲԵՂԱՅ ՑԱԿՈԲԵՍՆ

Ծնած է 1965 թ. Յովիս 7-ին, Իրաքի Մուսալ քաղաքի մեջ: 1973 թ. ընտանիքով բնակութիւն հաստատած է Պաղտատի Հայոց «Թարգմանչաց» դպրոցը: 1979 թ. միջնակարգ ուսումը վերջացնելէ ետք, նոյն թուականին ընդունուած է Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը: Զեռամբ Տ. Յովիսի Արքայիսկոպոսի, 1984 Դեկտեմբերին, սուացած է ուրար կրելու իրաւունք, իսկ 1986 թ. Փետրուար 14-ին Մայր տաճարի մեջ, դարձեալ Տ. Յովիսի Արք.-ի կողմէ ճեռնադրուած է ասրկաւագ: 1986 թուի Յովիսին յաշողութեամբ ասարտուած է հոգեւոր ճեմարանը, իսկ 1988 թ. Մարտի 10-ին նոյն յարկի Անրքոյ պաշտպանած «Եվկերիս Կեսարացին Հայ Մատենագրութեան մեջ» թէմայով պատրաստած ասարտաճար՝ արժանանալով գերազանց գնահատանքի:

Ապա 1989—1990ին՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նույնաւորութեամբ ֆրանսերէն լեզուի դասընթացքներու հետեւած է Ժընեվ Շուզ դպրոցը և Ժընեվ Համալսարանը: Այս միջոցին ծառայած է Ժընեվ Մուրք Յակոպ Եկեղեցւոյ մեջ որպէս Սարկաւագ և ատենադպիր Զուիցերիոյ Հայ Եկեղեցւոյ խորհուրդի վարչույթեան: Այս ընթացքին կազմակերպած է Զուիցերահայ Միութեան Երիտասարդաց մասնաճիշդ ինչպէս նաև Կիրակ-Աօրեայ դպրոցի մեջ՝ դասաւանդած է կրօնի դասեր: Իսկ 1990 թ. էն—1992ին ծառայած է որպէս Սարկաւագ Հոլանտաց Ս. Հոգու Եկեղեցւոյ մեջ և կազմակերպած է մանուկներու դպրաց դասը և եղած է խորհրդատու անդամ՝ Հոլանտայի Ազգային Կեդրոնական վարչույթեան:

Իրաք վերադարձած է 13 Փետրուար 1992ին, սկսած է յաճախել առաջնորդարան և մսնակցի Եկեղեցական արարողութեանց:

Իրաքահայ թեմի Բարեհնամ Առաջնորդի միջնորդագրութեամբ, Ն. Ս. Օ. Ս. Ս. Վազգէն Ս. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հաւանութեամբ բարեշնորհ Հրաչ Սարկաւագ կուսակրօն քահանայ ճեռնադրուած է 18 Փետրուար 1993 ճեռամբ իրաքահայ թեմի Բարեհնամ Առաջնորդ Տէր Աւագ Սպա. Ասատուրեամի, վերանուանելով Տ. Տաթեւ աբեղայ:





ՄԻ ՊԱՀ ԶԵՐՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ





## «ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԵՏՍ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆՑ»\* (իմաստուն ասույթներ քարոզների համար)

261. Եղին գքեզ վերակացո՞ւ մի բարձրամտեր, այլ լեր իբրև զմի ի նոցանէ, զի ոչ ես դու լաւ քան զնոսա:

262. Քանի զօրեղագոյն է մարմինն այնքան ուժգնակի պատերազմի ընդ հոգոյն վասն այնորիկ յիմար է, որ այնքան զօրացուցանէ զմարմինն մինչ զի խաղահարեսցէ զիոգին:

263. Զգեցեալքն զծիրանիս ոչ կարեն զգենոլ զՔրիստոս:

264. Համարիս առնել շնորհ, զոր ինչ տաս ընկերին եթէ կամիս և եթէ ոչ՝ պարտական ես, զի զայն որ իրն է խնդրէ Սստուած:

265. Կրօնատոք պարտ են դադարիլ ի հապարտ շինուածոց, քանզի արդէն իսկ մեռեալ են յաշխարիի, վասն որոյ հարկ է նոցս առաւել գերեզման քան զապարան:

266. Միշտ սնուցանելի է ամօթխածութիւն, զի որքան մնասցէ հոգին է լոյս բարութեան, քանզի նայ է սանձ, որով ողղէ ոք ի ճանապարհ երանոցթեան:

267. Ամենայն բարձրամիտ որդի է այնմ բարձրամտին որ ասաց. Եղից զաքրոն իմ յամպս և եղեց նման բարձրելոյն:

268. Մեծ գործ ունիս առաջի քո, ով մարդ. մահն հալածէ և կեանքն փախչի, հնարեայ ինչ քեզ աստ, զի մի անկանիցիս յորոգայք:

269. Մեղքն է վիրատորիչ աստուածային մեծութեան և վնասակար եկեղեցոյ և տգեղացուցիչ աստուածային պատկերին:

270. Սստուած յօժարագոյն է առ ի յողորմին մեղատրաց քան առ ի պատժին:

271. Ուր ատելութիւն է ոչ աղօթք, ոչ պահք և ոչ ողորմութիւն առնէ օգուտ ինչ:

272. Ոչ կարէ սիրել զՍստուած, որ զպատկեր նորա ատիցէ, այսինքն՝ զընկերն:

\* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1990 թ. նո. Բ—Թ-ից, 1991 թ. նո. Ա. Ա.—Բ—Գ-ից, Թ—Ժ-ից և 1993 թ. նո. Բ. Դ—Ե—Զ-ից:

261. Քեզ վերակացու կարգեցին՝ մի մեծամտացիր, այլ եղիր իրքի ըլրանցից (ենթականերից) մեկը, քանզի դու ավելի լավը չես, քան նրանք:

262. Որքան զորեղագույն է մարմինը. այնքան ուժգին կերպով է պատերազմում հոգու դեմ, այդ պատճառով հիմար է (նա), ով այնքան է զորացնում մարմինը, մինչև որ ընկնի հոգին:

263. Ծիրանի հագածները չեն կարող զգեստավորվել Քրիստոսով:

264. Ինչ որ տավիս ես ընկերոջի, համարում ես շնորհ արած լինել. եթե կամեանում ես կամ ոչ՝ պարտավորված ես, որովհետև Աստված պահանջում է այն, ինչ որ իրենն է:

265. Կրթավորները պարտավոր են ձերբազատվել հպարտ շինվածներից, քանզի արդեն իսկ մեռած են աշխարհի համար, այդ պատճառով նրանց առավել հարկավոր է գերեզմանը, քան ապարանքը:

266. Ամողխածությունը միշտ սնուցածելի է, որքան որ մնա հոգում, բարոյթան հույս է, քանզի նա է սանձը, որով ուղղում է որևէ մեկին դեպի երանության ճանապարհը:

267. Ամեն մեծամիտ որդին է այն մեծամտի, որ ասաց. «Դմ աթոռը դնեմ ամպերի վրա, և լինեմ նման բարձրալին»:

268. Ո՞վ մարդ, քո առջև մեծ գործ ունես, մասն հալածում է, իսկ կյանքը փախչում, քեզ համար այստեղ հնար գտիր, որպեսզի որոգայի մեջ շընկնես:

269. Մեղքը վիրավորանք է աստվածային մեծության հանդես, վնասակար՝ եկեղեցու (համար) և տօնացնողն է աստվածային պատկերի:

270. Աստված ավելի հոժար է մեղավորներին ողորմելու, քան պատճելու:

271. Որտեղ ատելություն կա, ո՞չ ալորքը, ո՞չ պահքը և ո՞չ ողորմությունը օգնել չեն կարող:

272. Զի կարող սիրել Աստծուն (նա), ով ասում է նրա պատկերը, պայմանը՝ ընկերոջ:

273. Ընկերոջ մասին գաղտնի խունելը քսություն է, իսկ ատելությունից առաջացած խորք՝ բարձրասանք:

274. Ո՞վ մարդ, Աստված պատրաստ է քեզ իմաստություն տալ, բայց քո հպարտության պատճառով տեղ չունես այն լինութելու:

275. Ուրեմն կերակրվում են այլոց վարքի բարձրասեղով, հագենում են նրանց մսով, (իսկ) ով հայում է իրեն, որպում է իր համար և ոչ որիշների:

276. Խորեն և ուսալ այրը հանդիմանվելիս չի տրունջա:

277. Հոգելոր մարտի մեջ նախ պետք է մարտնչել ընդդեմ որկրասուլության, քանզի եթե նախ պետք չընկրկի մյուս մոլորությունների դեմ, պայքարելն ընդունան է:

278. Արեղան ինքն իրեն չի պատկանում, այլ՝ Աստծուն և վանամորը, այդ պատճառով արեղալին չի կադելի հոգալ իր անձի մասին, այլ՝ ապալին Աստծուն և վանահորը:

279. Արեղան, որ ցանկանում է առատապես կերակոր և հանդերձ ունենալ, անարդում է ցանկալի եղիկիք, որ նրան որպես վարձատրություն տրվելու է վարքի, ժողովական շնորհիվ:

280. Տրտնջացող արեղան արեղա երևում է, բայց արեղա չէ, թեպետ և (արեղայի) տեսք ունի:

281. Զարմանալի չէ, երբ (որևէ մեկը) տեսնի անաստաներին խոսն-

273. Քսութիմ է գաղտ խօսել գընկերք և կառ բամբասանը է խօսը յասաց եկեալ յատեղոյթենէ:

274. Պատրաստէ Աստուած տալ քեզ խմասութիմ, ո՞վ մարդ, այլ ոչ ունիս տեղի, որ ընդունիցիս զնա վասն հապարտոյթեան ք:

275. Որ կերակրին բամբասանօք վարոց այլոց յագին մսով նոցին, որ նայ զինքը՝ ողբայ զինքն և ոչ զայլ:

276. Այր խոհեմ և վարժ ոչ տրտնջեսց յանդիմանեալ:

277. Ի Բոգեոր մարտին նախ մարտնչելի է ընդդէմ որկրամոլոյթեան, քանզի եթէ ոչ նախ նայ յետ ընկրկեսցի, ընդունայն է աշխատել ընդդէմ այլ մոլոյթեանց:

278. Արեղայն ոչ է իր, այլ՝ Աստուծոյ և հօր վաճացն, վասն այնորիկ ոչ է պարս արեղային նոգալ զանձն իր, այլ՝ ընկենով յԱստուած և ի հայոն:

279. Արեղայ, որ կամի առատապէս ունի կերակրոր և հանդերձ, անարգէ գերիկիրն ցանկալի, որ տուեալ լինէր նմա վարձ վասն խոշորոյթեան վարոցն:

280. Տրտնջող արեղայն երկի արեղայ գոլ, այլ ոչ է արեղայ թէայտ և զնէն ունի:

281. Ով ոչ զարմանալի, որ տեսանիցէ զանասուն խօսեցեալ, քանզի արեղայն է գրաստ Աստուծոյ, ըստ այնմ. Որպէս զանասուն համարեցայ<sup>10</sup>:

282. Նայ միայն տրտնջայ ընդդէմ ներողոյթեան Աստուծոյ, որ անգիտակ է օգորոյթեան նորա:

283. Ծանիր, ով քրիստոնեա, թէ որպէս պարտիս սիրել գՔրիստոս, վասն զի ես մարմին իր ի կերակրոր և զարինն ըմպելի և զնոգին ի զին և զվտակ կորին ի լուացումն:

284. Աւք աշխարհիս արգելու ի մէնց զւերն Աստուծոյ:

285. Ամաչեաց՝ փրկեսցի, քանզի զամօթն պահէ զմարդն ի սահելոյ, և թէ սահեալ է և ունի զամօթ, արժանասցի թողոյթեան:

286. Աստուած ամենայն որեք և ոչ որեք ոչ ի տեղոց իմիք և ոչ ի բացեա ի տեղոչէ իմիք ի վերայ նորայ և ի ներքոյ սորա և ի մէջ սորա և շորջանակի:

287. Էակը ամենայն լերիս բաժանին. է, որ շարժէ և իմբն անշարժ մնայ՝ որպէս Աստուած, են ոմանք, որ շարժին և շարժէ զայլս որպէս նոգի մարդոյն, զի իմբն մշտաշարժ է, և զգայարանս շարժէ ի գործ, և են ոմանք, որ շարժին միայն ի շարժողաց և ոչ շարժեն զայլս որպէս քար, փայտ, երկար և այլ:

288. Պարտ է ծածկել զանհասութիմ մերոյս հաւատոյ զանհասաւոցն, զի մի ծաղր լիցի և ի պարզանտացն, զի մի ի պատճառս մոլոյթեան առնցուն:

289. Զոր օրինակ նոր զերկաթն ցուրտ և սեաւ միատրոյթեամբն իւրով նման ինքեան առնէ, սոյնպէս և Աստուած ի ձեռն հաւատոյն զմիատրեալն ընդ նմա իր նմանս առնէ:

290. Որք զմիանականն օրինադրոյթենէն քուն հարկանեն, պիտոյ է նոցայ բոլորովիմք մեռանի յաշխարհի ի խաչ հանելով զմարմինս իրեանց կարեօր և ցանկոյթեամք և կենդանի մնալով միայն Աստուծոյ:

291. Աստուած Բանն, որ շարշարեցան մարմնով և մարդկային էր

լիս, քանզի աբեղան Աստուծո գրաստն է, ըստ այն խոսքի, (որ) «(քո առնչն) անսուն համարվեցի»:

282. Աստծոն ներդ լինելու դեմ նաև է տրտնչում, ով անգիտակ է նրա զորովրանք:

283. Ովկ քրիստոնյա, իմացիր, թե ինչպես ես պարտավոր սիրել Քրիստոսին, վասնիք իր մարտինը տվեց որպես կերակոր և արյունը՝ ըմպելիք, նոգին՝ որպես փրկագին, իսկ կողի վտակը՝ լվացում:

284. Աշխարհի սերը հեռացնում է մեզանից Աստուծո սերը:

285. Ամաչեց՝ (ուրեմն) կփրկվի, քանզի ամոթք մարդուն պահում է սայթաքելուց, իսկ եթե սայթաքել է և ամաչում է՝ թողովքան կարժանաւա:

286. Աստված ամեն տեղ է և ոչ մի տեղ, ոչ ինչ-որ մի տեղում է և ոչ բացակա ինչ-որ տեղից, նրա վրա է և սրա տակ, սրա մեջ և շուրջ բոլորը:

287. Բոլոր էակները երեքի են բաժանվում, (գոյություն ունի) որ շարժում է, բայց ինքը անշարժ է մնում ինչպես Աստված, կան ոմանք, որ շարժվում են և շարժում որիշներին, ինչպես մարդու հոգին, որովհետև ինքը մըշտաշարժ է և զգայարաններին գործողության մեջ է դնում, և կան ոմանք, որ շարժվում են միայն շարժողներից և որիշներին չեն շարժում, ինչպիս քարը, փայտը, երկարը և այլն:

288. Պետք է ծածկել մեր հավատի անհասանելիությունը անհավատներից, որպեսզի պարզամիտների համար ևս ծաղը չլինի, որպեսզի մոլորդյան առիթ շղարձնեն:

289. Ինչպես որ հուրը սառը և սև երկարն իր հետ միավորությամբ իր հման է դարձնում, սույնպես և Աստված հավատի միջոցով իր հետ միավորածներին իր հման է դարձնում:

290. Ուշեր միայնակեցության օրենսդրության են անցնում, պարտավոր են ամբողջությամբ մեռնել աշխարհի համար, խաչ հանելով իրենց մարտինը (իր) կարիքներով և ցանկությամբ, բայց կենդանի մնալով Աստծոն (համար):

291. Բանն Աստված, որ շարշարվեց մարմնով՝ միաժամանակ և մարդկային է, և՝ Աստվածային նրա բոլոր գործողությունները, որ տնօրենության մեջ են:

292. Միտքը երբ անգիտության և մոլորդյան մեջ է շրջում, ինչ-որ կերպ ծերանում է և նրա զորությունը՝ թառամում, բայց երբ իմանալի լուսը ճառագայթում է նրա մեջ, նորօգվում է և իր գործեղը կարող է իրականացնել:

293. Չի կարելի սարկավագներին, եկեղեցու սպասավորներին և ժողովրդին՝ քահանային հանդիմանել, եթե նույնիսկ (նա) մեղանչում է:

294. Որտեղ հավատ չկա, այնտեղ հոգի չկա, իսկ որտեղ հոգի չկա, այնտեղ կենդանություն գոյություն չունի, ապա որենին բոլոր անհավատները մեռած են և նրանց մեջ հոգի չկա:

295. Ինչպես որ երկիրը արեգակից ջերմացած պտղաբերում է, այնպես և մարդը՝ ջերմացած Աստծոն սրտում առաքինության և արդարության պտույ է ծնում:

296. Սրդարները ոչ միայն հանդերձայլ կյանքում, այլև ալստեղ բարի նրեշտակներին ընկերակից և հաղորդակից են լինում: Իսկ մեղավորները ալստեղ և հանդերձալում պիտի տանջիկն և դևերի հետ դատապարտվեն այն կրթերի պատճառով, որոնց սիրեցին:

միանգամայն և աստուածային նորա ներգործութիւն ամենայն որ ի տնօրէնոլեանն:

292. Միտք, յորժամ յանգիտութեամ և մոլորութեամ շրջի, կերպի ինչ ծերանայ և զօրութիւն նորա թառամի, իսկ յորժամ լոյսն իմանայի ճառագայթէ ի ճա, նորոգի և զգործն իր կարէ վճարել:

293. Ոչ է պարտ սարկաւագաց և սպասաւորաց եկեղեցւոյ և ժողովը դուր յանդիմանել զքահանայ թէ և մեղանչից ևս:

294. Ուր ոչ է հաւատ, անդ ոչ է հոգի, և ուր ոչ է հոգի, անդ ոչ են կենդանութիւն, ապա որեմն՝ ամենայն ամհաւատք մեռեալ են և ոչ գոյ ի նոսա հոգի:

295. Զոր օրինակ երկիր շերմացեալ յարեգակն պտուղս ծնանի, այնպէս և մարդ, շերմացեալ ի սիրտն Սատուծոյ, ծնանի զպտող առարինութեան և արդարութեան:

296. Սրդարքն ոչ միայն ի հանդերձելումն, այլև աստ բարի հրեշտակաց ընկերակիցք և հաղորդակիցք լինին: Խոկ մեղաւորքն աստ և ի հանդերձելումն տանջեսցին և ընդ դիացն դաստապարտեսցին վասն կրիցն, զոր սիրեցին:

297. Յորժամ ամբարիշու մարդիկը զսուրբս հայածեն զինքեանս վաստեն և ոչ զսուրբս, քանզի զինքեանս ի բաց որոշեն ի նոցանէ և ի սրբազն հաղորդութենէ նոցա, և այսու յայտ է, թէ անիրաւքն ոչ են արժանի կցորդութեան սրբոց:

298. Ուր երկիր Տեառն է, անդ է և պատուիրանաց պահպանութիւն:

299. Ազձնիշխան մարդ կշտամբանօք ոչ երբէք նուաճի, այլ մանաւանդ հակասակի ևս, այլ պարտ է սիրով և խոնարհութեամբ նուաճեցուցանել զնայ:

300. Մի յանկարդ իբրև զմեթանոս կոծ և աշխատանս դնիցէք ի վերայ մեռելոյն, զի որք միանգամ յուսոյ յարութեան ակն ունին և միանգամ գալլատեանն Քրիստոսի, չէ պարտ լալ զնոսա:

301. Մահն է որոշումն հոգոյ ի մարմնոյն, կենաց լուծումն, հոգոյ ի բաց վճարումն, անյասն գնացք, կատարած կենաց ամենայն կենցաղոյն, քուն անզգայուն, քուն մշտնշենաւոր, մոռացումն ամենայն զգալեաց:

302. Եթէ ծուլանամք ի տունն Սատուծոյ մոտանել և աղօթել, զիա՞րդ կարեմք զերես նորա տեսանել:

303. Տիրապէս և կատարեալ իմաստութիւն մտացն է հայել յԱստուած և յիմացականս և առ ի նոյնն խոկալով զտենչումն բրբոքել և այսու հայեցորդութեամբ զբնաս, որ ի զգայութեանցու է հեշտութիւն, ատել:

304. Ոչ է պարտ աշակերտին առ խրատս վարդապետին պարզամտութեամբ կեալ, այլ հարցաքննող լինել, տալ պատասխանի և զհարցուածոց լուծմուն ընդունել:

305. Զի թէ զամենայն առարինութիւնս լիմիցի մարդ և, ընդ հրեշտակս հասարաւալ կենդանոյն ի յերկինս վերանայցէ՛ ի հաղորդութենէ մարմնոյ և արեանն Տեառն, ի բաց կացցէ ճշմարտութեամք ընդ Սատանայի ի Եերքին սանդարամնտականաց, հալածիչ դիաց, բնկումն Բեկիարայ, կործանիչ հանսարկութիւն և ամենայն արկածից նորա, լուծիչ և ամօթն կորստեան:

306. Աղօթք է երկիր սանդարամնտականաց, հալածիչ դիաց, բնկումն Բեկիարայ, կործանիչ հանսարկութիւն և ամենայն արկածից նորա, լուծիչ և ամօթն կորստեան:

307. Գիտէ Սատանայ եթէ մեծ շնորհ առնու մարդ ի ժամ աղօթիցն,

297. Եթք ամբարիշտ մարդիկ հալածում են սրբերին, իրենց են վճառում և ոչ սրբերին, քանզի իրենց բացորոշում են նրանցից և նրանց սրբազն հաղորդակցությունից, և սրանով հայտնի է, որ անիրավները արժանի չեն սրբերի կցորդությամբ:

298. Որտեղ Տիրոջ երկյուղն է, այնտեղ է պատվիրանների պահպանությունը:

299. Անձնիշխան (հանդուգն) մարդը կշտամբանքով երեք չի նվաճի, այլ առավել կիակառակիլի, բայց պետք է սիրով խոնարհությամբ նվաճել նրան:

300. Հեթանունների նման անկարգ մի կոճեք և հոգորժուն մի թափեք մեռնի վրա, որովհետև ովքեր մենք անգամ հարության հոլովին և Քրիստոսի գալատյանն են ակնկալում, նրանց համար լաց լինել հարկավոր չեն:

301. Մահը հոգու բաժանումն է մարմնից, կյանքի ավերումը, հոգու հեռացումը, անմայս ընթացքը, ամրոջությամբ վախճանը աշխարհիկ կյանքի, անզգայուն քուն է, քուն մշտնշննավոր, մոռացումը բոլոր գգացմունքների:

302. Եթև ծովանում ենք Աստուծո Տուն մտնել և աղոթել, ինչպես կարող ենք Նրա դեմքը տեսնել:

303. Մորթի տիրական և կատարյալ իմաստությունն է հպվել Աստծուն և իմացականներին և նույնի մասին խոկալով ձգտում բորբոքել և այդ հայեցողությամբ ատել այն ամենը, որ մեշտությունն է զգայարանների մեջ:

304. Աշակերտը չպետք է ուսուցի խրատները պարզամտությամբ ընդունի, այլ հարցաքննող լինի՝ պատասխան տա և հարցերի պատասխաններն ստանա:

305. Որովհետև եթե մարդ բոլոր առաքինությունները լիակատար կերպով ունենա, հրեշտակներին հավասարված կենդանի ժամանակ երկինք կիմբանա՝ Տիրոջ մարմնի և արյան հաղորդությունով ճշմարտությամբ կրենանա սատանացից և կկործանի սանդարամնուականներին:

306. Աղոթքը սանդարամնուականների երկյուղն է, դևերի հավածողը, Բեկիարի բեկումը, քանարկուի և նրա բոլոր դավերի կործանողը, կորստան լոճիքը և ամոթը:

307. Սատանան գիտի, թե մարդ աղոթքի ժամին մեծ շնորհ է ստանում, այդ պատճառով աղոթքի ժամին շանում է ցնորել մարդկանց միտքը, որ պեսզի գրկի շնորհներից, որ մարդ ստանում է մարուր մտքով աղոթելիս:

308. Եթև փախչենք այս աշխարհի մեղությունների (մասին) խրատից և սպաշիսարությունը հանձն չառնենք, հանձերձյալ կյանքում պիտի կորչներ, որովհետև հանդերձյալում մեղությունն առանց հոլովի է:

309. Ինչպես ուսուցի խրատը բացում է ուսանողի միտքը, սույնուես Աստուծո (պատճառած) մեղությունը բացում է մարդկանց միտքը:

310. Բոլոր հավատացյալները, ովքեր ի սկզբանե հաճելի եղան Աստուծուն, քազում մեղություններով են անցել, ինչպես Արքահամը և այլք:

311. Որին որ սատանան ջերմեռանի է տեսնում, հորդորում է չափից վեր մի քան անել, որպեսզի բարձրավանակ տեղից գահավեծ անի նրան:

312. Որքան մեծագույն խովքով, ցանկասեր մտքերով մեղվում ենք, պանքան չերմագոյն աղոթքով պարտավոր ենք ընդոհմանալ, քանզի խորհրդներն արժատախիլ անողներ չենք, այլ՝ ըմբշամարտողներ:

313. Հաճախակի աղոթքը հանգցնում է մոլորությունների բոցը:

314. Քանի ստանան այլ գործի [մասին] չի հոգում այնպես խափա-

վասն այնորիկ շանայ ցնորել զմիտս մարդկան ի ժամ աղօթիցն, զի գըրկեցէ ի շնորհացն, որը առնցոք է մարդ ի մարդու մտօք աղօթելոյն:

308. Թէ փախնուցոք ի խրատու նեղութեանց աշխարհի այսորիկ և ոչ յանձն առնուցոք զապաշխարթիւն, կորնչիք ի հանդերձեալն, զի նեղութիւն հանդերձելոյն առանց ամենայն յուսոք է:

309. Որպէս խրատ ուսուցին բանայ զմիտս ուսանողին, սոյնաւու նեղութիւն Սաստուծոյ բանայ զմիտս մարդկան:

310. Ամենայն հաւատացեալք, որք ի սկզբանէ հանոյ եղեն Սաստուծոյ, անպին ընդ բազում նեղութիւնն որպէս զԱպրահամ և այլքն:

311. Զիրո ջերմեռանդ տեսանէ Սատանայ, յորդոք առնել ինչ ի վեր բան զշափն, զի ի բարձրաւանդակ տեղոքչ գահակէ արացդ զնայ:

312. Որքան ծայրագոյն ամբոխմամբ գիշական խորհրդով նեղիմք, այն ջերմագոյն աղօթիք ընդդիմանալ պարտիմք, բանզի ոչ եմք արմատիք խորհրդոցն, այլ՝ ըմբշամարտը:

313. Յաճախ աղօթքն շիշուցանէ զրոց մողութեանց:

314. Զի ոչ հոգայ զայլ գործ այնաւու խափանել Սատանայ որպէս զջերմեռանդ աղօթելն, և որքան հանդիսագոյն է աղօթքն, ալեքան մեծագոյն է պատերազմն:

315. Որպէս թերդն յամենայն կողմանց պաշարեալ կարօտանայ միշտ պահպանութեան, նոյնպէս և մեք, որ եմք պաշարեալ ի դիաց, ի մարմնոյ և յաշխարհէ, պարտիմք միշտ հնիկ և աղօթել:

316. Սի համեմատեք զքեզ մեծագունիցն և մի փոքրագունիցն և ոչ մի ունք, այլ՝ համարեա զքեզ անարգ բան զամենեսեան:

317. Դամիճ մեղատրաց է յախտենական հորճ և որդն անքուն:

318. Սղոթքն կալդացուցանէ զԱստուծ, և արտասուրն բռնադատէ մոռանալ զամօրենութիւնն մեք:

319. Ամենայն որ մարդաւէք է աստուծաւէք՝ և ամենայն որ աստուծաւէք և մարդաւէք է:

320. Ոչ գիտեմք եթէ: Քրիստոս սիրով ստուգեալ լինի և ոչ արծաթով, սիրոյն լիցի պտուղ պատարագդ, ապա թէ ոչ ոչ ինչ օգտիս արծաթով:

321. Դուն ողորմութեան Սաստուծոյ խոստվանօլաց և ապաշխարուց համապաց բաց է:

322. Մարդիկը որք հոգոյ աչօք յանվախճան կեանսն նայեցան, մինչդեռ ի մարմնի էին, փրկութեան հոգոյն շանացին:

323. Առանց վարժման հժուարա կարեն մարդիկը բարուց ողորմութիւն ստանալ:

324. Չարչարեցաւ անշարչարելին շարչարելեան, և մեռաւ անմահն մահկանացուան, այսինքն՝ անշարչար Բանն Աստուծ մեռաւ իրով մարմնովն, վասն այսորիկ համարձակէ ասել՝ Աստուծ խաչեցաւ:

325. Զի մարմնն և արին Տեառն արդարն ստոյգ ի բարութիւն մեղաց է, սակայն ապաշխարելոցն և հեռացելոյն ի մեղաց, այլ ոչ միշտ խապեցելոցն ի մեղս:

326. Ծշմարիտ իմաստունն այն է, որ ոչ միայն բանիք ուսուցանէ, այլև գործովք վարդապետեցէ:

327. Լրբութիւն, յանդկնութիւն, աներկիւդութիւնն մայր է ամենայն չարեաց:

328. Որք զիրոր աստուծային սիրոյն յանձինս իրեանց վառեալ բրբռքեցին, աստի հնչառութեանս բարեալ մնալ ասացին:

նել, ինչպես ջերմեռան աղոթելը, և որքան հանդիսավոր է աղոթքը, այնպան մեծագույն՝ պատերազմը:

315. Խնչակն բոլոր կողմերից պաշարված բերդը պահպանության կարիք ունի, նոյնպես և մենք, որ պաշարված ենք դմերից, մարմնից և աշխարհի կողմից, պարտավոր ենք միշտ հսկել և աղոթել:

316. Քեզ մի համեմատիր ավագագոյնների, փոքրագոյնների կամ որևէ մեկի հետ՝ այլ քեզ բոլորից անարդ համարիր:

317. Մեղավորների դաշիճը հավիտենական հոգին է և անքուն որթը:

318. Աղոթքը կալիեցնում է Աստծոն, իսկ արտասուրը ստիպում է մոռանալ մեր անօրենությունները:

319. Ամեն ոք, որ մարդասեր է, (որիմն) աստվածասեր է, և ամեն ոք, որ աստվածասեր է, հան մարդասեր է:

320. Չգիտենք, թե Քրիստոսին սիրով ենք շահում և ոչ թե արծաթով, թող պատարագը սիրո պատող լինի, ապա թե ոչ՝ արծաթով ոչինչ չես օգտվի:

321. Սաստոծն ողորմության դուռը խոսովվանողների և ապաշխարողների (առջև) հանապազ բաց է:

322. Մարդիկ, ովքեր դեռևս մարմնի մեջ հոգու աշքերով անվախճան կյանքին նայեցին՝ հոգու փրկության ձգուեցին:

323. Առանց վարժության մարդիկ դժվարությամբ են կարող բարու ուղղություն ստանալ:

324. Անշարժաբեկին շարշարեց շարշարելիով, և անմահը մեռավ մահիանցուով, այսինքն անշարժար Բանն Աստված մեռավ իր մարմնով, այս պատճառով համարձակվում է ասել. Աստված խաչվեց:

325. Որպեսուն Տիրոց մարմիճը և արյունը արդար և ստուգ բավություն է մեղքերի, սակայն ապաշխարողների և մեղքից հեռացողի, բայց ոչ մեղքի մեջ միշտ թափալվողների համար:

326. Ծամարիս իմաստունը նա է, որ ոչ միայն խոսքով է ուսուցանում, այլև գործով է վարդապետում:

327. Լրությունը, հանդգնությունը, աներկուղությունը մայրն է ամենայն շարյաց:

328. Ովքեր աստվածային սիրո հուրը իրենց անձերում վառելով բորբեցին՝ այնտեղի թեշտություններին մնաք բարով ասացին:

329. Ով անսահման խիստ է և բարկացող, չի կարող որևէ մեկին աշխարհ և կանքի ընկեր ունենալ:

330. Հանդիմանելը ամենքինը չէ, այլ միայն նրանց, ովքեր իշխում են:

331. Ով իմաստուն է, միշտ կյանքի ծանրության հոգսւ ունի, մահվան որոգայթը, գենենի սպանակիքը և այս հոգսի տակ հալում է՝ հանապազ տանջվում: Իսկ ով մտածող չէ, չի հավատում աներևություններին և երևելինով զրադված չարիք է խորհում և գործում:

332. Բոլոր հոգնոր և մարմնավոր առաքինությունների լրումն է Աստծոն միշտ աչքի առաջ ունենալը:

333. Կյանքում բարձալի է ոչ այլ ինչը, բայց միայն մարդու սեփական ժառանգությունը, որի մեջ ծնված և սնված են լինում, ինչպես մոր ստիճանքները և նրա գութը, սույնպես և ժառանգորդի մտքում քաղցր է թվում իր ժառանգությունը:

334. Որտեղ առատանում է աստվածգիտության շնորհը, այնտեղ բազմանում է սատանայի մարտը:

329. Որ խիստ է բարեկացող է անսահման ոչ կարէ զոք ունել աշակերտ և կենակից:

320. Յանդիմանելն ոչ է ամենեցուն, այլ առ միայն, որոց իշխելն է:

331. Որ խմաստոնն է, միշտ հոգս ունի զկենցաղու ծանրութիւն, զմանուան որոգայթն, զգենենին սպառնալիքն, և յայս հոգս հալէ, տաճչէ հանապազ: Դոկ որ ոչ է մտարո, ոչ հաւատայ աներկութիցն, և յերենիս զբանեալ՝ խորին զշարի և գործէ:

332. Ամենայն հոգնոր և մարմնաւոր առաքինութեան լրումն է զԱստուած առաջի աշաց տեսանել միշտ:

333. Է բաղդափի ի կենացս ոչ այլ ինչ բացց միայն սեպիական ժառանգութիւն առն, յորում ծնեալ և սնեալ լինի, զի որպէս զատին մօր և զգութ հօր, սոյնպէս և բաղցը թուեցեալ լինի ի միտս ժառանգորդին զժառանգութիւն իր:

334. Ուր առատանայ զշնորին գիտութեան Աստուծոյ, անդր բազմանայ և մարտն Սատանայի:

335. Այս է թշնամոյն<sup>11</sup> մարտ. Կամ յուսահատութեամբ անհասատութիւն ձգէ: Կամ յուսով անհատութիւն մեղաց և ի հեշտութիւն:

336. Ոչ է բաւական տեսական առաքինութիւն առ ի կատարումն, թէ ոչ ունիցի զգործնական ընթացակից:

337. Տերն և Արարիշն մեր տնօրինեաց մեզ, զի Աստուած գոլով եղու մարդ, և մեծն՝ վասն մեր նուսատ, և բագաւորն՝ վասն մեր աղքատ, և Տերն տիեզերաց՝ ձեռք վասն մեր կալեալ, և բարձրութեանց լեռանց տիրողն՝ վասն մեր պրեկեալ և ձաղեալ, և ծօվու տիրողն՝ վասն մեր կաթի շրոյ կարուեալ, և ցամաքի ստեղծողն՝ վասն մեր ի սոյն ամփոփեալ:

338. Արդարն ոչ անուամբ ազգի պարծի, այլ գեղեցիկ վարուք անձին իրոյ փառատրի:

339. Ոչ է պարս մինչև ցմահ զմեզ յաղթօն համարել կամ զԱստանայ՝ յաղթեալ, զի ոչ է միանգամ մարտն, որ վճարի, այլ առ յապայ է թշնամին և բազմապատիկ մերենայսն:

340. Յիշելոյ են երախտիքն Աստուծոյ ի փառս նորին և պակասութիւնս մեր առ ի խոնարհեցուցանելոյ զմեզ:

341. Եթէ բնակեալ իցես յաշխարին և միտս բարիս ունիցիս ոչ վճասեցէ զքեզ աշխարին, իսկ թէ բնակիցես յանապատի և միտս բարիս ոչ ունիցիս չօգտեսցուցանէ զքեզ անապատ:

342. Զնուերս աշխարհականաց որպէս ընկալցուք մեք՝ քահանացք միայնկանայն ասէ, թէ բիրաւոր և հազարաւոր տայցեն Աստուծոյ ի ձեռն մեր պտուղս, ոչ բնաւ մեզ զպարտական արարին, այլ ինքեանք պարտական գոլով Աստուծոյ նմին հասուցին զսկան և առ նա ակնկալցին փոխարինին և ոչ ի ձեռն մեր:

343. Թէ հանես ի սրտէ զնախանա եղբօրն քո, ընկալցի Աստուած զպարտարագն քո, ապա թէ ոչ՝ զգեսցէս զնա ի դուրս քո, և այնպիսի պատարագն ոչ է հանջ Աստուծոյ:

344. Գործք աղտեղիք խոնի մուաց շարշարեն զմարդ և տրտմութիւն առնեն սրտից մարդկան:

345. Վշտանան հոգիք նախավաղճանելոցն վասն յետնորդացն անարժանից որպէս և մեծատոնն վասն եղբարցն:

<sup>11</sup> Զիռ. թշնամամոյն:

335. Այս է թշնամու մարտը, կամ հուսահատությամբ անհավատության է ձգում, կամ հույսով՝ մեղքերի անհստության և հեշտության:

336. Սուպրինության տեսական կատարումը բավական չէ, եթե գործականը ընթացակից չունենա:

337. Տերը և Արարիչը տնօրինեց մեզ, որովհետև Աստված լինելով՝ մարդ եղավ, և մեծը՝ մեզ համար ևլաստ, թագավորը՝ մեզ համար աղքատ, տիեզերքի տերը՝ մեզ համար կալանչած, լուսների բարձրություններից տիյուղը՝ մեզ համար պրկված և ծաղրված, ծովին տիրողը՝ մեզ համար ջրի կաթիլի կարուտած, և ցամաքի ատեղծողը՝ մեզ համար սույնի մեջ ամփոփված:

338. Արդարը դասակարգի անվամբ չի պարծենում, այլ իր անձի գեղեցիկ վարքով է փառավորվում:

339. Պետք չէ մինչև մահը մեզ հաղթող համարել կամ սատանային հաղթված, բանզի մարտը մեկ անգամ չէ, որ վարձասրբի, այլ թշնամին հավիտյան է և բազմապատիկ են (նոր) մերժապուրությունները:

340. Հիշելու արժանի են Աստուծն երախտիքները ճրա փառքի համար և մեր պակասավորությունը՝ մեզ խոնարհեցնելու նպատակով:

341. Եթե բնակված լինեն աշխարհում և բարի միտք ունենաս, աշխարհը թեզ չի վնասի, իսկ եթե բնակվեն անապատում և բարի միտք չունենաս, անապատը թեզ օգտակար չի լինի:

342. Ասում է. «Աշխարհականների նվերները ինչպես պետք է ընկալենք մենք՝ համայն բահանաներս, եթե մեր միջոցով բյուրավոր և հազարավոր պտուղներ տրվեն Աստծոն, մեզ երեք սրբական չեն դարձնում, այլ իրենք պարտական լինելով Աստծոն հատուցեցին քիչը և նրանից թող ակնկալեն փոխարենը և ոչ թե մեր միջոցով:»

343. Եթե սրտից հանեն քո եղրոր նկատմամբ (եղած) նախանձը, Աստված կը նորուի քո պատարագը, ապա թե այն քեզնից դուրս չգեն, ալդպիսի պատարագը հանելի չի լինի Աստծոն:

344. Խղճմտանքի աղտեղի գործերը չարշարում են մարդուն և տրտմություն են պատճառում մարդկանց սրտերին:

345. Նախավախճանվողների հոգիները վշտանում են անարժան հետորների պատճառով, ինչպես մեծասունը՝ եղբայրների պատճառով:

346. Ով Կորի վարձկանի վարձը, թող արյունահանների հետ դասակարգվի:

347. Ժամանակ կա, որ բարին հաղթում է ճշմարտությանը, բանզի լրտեսք ե՞րբ կարող է ճշմարիտն ատել և վնաս պատճառել իր առաքողներին:

348. Աստված ամենայն բարյաց շտեմարան է, բայց տպին է ժամանակին և կարիքի պահին, որպեսզի (բարիքը) դդորագյուտ լինելով շարհամարիվ:

349. Ամեն ինչ, որ Աստուծ դեմ է՝ չար է:

350. Ամեն ոք, որ ըստ Աստուծ կամքի գործ է կատարում, որտեղ և կատարի, այնտեղ ճրան բացված կլինի երկների դուր:

351. Եթե հարստությունը մեղք է, Աստծոց ստավել ով է հարուսուերկինը ու երկիրը ճրան է, բայց բոլորը տրված է մարդկանց բարիքների համար, եթե աղքատները ողորմելու արժանի են, երանելի են հարուսուերը, որոնք կերակրում են ճրանց, եթե այս բանում մարդ կրծվի, կնմանվի Աստծոն, որպեսուն բազում մեծասուններ Աստծոն և հրեշտակներին ինեն հարկի տակ հյուրասիրությամբ ընդունեցին:

346. Որ հատանէ զվարձ վարձկանի ընդ արինահանսն համարեսի:

347. Է ժամանակ, զի բարին յաղը ճշմարտոթեան. զի լրտեսն ե՞րբ կարէ զճմարիտն ասել և վնաս առնել առարողացն իլրոց:

348. Ծտեմարան է Աստուած ամենայն բարեաց, բայց տայ ի ժամանակի և ի կարօտոթեան, զի մի դիրագիտն արհամարիտն իլրոց:

349. Ամենայն ինչ, որ ընդդէմ Աստուծոյ է չար է:

350. Ամենայն որ որ ըստ կամացն Աստուծոյ գործ գործէ, յորում տեղոց և գործէ. անդ բացեալ լինի նմա դուռն երկնից:

351. Զի թէ մեծութիւն մեղք է, քան զԱստուած ո՞վ է մեծատուն. երկինք և երկիր նորա են, բայց զամենայն ի պէտու մարդկան տուեալ են, թէ՝ ողորմելի են աղքատք, երանելի են մեծատունք, որք կերակրեն զնոսա. եթէ յայս կրթի որ, նմանէ Աստուծոյ, զի բազում մեծատունք զԱստուած և զիրեշտակու ընկալան ի տուն իրեանց հիրասիրութեամք:

352. Տէր և իշխան է մարդ ի վերայ գործոց իլրոց, զի գոր և կամի և խոկայ զնոյնն և գործով կատարէ, եթէ բարի, և եթէ չար:

353. Արդ, ի գլաւորելոյ զհաւատս զբանն մարմին խոստվանեմք և զմարմնոյ բնութիւն ընդ ամին անձառ միացեալ ի կուսական յարգանդին և ի կրելն զկիրս մարդոյ ոչ առանձինն ի Բամէն, այլ ճարտարապետս Բամին վարեցաւ յամենեսեան մարդկութիւն Աստուած գոլով համանգամայն և մարդ:

354. Արդարախոս լինելն մարդոյ յերկոց կողմանց օգուտ է մին՝ զի ինքն Աստուծոյ նման լինի, և միւս՝ ևս զընկերին թերահաւատութիւն բառնայ ի մտաց նորա:

355. Չիք բարի, զոր չիցէ արարեալ Տեառն և չիք չար, զոր չիցէ ի նմա մասն Սատանայի:

356. Որպէս օգուտ են դեղ բժշկացն նոյնպէս և՝ միսիթարութիւն բարեկաման:

357. Եթէ զբազումս խրատես ով մարդ և ընդէ՞ր զքեզ ոչ խրատես:

358. Ամենայն մարդոյ ոչ միայն տարի և ամիս այլն օր և ժամք թուով սահմանեալ են, զի ոմանք ի խոր հիւանդութենէն և ի նաւարեկութենէն և ի վախից մղեալ ապրեցան, և կէտք առողջ գոլով յանկարծակի մահացան, և այս ոչ պատահարք, այլ ըստ սահմանի Արարշին:

359. Բարուոք է մարդկան համեստ լեզոփ և օգտակարք են սանձք բերանոյ և այխտանացու են ճաշակք բանից:

360. Պայծառ և պարկեշտ է ամուսնութիւն, բայց առանել պայծառ է ստացուածն կուսութեան:

(Ծարունակելի)

352. Մարդն իր գործերի վրա տեր և իշխան է, որովհետև ինչ որ կամենում է, նույնը խորհում և գործով կատարում է՝ թե՛ բարին և թե՛ չարը:

353. Արդ, որպես հավատքի սկիզբ Բանը մարմին ենք խոստովանում և մարմնի բնությունը նրա հետ անճառքաբար միացած կուսական արգանդում, և մարդկային կրթեր կրելու ժամանակ [մարմինը] բաժանված չէ Բանից, այլ ճարտարապետ Բանի միջոցով ամեն ինչի մեջ գործեց մարդկությունը՝ համանգամայն Աստված և մարդ լինելով:

354. Մարդու համար արդարախոս լինելը երկու կողմից օգուտ է, նայս որովհետև ինքն Աստծոն է նմանվում և մրտւ՝ ընկերոջ մտքից վերացնում է թերահավատությունը:

355. Բարի չկա, որ Տիրոջ կողմից ատեղծված չլինի, և չկա չար, որ նրանում սատանայից մաս չլինի:

356. Ինչպես օգտակար են բժիշկների դեղերը, այնպես և՝ բարեկամների միխարությունը:


357. Ո՛վ մարդ, եթե շատերին խրատում ես, ինչու քեզ չես խրատում:

358. Յուրաքանչյուր մարդու ոչ միայն տարին և ամիսը, այլև օրը և ժամերը թվով սահմանված են, քանզի ումանք խոր հիվանդությունից, նավարեկությունից և վախից մղվելով ապրեցին, կես առողջ լինելով համկարծակի մահացան, բայց սրանք պատահարներ չեն, այլ [լինում են] ըստ Արարչի սահմանածի:

359. Մարդկանց (համար) բարվոր է համեստ լեզուն և օգտակար նաև բերանի սանձերը, նաև պիտանացու է խոսքերի գեղեցկությունը:

360. Ամուսնությունը պայծառ և պարկեցած է, բայց առավել պայծառ է կուսության ժառանգությունը:

(Ծարունակելի)



## Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

### ԵՐԶԸԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ\*

#### 8. ԵՐԻՃԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Սեպուհ լեռան լաճջերին Հ. Ռոկյանը հիշում է չորս վաճք՝ Սուրբ Աստվածածին անունով: Դրանցից մեկը կոչում է Ս. Աստվածածնի կամ Զարխափան, երկրորդը՝ Երիգայի Սուրբ Աստվածածնի վաճք, երրորդը՝ Խնդրակատար Սուրբ Աստվածածնի, վերջինը՝ Ծողակաթ Սուրբ Աստվածածնի վաճք:

Նա սրանցից Զարխափանն ու Խնդրակատարը միայն հիշում-անցնում է՝ առանց մանրամասնորյուններ տալու, մի քիչ ավելի լայն ծանոթացնում է Երիգայի Սուրբ Աստվածածինը, իսկ համեմատաբար ընդարձակ խոսում Ծողակաթի մասին:

Սյուրմենյանը և Ամատյանը խոսում են միայն Ծողակաթի մասին, իսկ Տ. Պալյանը հիշում է Ծողակաթը և Զարխափանը:

Քրիստոնեության արշավոյսին Եկեղեց գալառում Աստվածածնի անունվ մի քանի վաճքեր են եղել: Այդ քանը գուցե պետք է բացատրել Անահիտ աստվածունու կանացի կերպարի ընկալման, մայր աստվածության գաղափարի հետ:

Քրիստոնեություն տարածողները ամեն կերպ աշխատել են Թեթանոսական իգական աստվածությունները փոխարինել Աստվածածնի կերպարով:

Ամենայն տարօրինակ պիտի չթվա, որ Անահիտ աստվածունու կանացիության հրապուրներով շնչող մի գալառում երան հաջորդողը դարձալ պիտի լիներ Բիմենականում կիմ՝ այս անգամ՝ Տիրամայրը:

Սակայն դարերի ընթացքում վերինիշալ չորս Աստվածածիններից երկուսի տիրակալությունը աստիճանաբար նվազել է: Նրանց անունը կրող վաճքերը կամ ավելիվել ու քանդվել են բնական աղետների ու բարբարության հարձակումների հետևանքով, կամ էլ մոտակա մյուս վաճքերը մրցկանով դրանց հետո՝ պարզապես թուլացրել են և մատնել անգործության: Հնա-

\* Տարբանական «Էջմիածին» ամսագրի 1992 թվականի Թ—Ժ—ԺԱ միացյալ, ԺԲ և 1993 թվականի Ա—Բ—Գ միացյալ համարներից:

բավոր է նաև, որ վերոհիշյալ Զարխափիան և Խնդրակառար վաճքերն են ունեցել են մշակութային գործունեություն, բայց փաստեր չեն հասկել մեզ:

Սպագե թե այնպես մենք հնարավորություն ունենք խոսելու Երիզայի Սուրբ Աստվածածնի և Շողակաթ Սուրբ Աստվածածնի վաճքերի մասին միայն:

Երիզայի Սուրբ Աստվածածնի վաճքի կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ: Ենթադրվում է, թե նրա հնությունը նոյնական համարում է մինչև մերանուական դարերը: Հաս մի Հայամավորքի, վաճքը կառուցվել է «գտեղի կողոց Անահիտա»<sup>52</sup>, թե կառուցողն էլ եղել է հենց Գր. Լուսավորիչը:

Հնարավոր է, որ այս հնավաստիացումը ստեղծված լինի պարզապես վաճքը հին ներկայացնելու միտումով, բայց որ եղել է Երգնակայի վաղ շրջանի վաճքերից, կասկածից վեր է:

Թե քրիստոնեության արշալուսից մինչև 12-րդ դարը ինչ գործունեություն է ունեցել այդ վաճքը, հայտնի չէ: Հնագոյն վկայությունը վերաբերում է 1272 թվականին, որ ինքնին ցուց է տալիս պատկառելի տարիք: Այդ տարում գրված մի հիշատակարանից իմաստում ենք, որ ոմն Գրիգոր գոհի արտագրել է մի Ավետարան:

Դրանից մի քանի տարի անց, 1296 թ., Բանարգեսը գրել է մի Մամրուտունը՝ «Ծանապատիս Երեկ կոչեալ ընդ հովանեաւ սուրբ Աստվածածնիս և սրբոյն Գրիգոր Հայաստանեաց Լուսաւորչին չաշչարանաց տեղիս»<sup>53</sup>:

1431 թ. Երիզայի Սուրբ Աստվածածին վաճքում գրվել է մի Ուկեփորիկ, որի հիշատակարանից պարզվում է, որ 15-րդ դարի առաջին կետում հիշյալ վաճքի վաճառայրն է եղել Ստեփանոս վարդապետը և ունեցել է միաբաններ, որն ինքնին վկայում է վաճքի մտալոր կենտրոն լինելու մասին<sup>54</sup>:

Գրիգոր Օշականցին, որ այցելել է այնտեղ ավելի ուշ, վկայում է, որ տաճարի ներսում, արևելյան կողմը, որմերից մեկի վրա եղել է այսպիսի մակագործություն. «Արփիազգեատ ճառագայթեալ, այց արեգական շղշղողեալ»:

Այս է մեր ամբողջ իմացածը վերոհիշյալ վաճքի մասին: Պետք է ենթադրել, որ մասնավորապես վերջին դարերում եղել է միայն ուստագնացությունների վայր, գուցե և կատարել է կրթական որոշ աշխատանք:

## 9. ՇՈՂԱԿԱԹ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Շողակաթ Սուրբ Աստվածածին վաճքի մասին անհամեմատ ավելի շատ վկայություններ են հասել:

Ս. Ամատյանը, որ վաճքը տեսել է ուղիղ հարյուր տարի առաջ, 1870-ական թվականների վերջերին, տալիս է հետևյալ տեղեկությունները: Վաճքը գտնվում է Երգնակայի Գոհանամ լոռան ստորին լանջերում, արևելյան կողմը, բանարքի արևմտյան կողմը, Բրանից երկու ժամ հեռավորության վրա, գեղատեսիլ վայրում օժտված առաս բռականությամբ, առան աղբյուրներվ, առավելություններ, որոնք մեծ թվով ուստավորների և այցելուների են գրավել այդ վայրը և նրանց պարգևել կատարյալ վայելք:

<sup>52</sup> «Հանդես ամսօրյա», 1949, հունվար—մարտ, էջ 25:

<sup>53</sup> Նոյն տեղում:

<sup>54</sup> Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերն անոագերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 408:

Դրան մասամբ էլ նպաստել է քաղաքին մոտիկ լինելը, ճանապարհների համեմատաբար բարեկարգ վիճակը: Չշապատում ամեն կողմ ընկած են եղել փարթամ մարդագետներ, այժմներ, պարտեզներ, ծառատաններ, դալարագեղ բլորներ, բուսատան ձորեր: Թթենիների երկու այժմ եզերել են վանքը արևմոտաքից և արևելքից: Ունեցել է ծիրանի պարտեզներ, մեծ ու փոքր երկու ջրավազաններ, շրջապատված վարսագեղ ուռենախներով, պացիկ բարդիներով:

Այս բոլորը դրախտային տեսք են տվել վանքին:

Գ. Սյուրմենյան ասում է, թե այս չքնաղ անկյունը ավագակային հարձակումներից համեմատաբար ազատ է մնացել շնորհիվ այն բանի, որ քրդական և թուրքական գյուղերը հեռու են եղել: Ամատյանը, սակայն, ցուց է տալիս, որ շրջապատում եղել են թուրքական և քրդական տասնյակ գյուղեր: Եվ որպինեւն հրա և կարագրությունը մեր պատմաբաններին հարուստ հյութ կարող է տալ ոչ միայն վանքի տեղագրության, այլև զուտ հալզական այդ տարածության արդեն ազգային դիմագիծը կորցրած, թուրքաբնակ ու քրդաբնակ դարձած լինելու մասին, ավելորդ չենք համարում մեջ բերել լնդարձակ մի հատված, մանավանդ, որ մեր պարբերական մատովի էջերում մնացած այդ հոդվածները քշերին են մատչելի մեր օրերում, և անգամ չեն օգտագործվել Գ. Սյուրմենյանի նման բարեխիլճ մի հեղինակի կողմից.

«Դեպի հարավ, ի սպառված դաշտին և ի ստորոտ բազմակոհակ լերին, որո առաջին աստիճանաց վերա կեցած կրիստոն, մի ժամու տարածությամբ կտեսնեմ Սելյուքն թուրքաբնակ գյուղը: ... ավելի հեռի, դեպի հարավ և սակավ ինչ յարելս, քանզի դաշտին շրջագիծը բոլորակ է ատա, դարձալ ի ստորև նոյն լեռնակոնակաց, կա եգրեկ քրդաբնակ գյուղը, և անդրագոյնն ևս, միշտ հարավախառն արելյան ուղղությամբ, մերձ ի կիրճն որ կառաջնորդեն ի Դարանալյաց գավառն, կա Բրաստիկ՝ դարձալ քրդաբնակ գյուղը: ... Անմիջապես առջիս, եթե յարելս կոյս դարձած եմ, ի ստորոտ բլրովն, կա Ծոփա թուրքաբնակ գյուղը՝ ի մոտս հեղեղատին, որ ծագում կտնուու: Սեպին առատաջոր ստիճաններեն, և քերելով Ծողակաթու վանուց անդաստան ու պարտեզներն, կիշնե ի դաշտ: Ավելի հեռուն դարձալ յարելս, կա թուրքաբնակ Թիլ գյուղը՝ առ այն գետակին, որ զարդիս կոյսվի Թիլու կամ Զարդախը գետ (Գայլ գետ՝ ի հնումն): ... Կանգ կառնում անդ և կդիտեն դաշտը, որ առջիս է դեպի հյուսիս. աջ կողմն՝ դեպի արելեկ՝ ի ստորոտ միշտ մինենոյն լերին, կա Խողնսի՛ ոչ հեռի ի Թիլե, և նոյնապես յեզր նախահիշյալ գետակին, գյուղ թուրքաբնակ, որու հայ բնակչությունն և ս. Աստվածածին ու ս. Կորպակն եկեղեցիքն կհիշվին ի ՄՂԹ (1550) թվականին՝ ի ձեռագիր գանձարանի՝ որ ի վաև Ծողակաթու. ուղղակի դեպի հյուսիս՝ դեմ հանդիման կտեսնեմ ի սպառված դաշտին՝ ջուխտակ ծառագարդ ու զվարձալի գյուղեր՝ Ալպու ու Խար, երկորին թքքաբնակ և ջրաշատ, բերի և հուրթի անդաստանվ, մերձ ի մոտս մեծագոյն ձորովն կամ հեղեղատին, զոր կարձակէ Գոհանամ յարելս կոյս... Ավելի ցածրագոյն դրիվք կա Զերմե թուրքաբնակ գյուղը, Զրմես ավան՝ հիշատակյալն ի Խորենացվոյն, որ Տիրան Ս. արքա ուներ ամարանց: Այս գյուղը կգտնվի Թիլու գետին ու Գոհանամի կողերուն միշն. ունի ակունք և ավագան համբավյալ առատության ու սառնության համար»<sup>55</sup>:

Սյս Ակարագրությունից իմանում ենք, որ Հայաստանի տարածության այն մասում, որտեղ երկու հազար տարի առաջ բացառապես հայեր են ապրել, և տեղանունների մեծ մասը հիշատակված են Խորենացու կամ այլ մատենագիրների մոտ, իսկ մի մասն էլ հայերեն բառերի աղավաղումներից են ստացվել, ինչպես Ագարակ—Եգրեկ, 19-րդ դարի կեսերին արդեն դարձել էին զուտ թուրքաբանկ կամ օտարարբանկ և Ծողակաթ Սուրբ Աստվածածին գեղեցիկ վանքը հայկական մի կողման է եղել մոլեռանդ շրջապատում:

Ամասյան ասում է, թե ընդհամենը բառորդ դար առաջ վերոնիշյալ վայրերը բնակեցված են եղել հայերով և այժմ էլ կան նեկանիցիների ու վաճեքերի մնացորդներ թուրքական և քրդական վերոնիշյալ գյուղերում՝ վերածված հարդանցների, մարագների: Փոխվել են աղավաղվել անունները. Ագարակը դարձել է Եգրեկ, Սուրբուլոր՝ Սլրու, Ծողակաթը՝ Ծիխա և այլն:

Ամասյանը ոգեկոչում է արդեն անհայտացած մի ամբողջ մշակույթ, որի հետքերը գեթ այդ տարիներին տեսանելի են եղել: Հիմա այդ մնացորդներն ել չկան:

Ծողակաթ Սուրբ Աստվածածին վանքի կառուցման ժամանակի մասին որոշակի տվյալ չկա: Ինչպես մյուս, արև մասին նոյնական հյուսվել են ավանդություններ, որոնցից մեկի համաձայն՝ կառուցվել է Թաղենու Սուաբյալի, վերանորոգվել Ներսես Պարթևի կողմից: Որ կառուցվել է քրիստոնեության առաջին դարերում, գուցե և հետանոսական տաճարների տեղում, անհավանական չէ: Այդ է վկայում շրջապատի վայրերի անունների հիշատակումը Խորենացու, Ագարանգեղոսի և այլ մատենագիրների կողմից, Տիրան թագավորի ամառանոցն այնտեղ լինելը: Հենց Ծողակաթ անունն է հուշում է այդ բանը:

Այսպես թե այնպես՝ մյուս վանքերի նաև, Ծողակաթ վանքն էլ իր ծաղկման շրջանն ապրել է 12—13-րդ դարերում, Երզնկալի մտավոր վերելի շրջանում: Այդ տարիներից գրեթե հիշատակություն չունենք: Կան մեկ-երկու մասն փաստեր, որոնք կարող են նեթադրել տալ, թե տվյալ ձեռագրերը գրվել են Ծողակաթ վանքում, թեև կարող են գրված լինել նաև մյուս Աստվածածին վանքերից մեկնումներում:

Դրա համար զանց ենք առնում դրանք հիշել այստեղ:

Վավերական այն է, որ վանքը հիմնովին վերանորոգվել է 1684 թ. Ավետիք Եկեղիկացու շահմարդուք, որը եղել է առաջնորդը և շինարարական մեծ աշխատանքներ է կատարել:

Ենթադրվում է, թե դրամից հետո, մասնավորապես 18-րդ դարում, վանքը ապրել է ծաղկման կարճատև մի շրջան, Առաքել Ակնեցու առաջնորդության տարիներին: Հովհաննես Մերաստացին ասում է, թե Սուաբել Ակնեցին այնքան սիրված է եղել Երզնկալու, որ երբ հրավեր է ստացել պաշտոնավորելու Մերաստիալու, դմվարությամբ է համաձայնվել գնալ: Եվ երբ ի վերջո համաձայնվել է, Ծողա վանքից բաժանվել է հոգումով. վանքի ամրող հարստությունը հանձնելով իրեն փոխարինադներին, սիրելի մի դպիրի հետ մեկնել է Մերաստիա 1722 թ.: Մերաստացիներն ել այնքան անհամբերությամբ են սպասելիս եղել երան, որ լսելով գալը՝ «Գրո՞ն տուեալ միմեանց եկին ի տեսութիւն նորեկ առաջնորդին և մեծաւ սիրով ընկալան զնա իրեն զառաքեալ Սստոծոյ»<sup>56</sup>:

<sup>56</sup> Յովհաննես Մերաստացի, Պատմութիւն Մերաստիոյ, Երևան, 1974, էջ 81:

Ծողա վանքի մասին հիացմոնքով է խոսում Գրիգոր Դարանաղջին:

19-րդ դարու սկզբներից ըստ երևոյթին վանքը հանձնվել է աշխարհական ինամակալների, որոնցից հայունի է մեզ Տեր-Ստեփանյանների գերդաստանի ինամակալության շրջանը: Այդ մասին Ամատյանը գրում է. «Ծողակաթու վանուց աշխարհական տնտեսներու կարգին մեջ հիշատակության արժանի է հանգույցալ նշան Էֆենդի Տեր-Ստեփանյան, որ իրու ուղիղ ու պարկեցն մշակ՝ հավատարմությամբ ու ժրաշանությամբ ծառայած է մենաստանին: ... Յուր որդին Սարգիս Էֆենդի Տեր-Ստեփանյան ոչ միայն ժառանգած է հորը բարեմասնություններն, այլ և գերազանցած է զայն և այսօր խիստ պատվավոր դիրք մ'ունի առևտրական ասպարեզին մեջ: ... Այս վանուց վերա ինամք ունեցող հոգաբարձություններեն ալ կարող եմ հիշել Մ. Միքայելյան Մ. Ավետիսի և Դանիելյան Առաքել Էֆենդիններու և ընկերաց հոգաբարձությունն, որու օրով վանքն ոչ միայն քայլայման վրանգել ազատագործ է, այլև մեծ պայծառության ու բարեկարգության հասած է»<sup>57</sup>:

Հայու երևոյթին այդ ինամակալությունն ավելի չի եղել, քան վանքը փլուզումից ու վերջնական թալանից գերծ պահելը գեթ միաստամանակ:

#### 10. ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔԸ

Այս վանքի մասին ունենք բավականաշահ տվյալներ: Այնուեղ գրրված տասնյակ ձեռագրերի հասնելը մինչև մեր օրերը, վանքին ու նրա միաբաններին տրված բարձր գնահատականները, Ղ. Խճճիճյանի վկայությունը, թե վանքը եղել է «պատեալ հզոր պարապով», տասնյակ գրիշների, մատենագիրների կրթություն ստանալը այնունշան, —այս բոլորը մեզ բերում են այն համոզման, որ Ս. Կիրակոսի վանքը անցյալում կատարել է գրեթե այնպիսի դեր, ինչպիսին կատարել են Կապուտի և մի քանի այլ վանքեր:

Տեղագրության, աշխարհագրական դիրքի մասին Ս. Ամատյանը գրում է. «Դաշտին հարավակողմը, Մեծուրի մեջ օղակը կազմող, ուրուց ու աճացած բարձրացող հպարտ Ղազան-Ղայա լեռին ստորոտը և սորա ողնաշարներեն ձևացյալ խորախիտ ու անձուկ ձորի մը մեջ, քաղաքեն մեկ ժամ հեռավորությամբ և գրեթե ի հանդիպս նորա, պորակներով շրջապատյալ դիրք մը ունի այս մենաստանն, որ թեև ճնի ու շնի չէ միուսց հնան, այլ մերձավորության պատճառով ունի հաճախորդաց ու այցելուաց բազմություն: ... Ս. Կիրակոսի ուխտավորը ամրան վերջերին քաղաքեն ուղիղ գրծով մը կերթենելին անդ Եփրատի հունեն անցնելով, բայց ուրիշ ժամանակներ ստիպյալ են Եփրատի միակ կամրջեն անցնելով երկար շրջան մը ընելու, որ մեկ ժամ ավելի կերկարցնե ուղուց տնողությունը: Վանքը, ինչպես ըսինք, անձուկ ու անդադախոր ձորի մը կողքին վերա գտնվելուն, երեք կողմեն տեսարան չունի, այլ միայն դեպի հյուսիս կդիմե քաղաքին և այս ուղղությամբ գտնված բնակավայրից վերա, որու հորիզոնը կգծե բարձրաբերձն Սըրբոր (ըստ բազմաց՝ Ս. Գրիգոր), բքաշատ ու վտանգավոր գագաթը՝ ընդ մեջ Եկեղեց ու Քելքիտա, այլ բանուկ անցք ճանապարհին Տրապիզոնի: Վանքը չունի պարիսպ, կանոնավոր շինությունք բնակության, ճոխություն գոյից ու կալվածոց, այլ խոնուկ տաճար մը, երկու հովանոց և մի քանի փոքր սենյակներ՝ ամրան համար: Լուսաղեր չուրմ՝ թեև կարի ցուրտ, այլ աղտաղտին, իսկ մածունն խիստ համբավալ է՝ շրջակա պարարտ արդ-

տավայրից պատճառավ: Վանոց երեք նորաշեն սենյակը կառուցյալ են արդյամբ ու ծախիվը հանգուցյալ Մ. Հովհաննես աղայի Դամբելյան, որու առաւ ձեռնուվության ու բարեպաշտության գովելի հիշատակներն կտև-նըվին Եկեղյաց գալակոյի կրոնական ու կրթական շատ մը հաստատությանց մէջ: Այս մենաստանին խնամքը հանձնված է բաղարին արեւատավորնե-րնեն բաղկացյալ հոգաբարձության մը, որ փոյթ կտանի շենցնել ու զար-գացնել վանքը տակալք»<sup>58</sup>:

Ենթադրվում է, թե Սուրբ Կիրակոսի վանքը հիմնադրվել է ԺԲ կամ ԺԳ դարերում: Այսպես թէ այնպես՝ ԺԲ դարից մինչև մեր ժամանակները գոր-ծել է անհավան, բազմաթիվ մարդկանց տվել է կրթություն, այնուղեք գրք-վել կամ արտագրվել են մեծ բանակությամբ ձեռագրեր:

Ոմն Պետրոս քահանա 1289 թ. Եկեղյաց գալակոտում գրել է մի Ավետա-րան, որը 1298 թ. նվիրել է Ս. Կիրակոս վանքին: Վանահայր Սունեփան վարդապետն այդ տոիթով պատարագ է մասուցել բարերարի համար:

1304 թ. գրվել է մի այլ Ավետարան, որի գրիշն է Ավետիսի քահանան: Մի Ավետարան էլ գրվել է 1316-ին, որի հիշատակարանում կարդում ենք «Գրեցաւ տասն Աստուածային... աւետարանն... ի վանս կոչեցեալ Ս. Կի-րակոսի և մար նորին Յուղիդայ: Ի հայրապետութեան տեառն Լուսինի... Աղաջեմ խնամով և զգուշութեամբ պահել, և զատացողք սորա զՄխիթար քահանայ և զորդի սորին զՄինեն քահանայ, և զիարազան եղբարքս զՅով-հաննեն և զԳրիգորիս և զՏամիկին, այլև զբեռաբողոք մանկուն զԱհարոն դպիր և զՄովկես, և զազգայինն մեր զամենայնն որ այժմն կան և զգնա-ցեալս առ Քրիստոս՝ յիշել նաև զեղկելի զմետնեալս զՆերսէ գրագիրս, որ բազում աշխատանար և շանիք գրեցի զաս ի սոտոյ և լընտիր արի-նակէ որ ի Կիլիկիա յերկիրն, Արքայեղբար անոն կոչեցեալ Յունանէն ե-ափակոպոս, որ իրովք ձեռաւը էր գրեալ լաւ և ընտիր արինակէ...»<sup>59</sup>:

Դրանից յոթ տարի անց՝ 1332 թ. գրված մի Ավետարանի հիշատակա-րանում Ս. Կիրակոսի վանքը կոչվում է «հոչակավոր»:

Ոմն Ներսէս Կելընցի նոյն վանքում 1339 թ. գրել է մի Ավետարան:

1351 թ. Սիմեոն քահանան Կիրակոսի վանքում գրել է մի Ավետարան, 1654-ին ավարտել է մի ժողովածու, ինչպես իմանում ենք Հ. Տաշյանի «Յու-ցակ ձեռագրացից»: Եվ այսպես՝ հետագա տարիներին գրվել են բազմա-թիվ ձեռագրեր:

Ս. Կիրակոսի վանքը մերթ ապրել է ծաղկման, մերթ՝ անկման շրջան-ներ, սարսափի ու անդորր տարիներ, հնթարկվել կողոպուտի ու բաղանի, բայց ուրիշ այսպես ձեռագրեր:

Եթե այսքան ձեռագրեր հասել են մեզ, ապս քա՛նի-քա՛նի տասնյակ ձեռագրեր կա՛մ ոչնչացվել են, կա՛մ անհնատ կորել՝ դարերի հոլովույթին չշիմանալով: Բայց բերված փաստերն եւ լիովին իրավունք են տալիս մեզ ասելու, թե Կիրակոսի վանքը եղել է մշակութային խոշոր կենտրոն մի քա-ցի հարյուր տարի շարունակ:

Մեզ հասել են վանքի եռանդուն վանահայրերից մի քանիսի անուն-ները, ինչպես՝ երկու Սունեփանոսներ, երկու Հովհաննեսներ, մի Մարտի-րոս և այլն, որոնք նեկավարել են վանքը տարբեր տարիներ և հիշատակ-վում են որպես հշանավոր հոգևորականներ:

<sup>58</sup> «Արևելյան մամուլ», 1888, փետրվար, էջ 55—57:

<sup>59</sup> Գ. Մրկանձայաց, Թորոս աղբար, Բ հատ., էջ 295:

Հասել են նաև Ս. Կիրակոսի վաճքի միաբանության անդամներից մոտքանի անունները՝ Մխիթար, Դավիթ, Կարապետ, Կոստանդին, Հովհաննես, Սուելիան, Մարտիրոս, Վահան և այլն:

1446թ. Ս. Կիրակոսի վաճքում գրված Հայութավորքը պարունակում է ընդարձակ մի հիշատակարան, որը ուշագրավ տեղեկություններ է տալիս թե՛ ժամանակաշրջանի բաղաքական իրադարձությունների, թե՛ վաճքի աշխատանքների մասին: Նաև մանրամասն թվարկում է, թե որ գրիշը քանի տեսր է արտօգրել. «Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զգրողը գրոց զՄինաս արքական որ զառաջքն գրեաց ԺԶ տեսր, և զԵրեմիայ արեղացն՝ որ Ժ տեսր գրեաց և զՏէր Խաչատոր վարդապետն որ Ը տեսր գրեաց, և զՅովինաննես վարդապետն որ Ս. տեսր գրեաց և զիր աշակերտըն զԱստուածառոր արեղայն՝ որ Զ տեսր գրեաց և զԱւետիր արեղայն՝ որ Դ տեսրը գրեաց: Եւ ես՝ բազմամեղ և անիմաստ Սարգիս՝ որ զԴ տեսրակի վերքը գրոց գրեցի՝ և զցանկն ի յառաջքն, նաև զՄարկոս արեղայն՝ որ Դ տեսր գրեաց և ներսէս արեղայն, որ Ս. տեսր գրեաց»<sup>60</sup>:

Մեր Մատենադարանում կամ այլ վայրերի մատենադարաններում կամ ձեռագրեր, որոնց արտագրման վրա աշխատել են բազմաթիվ մարդիկ, մի քան, որ հետությամբ Ակատվում է ձեռագրերի տարբերությամբ, սակայն հաճախ Արանցից մի քանիսն են հիշատակվում հիշատակարաններում, իսկ այստեղ բերվել են բոլորի անունները, այն էլ, թե յուրաքանչյուրը քանի տեսր, այսինքն մեր այժմյան լեզվով ասած՝ քանի մասով է արտագրել:

Վերջին մասերն արտագրող «անիմաստ» Սարգիսը բացատրում է, թե ինչու են այդքան մարդիկ աշխատել հիշյալ Հայութավորքի արտագրման վրա: Դրա հիմնական պատճառը համարում է ժամանակի սղությունը, այսինքն՝ թե քիչ ժամանակ է տրվել իրենց, քանի որ նոյն ձեռագիրը ուրիշների կողմից էլ արտագրվելու էր: Դրա համար էլ, ասում է, ձեռագիրը բաժանել են մասերի, «հատեալ եղև» և բաժանել իրար մեջ:

Այստեղ մեզ հետաքրքրողն այն է, որ Ս. Կիրակոսի վաճքն ունեցել է այդքան գրիշներ: Անշուշտ Արանցից մի քանիսը կարող էին միաբանության անդամ չլինել: Ղ. Փիրղակեմանը, «Նոտարքում» տեղ տալով այդ հիշատակարանին, անդրադանում է արտագրողներից Ավետիր և Աստուածականներին, Հովհաննես վարդապետին և ասում է, թե Արանք երեքն էլ Ս. Կիրակոսի միաբաններից են եղել: Հետո՝ նոյն ժամանակամիջոցում հնարավոր է, որ մի քանի գրիշներ ել զրադված լինեին այլ ձեռագրեր արտագրելով:

1480-ական թվականներին այս վաճքում հիշատակվում է հայտնի Մարտիրոս Մրգնակացին:

Վաճքի հետագա մեկ դարի պատմության վերաբերյալ քիչ քան գիտենք, որոշակի է սակայն, որ անխափան գործել է: Դա երևում է մի քանի ձեռագրերի հիշատակարաններից:

«Սուրբ Կիրակոսի վաճքը,—գրում է քանասերներից մեկը,—մինչև վերշերս իր գոյությունը պահած էր... Հոն կատեր սովորաբար Երզնկայի առաջնորդը: Միրված ովտատեղի էր: Ուներ ձեռագիրներ (ապա գողցված)»<sup>61</sup>:

<sup>60</sup> Լ. Ս. Խաչիկան, ժԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 601:

<sup>61</sup> «Հանդես ամսօրդա», 1949, հունվար—մարտ, էջ 42:

Երգնկայի առաջնորդի պատեղ հատելը ցուց է տալիս վաճքի կշիռը, իսկ ինչ վերաբերում է ձեռագրերի գողացիկում՝ կատարվել է 1890-ական թվականներին՝ անարժան, արծաթամոլ հոգևորականների ձեռքով: Այդ մասին գրվել է պղղամայ մասովում և մեծ աղմուկ բարձրացել, սակայն ձեռագրերը արդեն հասած են եղել Եվրոպա... Վաճառված այդ ձեռագրերի մեջ է եղել Կորեք գրողի հայունի Հայամավորը, որի հնությունը, ըստ ականատեսների վկայության, հասնում էր մինչև Բյուզանդական իշխանության շըրշանը: Վաճառվել է շատ էման գնով և տարվել Անգլիա:

### 11. ՍՈՒՐԲ ԹԱՌԵՇՈՒ ՎԱՆՔ

Ս. Թադեոսի վաճքը հոյնակես դասվում է Երգնկայի հնագույն վաճքերի շարքը, թեև նրա մասին մեզ հասած փաստերը շատ սահմանափակ են: Ո՞չ կառուցման ժամանակն է հայունի, ո՞չ էլ նրա գրական-մշակութային գործունեությունը: Ըստ երևոյթին, հնություն տալու միտումով, կապել են Թադեոս առաքյալի անվան հետ, և հիմնականում էլ ծառայել է ոխտագնացության:

Վաճքը գտնվել է Երգնկայի հարավ-արևելյան կողմում, Բոլոնիո Տաճակի կամ Տաճիկ գյուղի մոտ:

Այն փաստը, որ վաճքը հնագույն դարերից եկել-հասել է մինչև մեր օրենքը, ինքնին ցուց է տալիս, որ սիրված ոխտատեղի է եղել Երգնկացիների համար: Եվ արդեն այս վաճքի մասին խոսողները շատ ավելի կանգ են առնում ոխտագնացությունների վրա, նկարագրում, թե ինչպես հարյուրավոր ընտանիքներ՝ կարավան կազմած ոխտի են գնացել Ս. Թադեոսի վաճքը և վայելել նրա առողջարար կիխման, քան խոսում նրա մշակութային դերի մասին:

Կրթական գործունեություն էլ ունեցած պիտի լինի, սակայն չենք հանդիպում այնտեղ ուսում ստացած հշանավոր մարդկանց անունների:

18-րդ դարի վերջերին վաճքի մատակարարն է եղել Տեր Հարություն քահանան, կենուրախ, կատակասեր, սրամիտ մի հոգևորական, որ իմացել է ոխտավորներին ամեն կերպ սիրաշահելով գաղտնիքը:

19-րդ դարի կեսերին ամայացել է: 1895 թ. ոմն Վարդան Վարդապետ ցանկացել է վերանորոգել, գործի դեմք: Նոյն տարում սկսված հայկական ջարդերի օրերին կատավարական զորքերը կողոպտել են Ս. Թադեոսի վաճքը, վերջնականակես ամայացրել, սակայն ոխտավորները շարունակել են ամեն տարի գնալ այնտեղ<sup>62</sup>:

### 12. ՍԸՐԾԽԸ ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ

Այս վաճքի անցյալի մասին քիչ բան գիտենք, սակայն վերջին դարերի վերաբերյալ բավականաշատ տվյալներ հասել են: Ծանոթացնենք այն փաստերը, որ գրի է առել Կ. Պոլսի համակին պատրիարքներից Զավեն Եղիայանը և ողարկել Գ. Սյուրբեցանին:

Սըրբալ Սուրբ Թորոսի վաճքը գտնվել է Երգնկայի դաշտը Դերջանից քամանող լեռների լանջերին: Ըստ ավանդության՝ հիմնադրվել է Դ դարում, ի հիշատակ Հայաստանի Սպահանելաց գալաքի իշխան Սուրենի որ-

<sup>62</sup> «Հանդէս ամսօրյա», 1949, հունվար—մարտ, էջ 26:

դու՝ Թորոսի, որը քրիստոնեական կրոնն ընդունելու համար նախառակվել է նոր՝ Սուրբն իշխանի կողմից: Կանքի մեջ եղել են սրբացած այդ Թորոսի և նրան քրիստոնյա դարձնող Դասիոս քահանայի գերեզմանները:

Վանքը վարչականորեն ընկել է Երգմենյայի սահմանակի մեջ, բայց, սահմանակից լինելով Դերջանին, ավելի շատ ծառալել է դերջանցիներին:

Զավեն Եղիայանը Թորոսի վանքը այցելել է 1880-ական թվականներին: Նա գրում է. «Երբ ես այդ վանքը այցելեցի, տաճարը շեն էր, որուն շորջը կգնվեին քանի մը տուներ, որ կրօնակեին 9 տուն հայեր, ընդամենը 76 անձ: Աստեղ ամենը մեկ գերդաստանի կվերաբերեին, որոնց նախահայրը հոն հաստատված էր ԺԸ դարու կեսին ատենաները: Այդ ժամանակ երկրաշարժե և ասպատակություններին վանքը ավերակ դարձած է եղեր և շրջակա հայությունը ամբողջովին ցրված, իր գյուղերն ու կալվածները քրորտերուն թողելով: Երգմենյայի դաշտեն Մեղմցիք գյուղեն հայ մը, Ասլան օղլու գերդաստաննեն, իր ընտանիքով հոն կերթա կհաստատվի, իր վարդես եղբոր մետ: Աստեղ Ս. Թորոսի մասունքը քյուրու պեկի մը քովեն կազատեն դրամական վարձատրության մը փոխարեն և վանքը մասամբ կշենցնեն»<sup>63</sup>:

Այդ մարդը եղել է Տեր Վահանը, հայունի՝ առասպեկտական ոժով: Նրա ընտանիքն է, որ հետզինեւ ճայտավորվել է, մեծացել՝ ապրուսի հիմնական միջոց ունենալով վանքի կալվածների, պարտեզների եկամուտը և ոխտավորների նվիրատվությունները:

Վանքի ուխտի օրը եղել է Զատկի հաջորդ կիրակի օրը, երբ շրջակա տասնյակ գյուղերից, մեծ մասամբ Դերջանից, սպալերով, գրաստներով հոծ բազմություն հավաքել է այնտեղ, զվարճացել: Այդ օրը վանքի ավանդական ձողը (արքը) հանել են, տնկել քակում: Վանականներից մեկը մագլցել է նրա վրա, զանազան խաղեր ցուցադրել: Դրանից հետո առաջացել է վանքի անոնը՝ Սրբըիլ Թորոս: Բայց թե երբվանից է եղել այդ սովորությունը, ինչ է նշանակել արքըի արարողությունը, ոչ ոք չի գրել:

Հիշյալ վերանորոգությունից հետո վանքը միշտ ունեցել է իր վաճառականը: Նախ այդ պաշտոնը վարել է Մարկոս Վարդապետը, որն իր կրթությունն ստացել է Երգմենյայի վանքերից մեկում և եղել է շատ գրասեր, փորձել է վանքը դարձնել կրթական կենտրոն, սակայն շրջապատի մուսուլման մոլեսանդ տարրը հնարավորություն չի տվել իրագործելու այդ ծրագիրը:

Մարկոսը մեռել է 1855 թվականին՝ վանքը ժառանգ թողելով Տեր Սարգսին: Սա երկար ժամանակ վարել է վանահայրության պաշտոնը: Վահանավել է 1878 թվականին: Նրան էլ հաջորդել է Տեր Պողոսը, Վերջինիս մահից հետո, 1889 թ.՝ Տեր Վահանը:

Տերներ մերունդ անցած այս ժառանգության սկիզբը համարվում է 1814 թվականը, մի բան, որ հաստատվում է վերոհիշյալ Մարկոս Վարդապետի մի կոնդակով՝ գրված նույն տարում:

Վանքի միակ արձանագրությունը վերաբերվել է 17-րդ դարին: Դա էլ հիմք է տալիս հավատալու, որ շալավիների ժամանակ, ինչպես ենթադրում են որոշ բանասերներ, Ս. Թորոսի վանքը հիմնահաստակ կործանվել է հետագայում վերանորոգվել:

Ս. Թորոսից Սուրբիաը 1925 թ. գրի առած հուշերում գրում է, թե վանքի բնակչությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին բաղկացած է եղել 85 անձից՝ այր, կին, երեխա: Պահել են մի քուր հովիվ,

<sup>63</sup> Գ. Սպուրմենյան, Երգմենյա, էջ 100—101:

որը լավ իմացել է հայերեն: Իրենք հիմնականում գբաղվել են անասնապահությամբ և մեղվագահությամբ: Ունեցել են պտղասու այժի, որն սպասարկել է թե՛ բնակչությանը և թե՛ ովտապվորներին:

«Վաճը ամրող պարապապատ էր,—գրում է Սուրիասը,—միայն մի երկարէ դրու ուներ, որը երեկոները կփակեին և ամրող բնակչությունը կմնար պարհապնձ ներս»:

Սուրիասի հուշերում կա շատ ուշագրավ մի փաստ: Ասելով, թե Ս. Թորոս ովասի են եկել անգամ Կեսարիայից և այլ հեռավոր վայրերից, հիշատակում է Թեքրիդաղը, իսկ այդ քաղաքը՝ Ռոդոսուն, գտնվում է Պոլսի մոտակայքում: Որտեղից որտեղ ողողոսոցիներ են եկել՝ և ինչու: Կա պատմական վկայություն, որ Ռոդոսուի հայերի մի մասը ջալավիների ասպատակությունների շրջանում գտնվել է Երզնկայից, այս մասին համախ էր խոսում նաև մեր խնկելի ուսուցապետը՝ Հր. Ամայանը, որի ծնողները ողողոսոցի են եղել: Նա կատակով իրեն համար էր Երզնկայից:

Այս սքանչելի փանը էլ արժանացել է նոյն ողբերգական ճակատագրին, ինչ մյուսները: Մեծ եղենի օրերին թուրքերը թալանել, ամայացրել են սրբատեղին: Ռուսական գրավումից հետո սարերն ապատանած թորոսցիները վերադարձել են, փորձել վերականգնել փանը, սակայն մեկնելու տարի անց, ռուսական զորքի համանջի օրերին, թողել են ամեն ինչ ու փախել դեպի ռուսական հողը:

Շրջակա գուղերից մեկի շեյլը եկել-քանիկ է շինությունը, փայտելը տեղափոխել իր գյուղը, գրավել է նաև փանը հողերը, անտառները:

«Այսօր հողակույտի մը վերածված է հարդուրավոր տարիներու ժամանակով պահված այդ սրբավայրը»,—գրում է թորոսցի Սուրիաս՝ վերշին Աերկայացուցիչը հնամենի մի փառքի:

### 13. ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂՈՍԻ ՎԱՆՔ

Գտնվում է Երզնկայի արևելյան կողմում, Քեշիշ և Սարը Ղայա լեռների ստորոտում, ոչ շատ հեռու պատմական Բթառիմ գյուղից: Վանքի հարավակողմին Բթառիմն է, արևելյան կողմը՝ Քելերինը, ჩերանոսական դարերից մնացած երկու գյուղեր:

Ունեցել է առող կիխա, հիանալի համայնապատկեր: Բանասերներից մեկը գրում է, թե արտաքինով վանքը պարզ է երևում, սակայն ներքնամասերում «իին ճարտարարվեստի գլուխ գործոցներ կցուցադրե իր զանազան մասերուն մեջ»: Ունեցել է գեղեցիկ եկեղեցի, պարտեզ, շրջապատված բարձրադիր հողապատճեններով: Ապահովված է եկել արտաքին մեծ դուռով, շինված հաստ ու մշակված երկաթից, «զոր գոցելու և բանալու համար հարկ է որ երեք չորս վանականներ բռվէ բռվ գաև և գործածեն փայտ ձողեր»: Այս դուռը ունի նաև անգամ նիգափակ մը, որ երեք չորս բանալիով կրացվի»<sup>64</sup>:

Ե՞ր է հիմնվել Սուրբ Կիրակոսի վանքը, ստուգ հայտնի չէ: Ունեցել է ընդամենը մի արձանագրություն 1797-ից, որ անշուշտ որևէ վերանորոգման թվականն է հուշում:

«Հին վանք եղած կթվի,—գրում է Հ. Ռոկանը,—առանց որևէ ենթադրություն անելու:

<sup>64</sup> «Հանդես ամսօրյա», 1950, ապրիլ—մայիս, էջ 42;

Հին լինելու օգտին ևն խոսում այն մի քանի մանր տվյալները, որ հասկ ևն մեզ: Եկեղեցու գմբեթը նաման է եղել Էջմիածնի կաթողիկեթ: «Խորանները նախնի ճարտարարվեստի ամեն նրբությունները կներկայացնեն իրենց գեղակերտ և նրբանու քանդակ-նանգույցները մարդու խելքեն գերիվեր կրպին, որոնց վրա տաշված և իրենց բնական գույներով նկարված նրբերանգ ծաղկինները զիրենք գործող արվեստագետին ճարտարությունը կներկայացնեն»<sup>65</sup>:

Սուրբ Նիկողայոսի վանքը խոր անցյալում ունեցել է կրթական, մատենագրական գործունեություն, մեծ թվով միաբաններ, զարգացած վանահայրներ, Գր. Դարձանադու վկայությամբ այնտեղ գործել է Մկրտիչ տաղասաց վարդապետը: Սակայն գրեթե ոչինչ չի հասկ մեզ՝ վանքի մշակութային գործունեությունը ներկայացնող: Պատճառը ամենից ավելի կողոպուտի ու թալանի ենթարկված լինելու փաստն է:

«Այս սրբավայրն ալ,-գրում է Ս. Ամատյանը,—Զախրմանու վանոց նման առարկա եղած է մինչև վերջին ժամանակներս մերձակա քրդաց ասպատակությանց և այս իսկ աղաքավ անշուր ու անինչ մնացած է: ... Այժմու վանահայրն է Մեղուցիկ զյուղեն Տ. Գարբիել քահանա Մարուքյան, որ թեև ոչ այնքան աշխուժ ու ճարպիկ, այլ խիստ բարեսիրու ու հեղահամբուլը է և թողլով յուր ժողովուրդն ու հայրենական կալվածներս երեսի վրա, Ս. Նիկողայոսի կծառայել և կշանա շինել ու բարեկարգել զայն, եթե Բթառինու տգես ու կոչս գիտավորաց նախանձ ու հակատակությունն, ինչպես նաև գավառական վարչության պահանջությունն շփմատեցնեն զինքը»<sup>66</sup>:

Մեզ հասած վերջին և հավաստի վկայությունն է սա, որ վերաբերում է Ս. Նիկողայոսի վանքի հարյուր տարի տառաջա վիճակին: Ի՞նչ փորձանքներ են նեկել դրանից հետո վանքի գլխին: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները պահե՞լ է իր գոյությունը: Զգիտենք:

#### 14. ԾԼԵՄՈՒՆԻ ՎԱՆՔԸ

Հ. Ռոկանը Երզնկայի վանքերի շարքում հիշատակում է երկու վանք է՝ մեկը՝ Ծլեմոնի, մյուսը՝ Հերմոնի, քայլ հայտնում է նաև այն կարծիքը, թե դրանք կարող են առյանը լինել: Չափ հավանական է, քանի որ Հերմոնի վանքի մասին չեն խոսում ոչ Ս. Ամատյանը և ոչ է Գ. Սյուրմենյանն իրենց շատ հավաստի գրություններում, իսկ Տ. Պալլանն էլ, որ հիշատակում է այդ անոնք, ասում է, թե Երզնկացիները նման վանքի տեղն անգամ չգիտեն: Հենց այդ փաստն է վկայում է, որ գոյություն չի ունեցել:

Իսկ որտեղից է առաջացել թյուրիմացությունը: Քանի որ Հերմոնի վանքի հիշատակությունը կա միայն Թուլմա Մեծոփեցու մոտ, սիալված չենք լինի, եթե ասենք, որ լաւ երևույթին այդ պատմիչի գրիչներից որևէ մեկը Ծլեմոնը Հերմոն է արտագրել Ծ-ի և Հ-ի ստվրական մի շփոթությամբ:

Եվ քանի որ Հերմոնի մասին ոչինչ չկա տպագրված, մենք խոսելու ենք միայն Ծլեմոնի մասին:

Մեզ հասկ է ընդամենը երկու հիշատակարան, որոնք գրված են Ծլեմոնի վանքում: Մեկը տպագրված է Գ. Արվանանայի «Թորոս աղբար» գրքի Բ հատորում և առանձնապես մեծ արժեք չի ներկայացնում, թվա-

<sup>65</sup> Նոյն տեղում:

<sup>66</sup> «Արևելյան մամուլ», 1887, էջ 380:

կան էլ անհայտ է, սակայն պարունակում է անոններ, որոնք ենթադրել են տալիս, թե գրված պիտի լինի ոչ դարերում: Վանքը գործել է գեր մի քանի դար, քանի որ մյուս ընդարձակ հիշատակարանը վերաբերում է 1332 թվականին: Այս հիշատակարանը պարունակում է բավականաշափ տեղեկություններ վանքի ու առհասարակ Երզնկայի մտավոր կյանքի մասին: Նաև այնտեղ հանդիպում ենք մեծ թվով երզնկացիների անոնների՝ բազմաթիվ արեղաններ, քահանաներ, աշխարհական մարդիկ, անգամ արթեստավորներ: Եթե ընդունենք, որ հոգևորականների մի գգալի մասը կապված են եղել Ծեմոնի վանքի հետ, պարզ կարող է դառնալ նրա կշիռը այդ ժամանակաշրջանում:

Գրված լինելով Կիլիկյան թագավորության այն տարիներին, երբ այդ պետությունը նկատելի հետաքրքրություն էր ցուցաբերում Սրբաւահայաստանի նկատմամբ, հիշատակարանի գրիշ Հովհաննես արեղան սկզբում հիշում է «Ի թագավորութեան հայոց Լոռնի որդոյ Աւշանի և ի հայրապետութեան տեսան Յակոբայ և յեպիսկոպոսութեան մերոյ Տէր Սարգսի»:

Հովհաննես արեղան մանրամասն թվարկում է Սվետարանի արտագրման և իր հետ կապված մարդկանց անոնները: Նկատի ունենալով այս հիշատակարանի շահնկանությունը, բերում ենք որոշ հատվածներ, որոնք վերաբերում են անմիշապես ձեռագրի ատեղմանը. «Արդ գրեցաւ սա յնկեղեց գաւառս ի յօննկալս և վասն դառնութեան ժամանակիս ի հինգ տեղիս փոխեցեալ եղաք ի գրել սորա, զի (սկիզբ) սորա ի Տի(ա)րին եղն և աւարտումն սորա Ծեմոննիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Գեորգայ զօրաւարին և սուրբ կաթողիկէիս և այլ սրբոց: Եւ արդ յիշեսիք և զեղբայրն իմ զդեռաբոյս արեղայ զՍարգիս, որ զթուղյան կոկեց և սպասաւոր էր գրողիս: Ընդ նմին յիշեսիք և զհայր վանից Ծեմոննյա զԳրիգորէս արեղայ և զայլ միաբանիքս, զՍոսթեննէս ծերունի արեղայ և զՍէթ արեղայ և զՅովհաննէս արեղա, զԿարապէս արեղա և զՍարգիս արեղա և զՅովհաննէս սուտանու արեղա զգորդ սորա: Եւ այդ յիշեսիք և զքահանայս զգեղ Խարաթշոյ՝ զՅովհաննէս քահանայ և զԴաւիթ քահանայ և զՍտեփանոս քահանայ և զաւագ տանուտէրքս՝ զՍողոմոն և զՅերսն և զայլ պաղի զմեծ և զփոքր... ամէն: Խոշորութեան գրոց և սիսալանաց մի մեղադրեք, զի ի դառն և ի նեղ ժամանակի գրեցաւ, զի լայսմ ամիմ որ Տամուրտաշն յայտնեցաւ և եկն ի վերայ աստուածապահ քաղաքիս Երզնկայիս և ժողովեց զամենայն շորջակալից զՔուրթ և զԹաթար և պաշարեաց զքաղաքն և նստաւ ի վերայ սորա ամիսս դ. և ի դառն նեղութիւն հասուց, բայց քաղաքին ոչինչ կարաց վնասել, զի Աստուծոյ զօրթիւն պահէր զնա:

Այս ընթարձակ հիշատակարանի լուսանցքում էլ կարդում ենք. «Եւ զԿիրակոս միավեցն յիշեցեք, որ գգրողիս մուշտակն կարեց»<sup>67</sup>:

Եերձակ Կիրակոսի «իշեսեցերով» էլ ավարտվում է այս հիշատակարանը, որը լրիվ գաղափար է տալիս Ծեմոննի վանքի բեղուն գործունեության, նրա միաբանների, ժամանակի և քաղաքական դեպքերի մասին:

Այս հիշատակարանը գրված է 14-րդ դարի սկզբներին, Գ. Սրբաւանտյանցի բերածը՝ դրանից առնվազն մեկ դար հետո: Անշուշտ վանքը գործել է նաև հետագա դարներում, բայց դժբախտաբար չի պահպանվել որևէ փաստ: Ծեմոննի վանքի մասին չեն խոսում ո՞չ Ամաւյանը, ո՞չ Սյուրմենյանը, ո՞չ

<sup>67</sup> «Հանդես ամսօրյա», 1950, թիվ 1—3:

**S. Պալյանը:** Կա’մ այն է, որ մի ուժեղ երկրաշարժ հիմնահատակ կործանել է այն, կա’մ դարձել մի աննշան ոխտատեղի:

### 15. ՄԻԱՎՈՐ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

Սա էլ համարվում է Երգնկայի հնագույն վանքերից: Ըստ ավանդության՝ կառուցվել է Գրիգոր Լուսավորչի կողմից, որև իբր թե այնուեղ ամփոփել է Ս. Կարապետի մասունքները:

Սուրբ Կարապետի վանքը գտնվել է Երգնկայից երեք ժամ հեռավորության վրա, Աղտաղ կոչվող լեռան ստորոտում, Յալընըզ պաղ գյուղի մոտակայքում: Երևի այս վերջին Յալընըզ (մենակ) թուրքերեն անունն է առաջացել է վանքի Միավոր անունից:

Հակոբ Կարմեցին իր «Տեղագիր վերին հայոց» աշխատության մեջ այսպես է ներկայացնում նրա աշխարհագրական վայրը «Եւ կա ի վերայ ճանապարհին (Երգնկայի) վանք մի հոչակատը Միաւոր ս. Կարապետ անոն առ ստորոտով լերին մեծի որ Չարդախլու կոչեն, որ գնացեալ սինօն հասանէ մինչև ի Ծեպ Ղարահիսարն որ է Կողոնեայ»<sup>68</sup>:

Մեզ այսուեղ հետաքրքրում է Կարմեցու գործածած «հոչակավոր» բրնութագիրը, անկախ այն բանից, որ նման գերադարձական մակրիներ տալը վանքերին և հրանց միաբաններից ունաց, սովորական էր, դժվար թե վանքը ծոլովորի մեջ լայն հետաքրքրություն շարժած չլիներ, կրթական-մշակութային դեր չկատարեր, և մարդիկ այն համարեին՝ հոչակավոր:

Կա վկայություն, որ ունեցել է ոխտավորների հովանոց, ալիսներ կացարաններ, սենյակներ, անասունների համար՝ ախոռներ, մարդաբներ:

Այս բոլորով հանդերձ մեզ չեն հասել ո՞չ այսուեղ գրված ձեռագրեր, ո՞չ էլ հիշատակություններ նրա կրթական, մտավոր գործունեության մասին: 18-րդ դարի վերջերին վանքը արդեն ավերակ վիճակում է եղել: Ըստ Դ. Խնձինյանի, «առհասարակ կործանեցաւ ի վերջին երկրաշարժութեան Երգնկայի»:

Ահա և Ամատյանի վկայությունը. «Քաղաքեն երեք ժամու հեռավորությամբ հիմնված է դաշտին արևմտյան հյուսիսային կողմն՝ լեռան ստորին զարդարակին վրա. շինվածքն հնացալ ու խարիսխալ, տաճարը թեև բարձրադիր ու ընդարձակ, այլ կիսավեր. ունի հանդես արտաքին դռան անշուր մարգագետին ու ծառաստան և ի հյուսիսակողմն պարսպին՝ խոյսանցալ մրգաստան, ազգուն ջրոյ ուրդ մի կը հոսի բակին մեջ և զորեն ոռոգելու գեթ մրգաստան ու մարգավայրն: Այս վանք, որ աղքատության մասին երկրորդն է, կորուսած է յուր բազմաթիվ այտերեն մեծագույն մասն, և մի փոքր մասն, զոր ունի այժմ արդյունավոր չէ առ ի չգոյե ջրո, բայց յուր օդն, ջուրն, տեսարանն ու դիրքն գովելի են, վասնզի կը տիրն Եկեղեցաց դաշտին արևմտյան մասին, ... Վանահայրն է հայ ընտանիք մը, որ վերջին մնացիրն է հիշյալ գրուի հայ բնակության»<sup>69</sup>:

Վանքի անվան Միավոր կոչվելու մասին Երգնկայում պատմվել է մի ավանդություն, որը մեջ է բերել S. Պալյանը: Այնքան էլ հիմնավոր չէ, բայց բանի որ Երգնկայի գավառի հման ավանդությունները տեղ չեն գտել անգամ Ս. Ղանալանյանի արժեքավոր «Ավանդապատում» գրքում, ավելորդ

<sup>68</sup> «Համելս ամսօրա», 1950, Բունվար—մարտ, էջ 40:

<sup>69</sup> «Սիրեկան մամուլ», 1887, էջ 52:

չենք համարում մեջ բերել այստեղ. «Այս վանքի հիմնարկության ժամանակի մասին,—գրում է Պալյանը,—ժողովրդական ավանդությունը կըսէ թէ երբ ս. Գրիգոր Լուսավորիչ Կևարիայն ս. Կարապետի մասունքը կրերեր ջորիով, կհասնի Երզնկացի Զովստակ Հայրապետի վանքի մոտն ի Թիլն ավան, որ ժողովրդյան հետ խորի բռնված պահուն, շորին վրայի մասունքով կկորսվի: Անմիջապես փնտրելու կերպեն և կգումնեն այս վանքին տեղվուց վրա մենավոր պառկած: Այս դեպքին վրա Լուսավորիչը կհրամայեցինել այս վանքը, և կանվանե զայն Միավոր ս. Կարապետ: Սրբույն մատունքի կոտոր մալ հոն կդնեն, որ կմնա, կըսեն, մինչև ցարդ»<sup>70</sup>:

Պալյանը որոշ տեղեկություններ էլ տալիս է վանքի ընդհանուր վիճակի մասին: Նա գրում է. «Վանքի տաճարը փոքր և քարուկիր շինված պարզ չենք մ է, առանց թվականի և արձանագրության, վանքի մյուս շենքերն ալ խարխուր վիճակ մը ունին: Դորսն ունի նաև սեփական պարտեզ մը և 12 տափարի չափ ալ կշակելի հողեր: Վանուց մատուկարարությունը և արտուրեից մշակությունը ժամանակին աշխարհական հոգաբարձուի մը հանձննված էր, իսկ այժմ ինչպես կմատակարարվի՝ որոշ տեղեկություն մը չունին»<sup>71</sup>:

Այլ աղբյուրներից էլ իմանում ենք, որ 19-րդ դարի ընթացքում Ս. Կիրակոսի վանքը պատկանել է երզնկացի Թորոսյանների ընտանիքին, որը որդուց որդի ժառանգել է, թեև մեծ արյունք չի բերել:

Այս է մեր իմացածը Սուրբ Կարապետի վանքի մասին: Մխալված չենք լինի, եթե ասենք, որ իսկապես գործ ունենք շատ հին մի սրբատեղիի հետ, որը դարեր առաջ հիմնովին կործանվել է, և մարդիկ նրա տեղը կառուցել են նորը:

(Ծարունակելի)

<sup>70</sup> «Բյուզանդիոն», 1902, թիվ 1614:

<sup>71</sup> Նույն տեղում:

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ Ժ—ԺԲ ԴԱՐԵՐՈՒՄ  
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Սելջուկ-թուրքական վայրագ ցեղերը ԺԱ. դարի սկզբին դուրս գալով Կենտրոնական Ասիայից, արշավեցին դեպի արևմտսթ, ամբողջ ճամփին գրավելով Երկրներ, հասան Հայաստան և Մերձավոր Արևելյան երկրներ։ Այս թուրքերից ոմանք ձեռք բերեցին Առյանսկ Բաղդադի և Կամիրեկ խալիֆաթներում զինվորական կարևոր պաշտոններ և մեծ դիրքեր, այն աստիճան, որ Առյանսկ խալիֆաները կորցրել էին իրենց խկական իշխանությունը և խաղալիք դարձել սելջուկ-թուրքերի ձեռքին։

Մրանք անգործ և թալանող մարդիկ էին, որոնք անօթորեն կողոպսեցին ոչ միայն հասարակ ժողովրդին, այլ նաև Կամիրեկի արքունի մեծափառամ պալատի անթիվ և անհամար հարատությունները (բյորեղներ, ոսկիներ, գորգեր, զարդեր և միջինների արժեք ունեցող թանկագին գանձեր)։ Մարդկային մշակույթի պատմության մեծ վճառ պատճառելով, կողոպսեց և առ հավելու փշացալ նաև Կամիրեկի արարական 120,000 մագաղաթյա ձեռագրերի մատենադարանը, գորերի միջոնով վառելով, իսկ կաշյա կազմից էլ կոշիկներ կարել տալով<sup>1</sup>։

Երկրում տիրեց սաստիկ սովոր մի շրջան, որին հետևեց մի ուժեղ երկրաշարժ, ապա տեղի ունեցավ ժամանակակի համաճարակ։ Բոլոր պատկանած անհետները շատ մեծ վճառ հասցրին Եգիպտոսի տնտեսության, որ պետք է ասել այն հասավ քայլայման դուրք։ Միայն Կամիրեկում մահացան հարյուր հազարից ավելի ամենինք, իսկ ամբողջ Երկրում՝ մի քանի հարյուր հազար շընչից ավելի։ Երկրում սովոր այն աստիճանի հասավ, որ մարդիկ քաղցից դըրդված և մահից վախենալով սկսեցին Առյանսկ կենդանի մարդիկ մորթել և ուտել։ Կամիրեկի շոկայում վաճառվում էր Առյանսկ մարդկային միւ<sup>2</sup>։ Եգիպտոսում սովոր տևեց յոթ տարի։ Վերշապես 1073 թվականը հանդիսացավ առաս բերքի տարի և բնակիչները նոր սկսեցին շունչ քաշել։ Ժողովորդը, խալիֆայի գլխավորությամբ, յոթ տարի գրեթե սոված էր մնացել։ Նոյն թվին թշնամիները սպանել տվեցին արար Վեզիրին, որին հաշորդեցին թուրք վեզիրներ մեկը մյուսի հետևից։

<sup>1</sup> Գ. Յովհաննեսեան, Եգիպտոսի պատմութիւնը սկիզբէն մինչև մար օրերը, Գամիրէ, 1987, էջ 113—115։

<sup>2</sup> Նոյն տևողում, էջ 119։

Այս խառնակ ժամանակներում Եգիպտոսի անվանական տերը՝ խեղացած Էլ-Մուսթանջիր խալիֆան, իր մոտ հրավիրել տվեց Աքբայից (Սիրիա) անվանի կառավարից Բենդր Էլ-Ջեմալի Էլ-Արմանին (հայազգի ծագումով), որ ժամանակին եղած էր արար իշխան Զեմալ Էղ-Դին Իբրա-Ամմարի ճորտը: Բենդր Էլ-Ջեմալին աչքի ընկապ սիրիական պատերազմի ընթացքում, երկու անգամ հշանակվեց Դամասկոսի կառավարից, հաջող կերպով կովելով թուրքերի դեմ, որի հետևանքով նա հանդիսացավ Սիրիայում ամենահզոր իշխանությունն ունեցող զորավարը:

Եգիպտոսում տիրող Ֆաթիմյան արարական հարատույժունը տևեց ուղիղ երկու դար՝ 969—1171 թթ.: Այս ժամանակաշրջանում արդին քրիստոնյա հայերի մի շարք համայնքներ կային Եգիպտոսում: Էլ-Ազիզ խալիֆայի (975—996) ժամանակվանից մեր ձեռքն է հասել հայկական մի խաչքար, որ հստակ կերպով կրում է 981 թվականը: Քարակերտ սույն խաչքարն ունի հազար տարվանից ավելի հնություն: Ծրջանակում փորձագրված է հայկական մի խաչ, որի չորս անկյուններում գրված է հետևյալը «ՅՍ. ՆԼ. ԹՐ. ՀՑ.», որ հշանակում է «Յիսուս ՆԼ. (981) թուրքութեան հայոց»: Այս խիստ արժեքավոր խաչքարը լուսանկարը տվել են Թորգում Եպիսկոպոս Գուշականը<sup>3</sup> և Արշակ Ալպոյանան<sup>4</sup> բանասերներն իրենց գրքերում: Խնչակն առաջին հեղինակն է հշում շատ իրավամբ<sup>5</sup>, խաչքարերը զետեղվում են անցյալու և կեղեցիներում կամ այլ աղոթավայրերում: Կամիրենու հայտնաբերված այդ հազարամյա քարը գալիս է ապացուցելու, որ 981 թվականին արդեն կամիրենի հայերն ունեցել են իրենց և կեղեցին, մի քան, որ ցուց է տալիս հստակորեն, որ այդ ժամանակ նորահաստատ այդ քաղաքում եղած է կազմակերպված և բավականին հոծ հայկական մի համայնք (նվազագույնը մի քանի հարյուր հոգուց բաղկացած), որ կարիքն է զգացել ունեալով իր սեփական աղոթավայրը:

981 թ. Վերօնիշչյալ խաչքարից բացի, այդ երկու բանասերներն իրենց գրքում ևս տալիս են նաև մի այլ խաչքարի լուսանկարը, որ դժբախտաբար թվական չի կրում, այլ վրան գրված է միայն հետևյալ արձանագրույթունը. «ՅՍ. ՔՍ. ԱԾ.» (Յիսուս Քրիստոս Տէր Աստուած): Երկուսն էլ գրտնում են, որ սա էլ ժ դարի հնություն ունի հավանաբար, անշուշտ և կատար առնելով մեսրոպատառ երկաթագիր տառերի և հատկանի խաչերի շատ նմանությունը:

Այս երկրորդ հանգամանքից էլ պարզվում է մի այլ քան, այդ այն է, որ Ժ դարի վերջերին Կամիրենի հայերն ունեցել են մեկ կամ մեկից ավելի իրենց և կեղեցիները, ցուց տալով անշուշտ կազմակերպվող և աճող մի գաղթօջախի փաստացի առկայությունն Եգիպտոսի նորաստեղծ մայրաքաղաքում: Խնչակն հայտնի է, Էլ-Մուհա խալիֆան մուտք գործելով Եգիպտոս, իին մայրաքաղաքից՝ Ֆուստանից ոչ հեռու հիմնադրեց Կամիրեն, 969 թ. հուլիսի 6-ին, այդ օրվանից դարձավ Ֆաթիմյան հարատույժան նոր մայրաքաղաքը: Հատ երկույթին Ֆուստանում բնակվող հայերն էլ տեղափոխվեցին նոր քաղաքամայրը, համախմբվեցին և կարիք զգալով ազգային մի կենտրոնի և և կեղեցական հաստատության, 981 թ. հիմնեցին նորա-

<sup>3</sup> Թ(որգում) Ե(եպիսկոպոս) Գ(ուշակեան), Եգիպտոսի հայոց հին և արդի և կեղեցիները, Գամիրէ, 1927, էջ 10:

<sup>4</sup> Արշակ Ալպոյանան, Արարական Միացեալ հանրապետութեան Եգիպտոսի նախան-

<sup>5</sup> Թ. Գուշակեան, նոյն տեղում, էջ 11—12:

ստեղծ բնակավայրում իրենց անդրանիկ եկեղեցին: Ահա այդ օրվանից մինչև այսօր Կահիրեկի հայերն ունեցել են իրենց մեկ կամ մեկից ավելի եկեղեցիներն անհափան կերպով, անշուշտ ենթարկվելով շատ հաճախ երկրի քաղաքական անցուղարձերի վերիվայրումներին: Եգիպտոսի թեմը միշտ ենթակա է եղած անցյալում Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Սրաբ և օտարազգի գրողներն ու պատմիչները հիշատակում են հայազգի զորականների և պետական պաշտոնյանների անունները, ցույց տալով, որ շարունակարար հայեր են ապրել Եգիպտոսում Հ—Ժ դարերում և դրանց քանակը գնալով ավելանում էր, Հայաստանից բերված գերիների հաշվին, նաև կամավոր կերպով Եգիպտոս եկող հայ առևտրականների ու արհեստավորների միջոցով, որոնք սեղով-քաթարների ասպատակություններից փախչելով հեռանում էին հայենիցից և սփռվում աշխարհով մեկ: Սրաբ միջնադարյան պատմիչներ՝ Իրն Խալիֆանը, Իրն Խալդունն և ուրիշները, ինչպես նաև ժամանակակից հայ պատմաբաններ՝ Ս. Ալպոյանը, Գ. Մըրբյանն և ուրիշները, տալիս են քազմաթիվ հայերի անուններ, որոնք Միջնադարում ապրել և գործել են Եգիպտոսում:

Հայերի հոսանքը դեպի Եգիպտոս մեծ բնույթ է ստանում հատկապես Ֆարիմյան խալիֆաների ժամանակ և մասնավորապես հայազգի այն վեցիների օրով, երբ այս վերջիններն արտօնում են և մեծ դյուրություններ տալիս իրենց ազգակիցներին գալու և հաստատվելու Եգիպտոսում: Հայերի մի հոսանք Սիրիայից եկել է Կահիրե Ֆարիմյան հշանակոր վեցիր՝ ծագումով հայազգի Բեյր Էլ-Ջեմալիի հետ 1074 թ., որպես Արա անձնագնդի անդամները: Ծովի ճամփով սիրիական հավահանգիստ Աքբայից դեպի եգիպտական Դամիետ հավահանգիստը գալու համար Բեյրին հարկավոր է եղած հարյուր առագաստանավ: Պատմիչները գրում են, որ նա հետո բերեց իր անձնական զորագունդը, որ քաղացած էր շուրջ 3.000 զստանելի զորականներից, որոնց մեկ մասն խլամացած և քրիստոնյա հայեր էին: Սրանց վրա հենվելով, Բեյրը մեծ աղետից փրկեց Եգիպտոսը, միևնուն ժամանակ շուրջ մեկ դար պահպանելով Ֆարիմյան հարատությունը կործանումից: Ասպում է Յովենիսկ, որ Բեյրի հետ Եգիպտոս եկած քրիստոնյա հայ զորքերի հետ եղած է նաև հայ քրիստոնյա մի հոգևորական, անշուշտ Արքանց հոգևոր ծեսերը կատարելու հպատակով:

ԺԵ դարի արժանահաւատ արաբ պատմիչ Մաքրիզին գրում է, որ «Բեյր Էլ-Ջեմալին եկավ Աքբայից, սպանեց պետության ավագանին, իրեն համար քանակներ և զորախմբեր կազմեց հայերից և այդ ժամանակվանից քանակին մեծ մասը հայերից քաղլացավ», ապա մի քանի էջ հետո գրում է հետևյալը, տեղեկություն քաղելով մի ուրիշ արաբ պատմիչից՝ Իրն Արդ Էզ-Զահիրից. «... Այժմ Հյուսիսին կոչված քաղամասը բնակավայրն էր հեծյալ և հետևակ հայ զինվորներին, մի թաղամաս՝ որտեղ հավաքվում էին 7.000-ի մոտ կամ ավելի անձինք և որտեղ կային մի քանի շուկաներ»<sup>6</sup>:

Ահա պատեղից է, որ պատմաբան Հ. Թուրշյանն ենթադրում է, որ ծագումով հայազգի Բեյր վեցիրի «շուրջ հավաքված էր կրոնափոխ չեղած շուրջ յոթ հազար հայ զորք»<sup>7</sup>, մի քանի որ թվում է, թե չափազանցություն պետք է լինի: Եթե Էլ-Զահիրի և Էլ-Մաքրիզի բերած փաստը՝ որ Կահիրեի

<sup>6</sup> Գերգ Մըրբյան, Ականանոր հազեր Եգիպտոսի մեջ, Գահիրէ, 1947, էջ 28:

<sup>7</sup> Հ. Թուրշյան, XI և XIII դարերի Եգիպտահայ գաղութի պատմությունից, տես «Արևելագիտական ժողովածու», II, 1964, Երևան, էջ 304:

Հյուսելինիք կոչված թաղամասում որպես բանակատեղի ապրում էին 7.000 վատահելի զորք, ճիշտ էր, ապա սրանք ունեին «Ել-ռուսի» ծագում, այսինքն սրանց մեջ կային հայեր, բյուզանդացիներ, վրացիներ, չերքեզներ և կովկասյան այլ ազգությունների ներկայացողիցներ: Ուրեմն չէր կառող պատահել, որ բոլորը հայեր լինեին հարյուր տոկոսով: Ենթարդ՝ Բեդրի հայազգի զորքից մի մասը քրիստոնյա էր, իսկ մնացածը խալամացած հայեր, որով պարզվում է, որ քրիստոնյա հայ զորքի թիվը 7.000-ից շատ պակաս անոր է լինելու ամելիա: Թեպեսու փաստերի բացակայության հետևանքով այժմ անկարելի է ճշգրիտ լուծել այս հարցը, սակայն սկսոք է ենթադրել միայն, որ Բեդրի 7.000 շնչից բաղկացած վատահելի զորագնդի մեծ մասը հայեր էին, «իր իսկ ձեռքով ընտրված զինվորներ»<sup>8</sup>:

Սուտավոր հաշվումներով ենթադրվում է, որ Հյուսելինիք թաղամասի Բեդրի զորքից մոտավորապես հազարը հայ քրիստոնյաներ էին, իսկ հազարն էլ՝ խալամացած հայեր: Ինքը՝ Բեդրի Ել-Չեմալին, Եգիպտոսի անվանի մեծ վեզիրն ու զորապետը, թեպեսու ծագումով հայ էր, սակայն կրոնով խալամացած, որով չէր կարող իր զորքը կազմած լինելու քրիստոնյաներից միայն, այս էլ ճիշտ այն ժամանակ երբ Եվրոպայից դեպի Մերձավոր Արևելք էին շարժվում Խաչակրաց արշավանքները, որոնց հետևանքով լարված վիճակ և սուր պայքար էր առաջացել խալամի և քրիստոնյայի միջև: Խալամացած հայ զորքի մեջ Բեդրի գտնում էր իր ամենավաստահելի տարրն ու հենարանը, իր հույսն ու ապավենը, որի վրա հենած հայ կարողացավ իր երկարատև իշխանությունն ապահով կերպով տարածել սկզբում Սիրիայում, ապա շուրջ բասե տարի Եգիպտոսում: Հայազգի վեզիրի այս զորքը կրոնափոխ էր եղած կամ բռնի ուժով, և կամ արդեն մի բանի սկզբունք ապրած լինելով Սիրիայում և հարևան արաբական երկրներում, քաղաքական ճրացումների հետևանքով:

Ֆրանսիացի պատմաբան Փ. դը Էնոն գրելով Բեդրի մասին ասում է, որ նա օրվա Մուսանզիր խալիֆային ապահովեց Անրիին հանդարտությունը, Եգիպտոսին շնորհեց կարգ, կանոն և խաղաղություն, իսկ գյուղատնտեսության էլ Անրին և արտաքին առևտուրի համար ապահովություն: Իսկ գեներալիսիմուս դառնալուց հետո էլ Բեդրը վերագրավեց Փլունիկիան (այժմ Սիրիան և Լիբանանը) և այն միացրեց Ֆայամիյան հայտության:

Հայաստանի ապատակությունները, Անիի ավերումը, սկզբուկների հրոսակային արշավանքները պատճառ դարձան, որ Հայաստանի ողջ մնացած բնակչության զգալի մասը հեռանա հայրենիքից դեպի օտար ափերը: Այսպես 1054 թ. սկզբունքների երրորդ արշավանքը, որին գիշավոյրով էր անօրեն Տուրքի բնիկ հրոսակային բանակը, ուրիշ տակ առնելով մեր հայրենի երկիրը, ավերեց բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ: Տասը տարի հետո, սուլան Ալփ-Արսանի ղեկավարությամբ կատարված սելջուկյան չորրորդ արշավանքը և արյուն, արցումք և ավել ափոնց ամենուրեք՝ Հայաստանում, Վրաստանում և Սղվանից աշխարհում: Մոտ վեց ամսվա երկարատև պաշարություն հետո 1065 թ. օգոստոսին ընկալ մայրաքաղաք Անին անփառ թշնամու կրնկի տակ, ենթարկվեց կողոպուտի և ավերվեց: Ան ու սարսափ, մաս ու ավել տարածող սելջուկյան հաջորդական այս արշավանքները, պատճառ եղան, որ կենդանի մնացած շատ մարդիկ, ամբողջ

<sup>8</sup> Գ. Մարտիրոս, Յուղ տեղում, էջ 28:

<sup>9</sup> P. de Hénaut, Manuel d'Histoire de l'Egypte, de Ménès à nos jours, Le Caire, 1923, p. 229.

ընտանիքներով և մեծ խմբերով, Հայաստանից հեռանան դեպի հարևան ավելի ապահով երկրներ, ի թիվս որոնց նաև դեպի Սիրիա, Եգիպտոս և արաբական այլ երկրներ, քանի որ արաբներն ավելի լավ ընդունելություն էին ցուց տալիս, քան քրիստոնյա բուզանդացիները: Անջուկներն «ավերում էին իրենց քաղաքներն ու գորողերը, իսկ բնակչությանը աշխատում էին ոչնչացնել, որ երկիրը գրկի դիմադրական ուժից»<sup>10</sup>: Ալպոյանցանը գտնում էր, որ «ՓԱ դարուն, իսկապես նայ ցեղը զանգվածորեն դեպի արևմտուր կշարժվեր»<sup>11</sup>:

Անմ սելջուկյան արշավանքներից փախչող այս գաղյական հայերից էր, որ Բեղրը համարում էր իր վատահելի անձնական զորագունդը: Այս գաղյականները դեռ նոր էին ծամանում արաբական այդ երկրները, որով դեռ մաքուր հայեր էին լեզվով և դպրանանքով, սակայն ի խնդիր գոյության պայքարի, տղամարդիկ զինվորագրվում էին Բեղրի բանակում: Բեղրը շատ խելացի, փորձված ու խորամանկ մարդ լինելուն, լավ գիտեր իր ազգակիցների արժանիքները, հատկապես մարտունակությունն ու վատահելիությունը, որով շահագործելով նրանց նյութական անձուկ վիճակը, վերցնում էր իր բանակում, կազմելով այսպես վատահելի տարրերից բաղկացած մի զորագունդ:

Սրաբագետ Գ. Մըսրյանը գրում է, որ Բեղր Էլ-Զեմալին խիստ բարյացակամ վերաբերում է ցուց տվել եգիպտահայ գաղութի համեմեա, որով հետև նրա օրով բազմաթիվ հայկական վանքեր ու եկեղեցիներ են կառուցվել, անշուշտ քրիստոնյա նայ համայնքին համար: Այս ժամանակաշրջանում եգիպտահայերն ունեցել են բարգավաճ և բարօր կյանք<sup>12</sup>: Մարդիկին գրում է, որ երբ Բեղրն եկել է Կամիրե, քաղաքն ունեցել է ավերակույտ: «Ուստի նա արտօնություն տվեց ասքարիներին, մելեհիներին, հայերին և շենք շինելու կարողություն ունեցողներին, որ Կամիրենում իրենց ուղած շենքը կառուցեն, օգտագործելով Մարի Ֆոստատում դատարկ մնացած այն տեղերը, որոնց տերերը մեռած էին»<sup>13</sup>:

Այս հայերն այն գաղյականներն էին, որոնք նոր էին եկած հայրենիքից և զբաղվում էին այն ամեն ինչով, որ իրենց ձեռքից էր գալիս: Նրանց մեջ կային գոյուացիներ և քաղաքացիներ, վերնախավի և այլ դասակարգի պատկանողներ, առևտրականներ և արհեստավորներ, շինարարներ և նույնիկ արվեստագետներ:

Որու հայտնի պատմաբան Բ. Ա. Դուրակը գրում է, որ Եգիպտոսն էլ գրավում էր հայերին, որոնք, ինչպես հայտնի էր, ԺՄ. դարի վերջերին այդտեղ ունեին հայկական հայտնի գաղութ, վայելելով Բեղր Էլ-Զեմալի հովանավորությունը: Էլ-Հաֆիզ Խալիֆայի օրքը նրանք ունեին նույնիսկ իրենց պատրիարքը, որ որոշ ազդեցություն ուներ երկրի արքայի մոտ<sup>14</sup>: Լատին պատմաբան Եվլերիոս Մենոնիոսը, խոսելով Բեղրի մասին, գրում է ԺԸ դարի սկզբներին: «Իր բանակում մեծ թվով հայեր ուներ, և նրանց հնարավորությունները, ինչպես իր ազնվականներինը, նաև մեծապես օգտագործում

<sup>10</sup> Հայ ժողովրդի պատմություն (Խելմակային կոլեկտիվ), Առաջին մաս, Երևան, 1951, էջ 189:

<sup>11</sup> Ա. Ալպոյան, Հայաստանութեան տարածման շրջանակը, տես «Էջմիածին» ամսագիր, Երևան, 1947, մայիս-մայիս, էջ 23:

<sup>12</sup> Գ. Մըսրյան, նոյն տեղում, էջ 29:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 29—30:

<sup>14</sup> Հ. Թուրշյան, նոյն տեղում, էջ 303:

էր»<sup>15</sup>: Պատմաբան Ն. Աղազարյանը, գրելով հայագագի վեզիրի մասին, ասում է, որ խալիֆան Բեղրին շնորհի է Բանակների Խշխան (Էմիր Էլ-Զուլուշ) տիտղոսը, նրան տալով երկրի քաղաքական և ֆինանսական բացարձակ և լրիվ իշխանությունը: «Բեղրը, վաճառականությունն և արվեստները ծաղկեցնելու համար հազարավոր հայ գաղթականներ հատկապես Եգիպտոս թերեւ տվեց: Բեղր Էլ-Զեմալին աջակից գտնված է Եգիպտոսի մեջ հայ վանքերի և եկեղեցների շինության և պահպանումին»<sup>16</sup>: Հ. Թոփովյանն այն միտքն է հայտնել, որ հայերի հոսանքը դեպի Եգիպտոս ոճգին թափ է ստացել Ժ և ԺԱ դարերում, փախչելով Միջին Ասիական քոչվորների արշավանքներից<sup>17</sup>: Ֆրանսիացի ականավոր պատմաբան և արարագետ Գաստոն Վիետը գտնում է, որ այս շրջանում (ԺԱ դարում) Եգիպտոսի պաշտպանությունը վատահված է եղել հայերին<sup>18</sup>, ապա խոսում է այն մասին, որ Բեղրը ոչնչացնելուց հետո Քութամա ցեղի աֆրիկացիներին, թորք և սևամորթ զորքերին, Կահիրեն ու բովանդակ երկիրը կառավարեց իր հայ զորականների միջոցով<sup>19</sup>:

Եվ իրոք հայերի հոսանքը դեպի Եգիպտոս մեծ բնույթ է ստանում հատկապես ֆաթիմյան խալիֆաների ժամանակ և մասնավորապես հայագագի այն վեզիրների օրով, 1074 թ. հետո, եթե այս վերջինները արտոնում և մեծ դյուրություններ են տալիս իրենց ազգակիցներին գալու և հաստատվելու Եգիպտոսում: Այս վերջինները տեսնելով իրենց հայունիքի՝ Հայաստանի անապահով և ոչ-խաղաղ վիճակը, տեսնեական ոչ-բրոր դրությունը, և փնտրելով այլ ապահով վայրեր, որտեղ կարողանային ֆիզիկապես գործությունը պահպանել և փախչել իրնենց երկրում տիրող վատթար քաղաքական և տնտեսական կացությունից, անվերջ հոսանքներով թողնում ու փախչում էին Հայաստանից ինչպիսի Եգիպտոս, Սիրիա և բազմաթիվ այլ երկրներ: ԺԱ դարի վերջում Եգիպտահայ գաղութի թիվը հասել է շուրջ 30 հազարի, որոնք ունեցել են մոտ երեսում քրիստոնյա հայկական վանքեր և եկեղեցներ: Ֆաթիմյանների օրով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Վկայասերը 1075 թ. այցելել է Եգիպտոս և մեծ պատիվներով ընդունվել երկրի խալիֆայի կողմից: Հայերի բազմացած լինելում՝ Վկայասերն անհրաժեշտ է գտնում մի առաջնորդ հշանակելի այդ գաղութի համար, որպեսզի նա առավել ևս կազմակերպի հայկական համայնքն և տիրություն անի օրից-օր աճող ու բազմացող այդ գաղութին: Վկայասերը տեսնելով հայկական գաղութի աճն և կարևորությունը, որպես առաջնորդ՝ եախսկոպոս է ձեռնադրում իր եղբարորդում՝ Գրիգորիսին, և ստեղծում Եգիպտոսի հայոց առաջնորդական Աթոռը, Կահիրեն լինելով աթոռանիստ քաղաք: Աղազարյան իր մի հոդվածում գտնում է, որ Եգիպտական կառավարությունը հայերի առաջնորդական այդ Աթոռը ճանաչում է հայտապես որպես կաթո-

<sup>15</sup> Eusebius Renaudotius, Historia Alexandrinorum Jacobitarum, Parisiis, MDCCXII (1713), p. 460.

<sup>16</sup> Նազարե Մ. Աղազարյան, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գահիրէ, 1911, էջ 5:

<sup>17</sup> Հ. Թոփովյան, Հայ-Եգիպտական կապեր, տես «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1959, նոյեմբեր, թիվ 11, էջ 38:

<sup>18</sup> Gaston Wiet, L'Egypte musulmane de la conquête arabe à la conquête ottomane, տեսնել Précis de l'Histoire d'Egypte. Le Caire, 1932, p. 173.

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 187:

դիկոսական, իսկ ապա՝ որպես պատրիարքական Աթոռ<sup>20</sup>: Այդ օրվանից մինչև այսօր Եգիպտոսի կառավարությունն Եգիպտահայերի առաջնորդությունը ճանաչում է որպես Պատրիարքություն, իսկ առաջնորդարանն էլ որպես պատրիարքարան (Բատրիքիյա Էլ-Արման կամ Բատիքախանա Էլ-Արման՝ այսինքն Հայոց Պատրիարքություն կամ Հայոց Պատրիարքարան), տաղով նրան որոշ ներքին իրավունքներ և առանձնաշնորհումներ:

ԺԱ.—ԺԲ դարերի պատմից Մատթեոս Ուոհայեցին հետևյալն է գրում վերոհիշյալի մասին.

«Եւ էր բուականութեան Հայոց ՇիԳ (1075 թ.), և ապա զկնի այս դիկ գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպոլիս և անդուս ի Հռոմ. և եկեալ յԵգիպտոս՝ շրջեցաւ ընդ ամապատս ամենայն առաջն սրբոց հարցն և կատարեաց զամենայն փափաքումն սրտին իրոյ. և հաստատեաց անդէն իր զայտոն հայրապետութեանն և կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցուց. և բազում փառք և մեծութիւն ընկապաւ Տէր Գրիգորիս ի թագաւորէն Եգիպտոսի առանց քան ի թագաւորէն Հռոմոց: Եւ բազում զօրք (մարդիկ է ուզում ասել—Ն. Տ. Մ.) ժողովեցան յԵգիպտոս իրուն երեսուն հազարաց. և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթողիկոս զՏէր Գրիգոր՝ զքուրորդին իր՝ և ինքն եկեալ գալր յաշխարհն Հայոց, վասն զի դեռ և կենդանի կայր մայրն նորա»<sup>21</sup>:

Սպա Խոսկով 1086 թվականի մասին Ուոհայեցին գրում է հետևյալը Եգիպտոսի հայոց կաթողիկոսության վերաբերյալ.

«Աստանոր սկիզբն եղև կատարելոյ տեսլեան սրբոյն Սահմակայ Պարթևի, զոր ասացն ջնջել ուսկեղիր կարգացն և գծագրել սևադեղ թանաքով. վասնգի ահա ի ժամանակս այսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տէր Վահրամ յԵգիպտոս, և Տէր Թէոդորոս ի Հռնին, և Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի, և Տէր Պողոս ի Մարաշ քաղաքն. և սուրա իրաքանչիր ոք առնեին ձեռնադրութիւնս և օծանեին եպիսկոպոսուն և տային օրինութիւնս սուրբ ձիթոյն, և ի նոցանէ օրինեին քահանայք, և լիներ պատարագ և մկրտութիւն և պասկն կուսանաց: Եւ էր այս ամենայն սուր մեծ ի վերայ յԵկեղեցուց Աստուծոյ, վասն զի մի փարախն ոչխարաց ընդ չորս հոտապետութիւնս բաժանեցաւ, և գալր եղեն պահապանք հօտին Քրիստոսի»<sup>22</sup>:

Եւ մի բիշ հետո Ուոհայեցին գրում է Եգիպտոսում Հայկական կաթողիկոսական երկու Աթոռների մասին այսպէս.

«Յայսմ ժամանակին եղև ազգիս Հայոց կաթողիկոս վեց, երկու յԵգիպտոս, և չորս յամենայն աշխարհն Հայոց, որպէս յառաջն ասացաք»<sup>23</sup>:

Պատմական բուն Հայաստանից դուրս, հայկական գաղթաշխարհի ոչ մի երկրում, չի պատահել, որ բազմադարյան իր պատմության ընթացքուն Հայ յԵկեղեցին երկու առանձին կաթողիկոսներ ունենա: Եվ ահա Ուոհայեցին այս տողերով մի առեղծված է առաջ քաշում: Կարծում ենք, որ դրանք իսկականում կաթողիկոսական Աթոռներ չեն, որովհետև դրանց ոչ կարիքը կար, և ոչ Էլ անհրաժեշտությունն այդ գաղութում: Հատկապես որ մյուս հայ

<sup>20</sup> Ն. Մ. Աղազարմ, Դարերու գերեզմանը (Ակնարկ մը Եգիպտոսի պատմութեան վրայ), տեսանել Սուրբ Պարինեանի «Եգիպտահայ տարեցոյցը», Բ. տարի, Գամիրէ, 1915, էջ 34:

<sup>21</sup> Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 211:

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 229—230:

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 231,

պատմիչները չեն ցում այդ մասին: Ենթադրվում է, որ դրանք պարզապես առաջնորդական երկու Աթոռութեր էին, որոնք արարական իշխանության կողմից նաևաշլում էին որպես պատրիարքական Աթոռութեր: Արարածերն երբ գրավեցին Եգիպտոսը, Սուեզանորդիայում շատ վաղուց գոյություն ուներ ղափուի Եկեղեցու պատրիարքական Աթոռութեր: Մահմեդական արարածերը շիամկանալով առաջնորդական և պատրիարքական Աթոռութերի տարբերությունը, հայերի առաջնորդին էլ ընդունում էին որպես պատրիարք, ինչպես Եգիպտոսի բնիկ տարրի՝ ղափուների կրոնապետին:

Սակայն ինչո՞ւ հայերը պիտի ունենային երկու առաջնորդ: Շատ հավանաբար Միջնադարում Եգիպտոսի հայկական գաղութի աճման և մեծացման պատճառով հայերը կարիք են գցացել երկու առաջնորդի (մինչ Կահիրեաում, իսկ մյուսն էլ Սուեզանորդիայում կամ Վերին Եգիպտոսում), և կամ մի առաջնորդի և մի հայ էլ առաջնորդական փոխանորդի, ինչպիսին է պարագան ներկային այդ նոյն երկրում:

Գարտաշյանը տալիս է Եգիպտահայերի առաջնորդների ցուցակը<sup>24</sup>, որից վերցնում ենք առաջին երեքը, որոնք թվականի տեսակետից համընկնում են մեր ուսումնասիրության ժամանակաշրջանին, այսինքն ԺՄ—ԺԲ դարերին:

1. Գրիգորիս Արքեպիսկոպոս	1084 թվին
2. Անաստաս Արքեպիսկոպոս	1095 թվին
3. Անանիա Եպիսկոպոս	1140 թվին

Շատ պարզ է, որ վերոհիշյալ երկու դարերում Եգիպտահայերն ունեցել են ոչ միայն երեք առաջնորդ, այլ և շատ ավելի, սակայն դժբախտաբար պատմական ստուգ տվյալներ չեն պահպանվել հրանց մասին, և ոչ իսկ հրանց անունները: Սակայն այն փաստը միայն, որ աղբյուրները մեզ տալիս են երկու արքեպիսկոպոսի և մի եպիսկոպոսի անունները, սա ցոյց է տալիս, որ գտնե ԺՄ դարի 80-ական թվականներից մինչև ԺԲ դարի 40-ական թվականները Կահիրեաում հայկական գաղթօջախը հասել է այնպիսի բարգավաճ աստիճանի և կարևորության, որ կարիք է գցացվել ունենալու եպիսկոպոսական աստիճան ունեցող հոգևոր դեկապարների: Ինչպես նշվեց Վերևում, ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ երեք եպիսկոպոսներից բացի, ԺՄ—ԺԲ դարերում, գաղթօջախն ունեցել է այլ առաջնորդներ և առաջնորդական փոխանորդներ ևս, շատ հավանաբար վարդապետի կամ քահանայի աստիճանով, որոնց մասին դժբախտաբար լուս են սկզբանդրյուրները:

Այժմ տեսնենք, թե պատմական աղբյուրների ու արդի գրականության մեջ ի՞նչ հիշատակություններ կան այդ ժամանակաշրջանի Եգիպտահայոց առաջնորդների մասին:

Սույն գրում գրում է, որ ԺՄ դարի վեցերին Գրիգոր Վկայաւեր կաթողիկոսն այցելելով Եգիպտոս հատուկ եպիսկոպոս է ձեռնադրել հրանց համար<sup>25</sup>: Եգիպտոսի հայազգի վեզիր Բեղրը կատավարել է երկիրը 1074—1094 թթ.: Ալիշանը գտնում է, որ Վկայաւերն Եգիպտոս է այցելել 1075 թ. և իր քեռորդուն՝ 'Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրել Եգիպտահայերի համար 1076 թ<sup>26</sup>:

<sup>24</sup> Արտաշէ Գարտաշեան, Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Գահիրէ, 1943, էջ 175:

<sup>25</sup> Ն. Սույնաբարմ, Նորեկ Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գահիրէ, 1911, էջ 4:

<sup>26</sup> Ղ. Ալիշան, Ծնորհալի և պարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 502:

Նույն գրքում, մի այլ տեղում, հեղինակը գրում է, որ Վկայասերը նույն անձին՝ այժմ հունական Գրիգորիս անունով, Եգիպտոսի և Պաղեստինի հայերի առաջնորդ է հշանակել արքեպիսկոպոսի աստիճանով, «զոր ոմանք և պատրիարք, և կաթողիկոս կանվանեն»<sup>27</sup>: Իսկ մի քանի էջ հետո Ալիշանը հիշատակում է Աղեքսանդրիայի ղատի պատրիարք Կյուրելի 1086 թ. գումարած ժողովի մասին, որտեղ քննարկվել է հայերի և ղատիների միջև եղած վեճերը ղատարեցնելու հարցը: Այս ժողովին մասնակցել է հայերի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսը<sup>28</sup>:

Անգլիացի հեղինակ Բաթլըրը՝ Արու Սալինի ձեռագրի անգլերեն թարգմանված գրքի ստոլատակի մի ծանոթագրության մեջ գրում է, որ Եգիպտոսի հայերի առաջնուն «պատրիարքը կամ կաթողիկոսը» եղել է Գրիգորիսը, որ Ժ. դարի վերջերին ձեռնադրվել է Աղեքսանդրիայում, իր քեռու՝ Գրիգոր Բ կաթողիկոսի կողմից<sup>29</sup>: Անայսանը հիշում է Եգիպտոսի հայոց առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսին (հորեղբայրը Ներսես Շնորհալո), որին կաթողիկոս է օծել իր քեռին՝ Գրիգոր Վկայասերը 1074 թ.: Առաջնորդ Գրիգորիսը հանդիսացել է իր ժամանակի հայունի մտավորականներից մեկը: 1110 թ. Եգիպտոսում թարգմանել է Ունտիրիոսի Վարքը և Վկայասերի ու Կիրակոսի հետ կարգավորել է Շաչղը<sup>30</sup>:

ԺԷ—ԺԸ դդ. լատին պատմաբան Եվլեքիոս Ռենոդիոսը Աղեքսանդրիայի Հակոբիկյան պատրիարքների պատմության իր գրքում գրում է, որ 1117 թ. Կամիրենի ղատի Սանհուսոս եպիսկոպոսի հուղարկավորության մասնակցել է նաև «Գրիգորիս հայոց պատրիարքը»<sup>31</sup>: ԺԲ դարի պատմիչ Սամվել Անեցին, խուելով 1082 թ. մասին, Գրիգորիսին կաթողիկոս է դարձրել այսպես. «Ո ՇԼ. թոփին ... ի Դ (4) բաժանեցաւ հայոց կաթողիկոսութիմ ... տէր Գրիգորիս յԵգիպտոս...»<sup>32</sup>: Իսկ Մատթեոս Ունիայցին էլ, ինչպես գրեցինք հայորդ էշերում, նշում է, որ 1075 թ. Վկայասերը գալիս է Եգիպտոս և քրոջ որդուն՝ Տեր Գրիգորիսին ձեռնադրում կաթողիկոս:

Վերոհիշյալից երևում է, որ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի (1066—1105 թթ.) քրոջ որդին՝ Գրիգորիս արքեպիսկոպոսը Եգիպտոսի հայոց առաջնորդ (ոմանք պատրիարք և ուրիշներ էլ կաթողիկոս են անվանում—Ն. Տ. Մ.) է ընտրվել շատ հավանարար 1075 թ. և այդ պաշտոնի վրա է մնացել գոնե մինչև 1117 թ., եթե ոչ ավելի, որեմն 42 տարուց ավելի մի ժամանակաշրջան:

Պատմական աղբյուրները նշում են, որ Բեդրի հետո Եգիպտոս է ժամանել մի հայ հոգևորական արդյոք նաև Գրիգորիսն է եղած, թե ոչ մի այլ անձ: Պարզ չէ: Աղբյուրները լուս են այս մասին: Մաքրիզին սակայն տալիս է մի այլ տեղեկություն Գրիգորիսի մասին: Այս վերջնույն եղբայրը՝ Վահրամ Պամբակունին հետագայում դառնում է Եգիպտոսի վեզիր (1135—1137 թթ.): Արա մրցակից Ռադվան Բիջ Վալախին երբ բռնագրավում է

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>29</sup> The Churches and monasteries of Egypt and some neighbouring countries, attributed to Abu Salih, the Armenian, Oxford, 1895, p. 3.

<sup>30</sup> Հ. Աճառյան, Հայոց ամենամեծների բարձրանակ, հասոր Ա, Երևան, 1942, էջ 555:

<sup>31</sup> Eusebius Renaudotius, Historia Patriarcherum..., p. 491.

<sup>32</sup> Սամոնէ բահանայի Անեցոյ, Հաւաքմոնք ի գրոց պատմաբաց, Վաղարշապատ, 1893, էջ 118:

վեգիրության պաշտոնն և Վանրամ սովորված փախչում է Վերին Եղիացուու, մոլուսնի ամրուք սրբադիմելով Կամիրենու թաղված Գրիգորիս Արքապիսկոպոսի գերեզմանը բարուրան է անում այն<sup>33</sup>:

Բերդի պատմական անցյալի հետ են առնչվում նաև մի քանի ուազմական ընդհարություն՝ XIX դարի սկզբի ոուս-պարսկական պատերազմի ժամանակ:

Ս. Դ. պատերազմում ոուսական զորքերին մեծ աջակցություն էր ցոյց տվել Կոսապատ գյուղից Մելիք Վանի հարյուրապետը, որի Խարիսոնով 1805 թ. հունիսին ոուսական զորքերը Կարյագինի հրամանատարությամբ հիշու ընտրեցին մարտավայր՝ Ղարա-Ղաչի Բարս գերեզմանոցի մոտ (այժմ՝ Ասկերանի և Սղոդամի միջև՝ Փանակ խանի տոմանական գերեզմանոցը) և խապատ ոչնչացրին Փիր-հոյուի խանի գերակշռող ուժերին: Խակ երբ պարսից զրահիրամանատարին օգնության եկավ Արաս-Միրզայի 30 հազարանց բանակը, ոուսական զորքերի համար ստեղծվով անելանելի վիճակ, Վանին գիշերը, վատագելով կյանքը, հասավ Շիկաքար բերդի ստորոտին՝ Խրամորթ գյուղը, հանդիպեց Մելիք Աղամին, Սարի քեկ Փիրումբանին և որիշների՝ լուծելու ոուսական զորքերին օժանդակելու հարցը<sup>11</sup>:

<sup>10</sup> Զ. Արգումանյան, «Մեծ» և «Փոքր» սղությունների հարցի շուրջ, Լրաբեր հասարակական օխույթյունների, 1985 թ., № 4, էջ 91:

<sup>11</sup> Վ. Ա. Պոտո, Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902, стр. 15—18.

1812 թ. ձմռանը Շքաս-Միբզան գործերի մեծ բազմությամբ կրկին հարձակվեց Ղարաբաղը վլա: Պարսից հնածազորը Զաֆար դեվի խանի առաջնարդույթամբ, օրականը մայր Ժիմսի գրապահության մեջ՝ գտնվեց Սովորան-բուդ ձմեռանցը (աճման Սղոցամ քաղաքի հյուսիսային կողմում, Շահ-Բաղադի մոտ), ոչնչացրեց ուսական ամրոց գոմարտակը: Այդ միջցիւն Շուշի բերդից օգնության գնաց Մշնիք-Վանին 200 ոռու զինվորներով և հայ հեծնազորով: Սակայն նա ստիպված էր ամրանալ Շահ-Բաղադի բերդում (պատմական Շիգանակերտ), որը խկոյն պաշարվեց Զաֆար-դույրի խանի գրքերով: Թեղամարտների հարվածներից բերդի դռները խորտակվեմ են, պարսից գրքերը կատաղությամբ ներ են թափվում, քայլ մեծ է լինուագրմանը, եթե բերդում ոչ որի չեն հանդիպում:

Վասի հարյուրապեսը զիշերը իր գորքնը դուրս էր բնել բնրդից և լեռների, բարձրավանդակների վրայով տարել Փառուի<sup>12</sup> կոչված գրությ Շիկաբար բերդի հուսիս-արևմտյան ստորոտում, այնուհետև ամրացնել բերդի վրա:

Պետք է ընդգծել, որ Շիկաբար-Քարագլուխ իր պատմական առաքելությունը կատարեց ընդհուպ մինչև 1918 թ., հնրուսությամբ դիմագրավելով բուրք-օսմանյան զավթիչներին: Բերդի հարավ-արևմտյան գերեզմանոց մ գտնվող մի տապանաքարի վիմագրությունը զավթիչների դեմ հնրուսական պայքարի եղած հայ երիտասարդի մասին պատմում է.

ԵՌՆԵԿ ԱՅՆ ՄԱՐԴՈՒՆ ՈՐ ԱԶԳԻ ՍԻՐՈՒՆ / ԿԶՈՀՎԻ: ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍՀՀՈԳԻ ՑԱՐՈՒԹՈՒԽՆԻ ՄՈՎՍԵՍԵԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ՈՐԸ ՏԱԾԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂՋ ՎԵՐՅԵՆՈՒ ՈՐԸ / ՀՃԽՆԱՑԵԼՈՎ ԻՆՈՒՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ / ԿԵՍՆՔԸ ԱԶԳԻ ՀԱ-ՍԱՐ ԶՈՂ ԳՆԱՅԱՎ / ՏԱԾԿԱԿԱՆ ԳՆԴԱԿԻ ՀԱՐՈՒԱԾՈՎ / ՇՈՒԽՆ ԽԱՅԵՐԻ ԱՌՋԵՎ / 23-ԻՆ ՍԵՊԱՆԵՐԵՐԻ 1918 ԹՒ / 35 ՏԱՐԻ ՀԱՍԱԿՈՒՄ

Հուշարձանի վրա քանդակված է Հարություն Մովսեսյանը՝ հստած ձիու գրա, սուրբ ձեռքին վեր պարզած:

... Շիկաբար բերդն ունի երկու մուտք. արևելյան և արևմտյան: Համեմատաբար թույլ են պաշտպանված արևմտյան, ինչպես նաև հարավ արևմտյան կողմերը. այս հանգստաները, ըստ էության, չի հսկացնում բերդի անառիկությունը: Եվ այն, որ բերդի պաշտպանները վերը հիշալ հարվածներին երկրորդական տեղ են հատկացրել (այսուղեա չկան արհետականորեն ստեղծված պաշտպանական կառուցներ), բացադրվում է բնական պատճառներով: Նախ, մինչ այդ ուղղություններից հայաստանակ կիներ թշնամին, նա պետք է անցներ լեռնային զանգվածներ ու սարահարթեր՝ հարությօց կամ արևմուտքից, բրոնք նոյնպես բնակեցված էին և ունեին իրենց պաշտպանները: Բացի այդ, որ ամենակարևորն է, Շիկաբարը կյանքի է կրչված նախ և առաջ հնկ-դորյան տակ առնելու արեները, դեպի Խաչենի իշխանությունների կիրճն ու հրանով անցնող և երկրամասի լեռնային մասը դաշտավայրի հետ կապող՝ ուղմակարգական հշանակարգություն ունեցող ճանապարհը՝ իր վրա կրելով ասպատակիչների առաջին հարվածը: Լինելով Խաչենի ամենանշանավոր սահմանապահ բներդից մեկը (բնրդից լավ են դիտ-

<sup>12</sup> Պատմությանը հայտնի Խաչենի փոքրիկ ալու օտողը, որ 1823 թ. ուներ ամենի բան 8 տոն (տե՛ս Օպանու Կարաբահու պրովինցիա 1823 թ. շրջ. 25): բազում ներսանարդներ տնասած, բերդի արևմտյան մուտքը պաշտպանող բնակավարերից է և տեղադրված է Խաչենագետի աշ ափամերձ շրջանում:

վուս դիմացի լայնարձակ հարթավայրերը, Կառկատ և Խաչեն գետերի հովիտները, շրջակա լեռնային բազուկներում հանգրվանող ամրոցները), Ծիկաքարը աչքի է ընկնում ոչ միայն բնական ամրություններով, այլև պաշտպանական այլ բազմաթիվ համակարգերով:

Խոսքը բերդի հարավ-արևելյան մասում, եռանկյունաձև հրվանդանի երեք կողմերից բնականից լավ պաշտպանված տարածքում կառուցված ուղմա-պաշտպանական դրվագ-ամրոցի մասին է, որն աչքի է ընկել ոչ միայն իր բնական անառիկ ու իշխող դիրքով, այլև որպես արհեստականուն ստեղծված ամրակոր համալիրի:

Չորանեղի երկարավուն հրվանդանը, երեք կողմերից եզերվելով բարձր ժայռափերով, իսկ չորրորդ կողմից մոտ 110 մ շերտով հարամցվելով սարահարթին և կրկնակի ձևով ամրացվելով 1 մ 75 սմ լայնությամբ պարիսպներով, վեր է ածվում մի անառիկ ամրոցի: Արևմուտքից պարսպապատի երկարությունը 70 մ է, հյուսիս-արևելքից՝ 20 մետր: Այնուհետև պարսպապատը շարունակվում է ամրոցի հյուսիսային եզրով: Պարիսպները, որոնք այսօր պահպանվում են 30 սմ բարձրությամբ, շարված են անմշակ կամ կոպտատաշ մեծ քարերով: Դրանց բարձրությունը ստույգ դժվար է որոշել, քանի որ քարիված քարեր չկան շրջապատում:

Դյավ-ամրոցի գլխավոր դարպասը բացվում էր արևմուտքից, որի երկու կողմերում եղել են 3,30 մ տրամագծով երկու բրդան աշտարակներ՝ դիտակետեր: Դրանցից մեկը վերահսկում էր արևմտյան և հարավային շրջանները, իսկ մյուսը, որին տեղանքի բերումով շատ ավելի կարևոր տեղ էր հատկացվել, մոտ է ձորանեղին և իր տեսադաշտում էր պահում արևելքը՝ դաշտավայրերը, դեպի բերդ տանող հյուսիս-արևելյան ուղին:

Բարձունքի մակերեսը խորրորդոր է: Գրեթե կենտրոնական մասում բնական իջվածք է, որը հրվանդանը բաժանում է երկու մասի: Այստեղ էր ամրոցի ամենախոցելի տեղը, որը ամրապնդելով համար անդնդախոր կիրճի եզրամատով և շրջակա որոշ թափանցելի հատվածներում կառուցվել է 1 մ 30 սմ հատությամբ պարսպապատ, որը 4 մ 50 սմ բարձրությամբ պահպանվում է:

Ամրոց-դյավակը, որն արևելքից նեղ սկսվելով, գնում է դեպի արևմուտք՝ աստիճանաբար լայնանալով, ունի 250 մ երկարություն: Նրա միջին լայնությունը հյուսիսից հարավ 50 մ է: Այսպիսով, ամբողջ ամրոցը գրաղեցնում է երկու հեկտար մակերես:

Ամրոց-համալիրը, որը ամենայն հավանականությամբ եղել է Սահմանական պատմական համար լայնանալով, ունի 250 մ երկարություն: Նրա միջին լայնությունը հյուսիսից հարավ 50 մ է: Այսպիսով, ամբողջ ամրոցը գրաղեցնում է երկու հեկտար մակերես:

Համալիրի շինությունների գերակշռող մասը կառուցված է եղել տեղական մոխրակապտավուն և սպիտակ անմշակ քարերով ու կրաշաղախով<sup>13</sup>, որոնց շարվածքները տեսանելի են:

<sup>13</sup> Ամրոցի ներսում պահպանվող կրամորը վկայում է, որ պարսպապատերը ուղմական իրադարձություններին գուգընթաց վերացնելով են և ամրացվել:

Ամրոցի կենտրոնում, բարձունքի վրա, իշխող դիրք են գրավել ութ հշանավոր սենյակներ՝ իրար կից, որոնք շարված են անմշակ քարերով (պատերի լայնությունը՝ 1 մ 50 մ): Դրանցից մեկը, որը գրավում է ամրոցի լավ պաշտպանված և ստավել գերիշխող մասը, և որի պատերի մնացորդները պահպանվում են մոտ կես մետր բարձրությամբ, ունի 9 մ երկարություն և 7 մ լայնություն: Պատերի հաստությունը 1 մ 53 մ է: Դատելով շրջապատի կոտորկված քարերից, այս շինությունը ունեցել է մոտ 5 մ բարձրություն: Մրա կողքի (արևմուտքից) սենյակն ունի քառակուսի հատակագիծ (չափերը՝ 5 մ 50 մ  $\times$  5 մ 50 մ): Բացի վերը հշված սենյակներից, ամրոցի ներսում կան տարբեր չափերի ու հշանակության որիշ սենյակներ ևս, որոնք բնակատեղի լինելուց բացի պաշտպանական դեր են կատարել և ծառայել որպես զրաքաղաք:

Ի մի բերելով մեր զննումները, պետք է ընդգծել, որ նմանօրինակ ամրոցներ Հայաստանում ստեղծվել են ամենավայր ժամանակներում: Հետագայում, սկսած 10-րդ դարից, ամրաշինությունը լայն ծավալ է ստանում, որը կախված էր երկրի ուազմատնեական ու քաղաքական իրավիճակից:

Այսպես, Արշակունյաց թագավորության շրջանում Հայաստանը, մեծ զորաբանակ ունենալով, ի վիճակի էր թշնամում ճակատամարտ տալ բաց դաշտում ու թույլ չտալ երան մտնելու երկրի խորքը: Դրույթունը փոխվում է հետուագա՝ մարզպանական և հատկապես Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում, երբ մարդկացին ուժի անբավարարության պայմաններում ճակատամարտեր տեղի են ունենում անմիջականորեն ամրոցների շրջակայրում, նրանց օգնությամբ: Երկրին սպառնացող ներխուժումների (առաջին ներխոյն՝ արաբական) վտանգը ստիպում էր կառուցել ամրոցներ, ստեղծել պաշտպանական բազմապիսի միջոցներ, գերազանցապես բնական դմւարամատչելի վայրերում:

Ծիկաքարի ամրոցը այդիսիներից էր, որի կառուցումը պայմանավորված էր նաև Խաչենի իշխանությունների աշխարհագրական դիրքով: Խաչեն արշավող թշնամիները չեն կարող անտարեր անցնել այդպիսի առաջապահ ու հզոր ամրոցի կողքով, որի գրավման համար նրանք ոչ միայն պետք է հաղթահարեն նրա անառիկությունը, այլև դեպի այն տանող վերելքի դժվարությունները:

Ամրոցը հայկական ամրոցաշինության դասական ոճով կառուցված համալիր է, որը պարսպապատերի ու սենյակների պատերի շարվածքների ձևավերով, աշտարակների ծավալատարածական բնույթով, ինչենպէ նաև հարակից շինությունների կառուցման արվեստով հիշեցնում է Կենտրոնական Հայաստանի հիմանալուր ամրոցները:

Կառուցվածքային-ոճական համանման բնույթ ունեն նաև երկրամասի Գտիշ-Քթիշի ամրոցը, Ցորպերդը և այլ ամրոցներ:

Տեղին է գշել, որ ամրոցաշինության այս հին ոճը, հետագայում զարգացում ապրելով, իր արտահայտությունն է գտնել հայ ժողովրդի կողմից ուշ շրջանի մյուս բերդերի (Ծոշվա բերդ, Ասկերանի մայրաբերդ) հիմնավորման ընթացքում:

Սակայն Ծիկաքարը հայտնի է ոչ միայն ժայռեղեն ու արհեստական ամրաշինություններով, այլև պաշտպանական ազդանշանային համակարգով, որով աշքի էն ընկնում Արցախ-Ղարաբաղի մի բանի բերդեր<sup>14</sup>:

<sup>14</sup> Յ. Մկրտչյան, Աշլ. աշխ., էջ 51:

Քերդի սարահարթի նյութական ժառանգության մեջ մեծ արժեք են ներկայացնում հուշարձանները, որոնք անկրկնելի ու ինքնատիփ բնության հետ մեկտեղ գեղարվեստորեն ու պատմականութեն են արժեքավորում հրա անցյալը:

Հուշարձանների մի խումբը տեղաբաշխված է Քարավոլիս և ներսուում է Ս. Աստվածածին եկեղեցին, խաչքարեր և ուշ շրջանի (XIX դ.) մի տապանաքար:

Ս. Աստվածածին եկեղեցին հպանցիկ հիշատակված է Մ. Էպ. Բարիսուդարյանից աշխատության մեջ<sup>15</sup>: Ըստ կառուցման ոճի՝ վերաբերում է XIX դարին:

Հուշարձանը ուղղակիուն հատակագծով, միանալ կառուցվածքով, թաղակապ փոքր շինություն է: Կառուցված է տեղական անմշակ, սպիտակ քարերով ու կրաշաղախով: Տեղանքի թեքության և, ըստ այդմ էլ, արևմուտքից աննպատակահարմար լինելու պատճառով, միակ մուտքը բացվում է համեմատաբար մատչելի՝ հարավային կողմից, որը կառուցված է բավականին մեծ ու սրբատաշ քարերով: Եկեղեցին ունի երեք (արևելքից՝ երկու, հարավից՝ մեկ) բացվող փոքրիկ պատուհաններ:

Ելեկով շրջակա հուշարձանների ժամանակագրական առանձնահատկություններից և հուշարձանները տարածքի մանրակրկիտ ուսումնափրությունից, գտնում ենք, որ այս հուշարձանը կառուցվել է այստեղ համականում ավերված միջնադարյան եկեղեցու տեղում, մանավանդ որ 1287 թ. մի ձեռնադիր հիշատակարան հաղորդում է հմանատիպ եկեղեցու գոյության փաստը<sup>16</sup>:

Սակայն Ս. Աստվածածին եկեղեցին առանձնապես ուշագրավ է իր հինավոր խաչքարերով, որոնց թվիվ հասնում է չորսից<sup>17</sup>:

Իր զարդարությունով բավականին հետաքրքիր է առանձնապես եկեղեցու հարավային պատին ագուցված երրորդ խաչքարը (և ոչ խաչքանորը, ինչպես նշել է Ս. Բարիսուդարյանը)<sup>18</sup>: Հուշարձանը բնորոշ է XIII դարին: Այն սպիտակավուն կայծքարից է, որի վերսի մասը կիսակլոր և քիչ ավելի լայն է, քան անեքսի մասը: Խաչքարի կենտրոնում քանդակված է մի մեծ խաչ, որի թևերի ծայրերը վերջանում են գեղեցիկ զարդանախչերով: Խաչի ստորին ուղղահայաց թևի երկու կողմերում և նորիգունական թևերի վրա կան երկուական փոքրիկ խաչեր, որոնց թևերի եզրերը կլոր գմղիկներով են ավարտվում:

Խաչքարի հիմքը երիզող խոյանոցուր զարդանախչը ամբողջացնում է հուշարձանի կոմպոզիցիան:

Եկեղեցու շրջակարիք ուշագրավ հուշարձաններից է ուշ շրջանի մի գեղեցկազարդ տապանաքար:

Արձանագրությունը, որն ընդգրկում է 6 տող, հիւսիսալ վերծանությունն ունի.

ՅԱՅՅՈՒՐԲ ՏԱՊԱՆԻ ՍԱՓՈՓԵՐԱՅԻ Է ՄԱՐՄԻՆ / ԼՈՒՍԱՀՈԳԻ ՏԵՍԱՐՆԻ ՄԱՅԻՆ / ՄԻՔԱՅԻԼ Ք[Ա]ՀՍ[ՆԱ]ՅԻՆ 30/ՀԱՆԵԱՆ

<sup>15</sup> Արցախ, էջ 166:

<sup>16</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, էջ 905:

<sup>17</sup> Խաչքարերի արձանագրությունները գրի են առել Մանար Բարիսուդարյանը (Արցախ, էջ 166) և Սեղմակ Բարիսուդարյանը (Դիման նայ վիմագրության, պրակ 5, Երևան, 1982, էջ 141):

<sup>18</sup> Դիման, էջ 141;

ՄԱՐԿՈՍԵԱՆՑ, ՀՈԳԵ[ԻՈՐ]/ ՀՈՎՈՒԻՆ ՔԱՐՄԳՈՒԽ ԳԵՂՋ ԽԱ-  
ՉԵՆՈՅ/ ՈՐ ՎԱԼԻԾԱՆԵՑԱՆԻ Ի 58 ԱՄ[Ա]Ց ՀԱՍՏԱԿԻ/ ՅԱՄԻ ԱԶ-  
Գ[Ի] ՈՅԴ (1855) ԵՒ ՓՐ[ԿՀԻ] 1855, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11:

Խարանարդի հաջորդ հուշարձանախմբերն են կազմում երկու գերեզ-  
մանատները, որոնք տարածվում են բերդի հարավ-արևմտյան և հարավ-  
ին մասերում:

Դրանցից առաջինը՝ հարավ-արևմտյանը, չնայած մեր ժամանակաշր-  
ջանի գերեզմանոց է, ունի մի քանի գեղաքանդակ խաչքարեր (նաև խաչ-  
քերոներ) ու տապանաքարեր՝ դիմաքանդակներով:

Խաչքարերից մեկը, որը կերտված է սպիտակավոն կայճքարից (այ-  
ժմյան արտաքին տեսքը՝ մոխրագույն) հայկական XIII դարի բարձրա-  
քանդակ խաչքարի լավագույն ու անկրկնելի օրինակներից մեկն է:

Այստեղ բանդակագործի գործադրած արտահայտչական միջոցների մեջ  
ակնրախ է դասական քանդակագործության հետքը, հայ քարարվեստի սկրզ-  
բունքների մեծ վարպետությունը: Բուն խաչքարի բարձրությունը 2 մ 5 ամ  
է, լայնությունը՝ 82 ամ, իսկ հաստությունը՝ 19—20 ամ: Նրա քիվի ամբողջ  
մակերեսը և խաչաթերթի շրջակայքը ծածկված են մանված զարդերով,  
բուսական քանդակներով: Պատկերազարդ քարի կենտրոնում խաչի ավան-  
դական քանդակապատկերն է, որը հորինվածքին հաղորդում է արտահայտ-  
չականություն:

Ոչագրավ է հատկապես հուշարձանի ստորին մասը, որը քանդակված  
են մատուցարան և կնոջ ու սղամարդու պատկերներ: Սա կարծես թէ հեր-  
թական հաղթանակից վերադարձ տղամարդուն (իշխանին) դիմավորելու  
տեսարան լինի: Կինը մատուցարանով դիմավորում է տղամարդուն, իսկ վեր-  
ջին ձախ ձեռքով միդրէ վերցնում (հավանաբար՝ խնձոր), իսկ աշով բը-  
նել է գիտու գավը:

Այսպիսով, ըստ Էպիֆյան կյանքի հարատևությունը խորհրդանշող գուն-  
դը (շրջանակը) պատեղ արտահայտվում է կենցաղային մոտիվների պատ-  
կերմամբ, որը Խաչենում հազվադեպ երևոյթ չէ:

Ի դեպ ասենք, որ մարդկային պատկերներով խաչքարեր առաջին ան-  
գամ հայտնաբերվել են Խաչենում՝ Հայաստանի այն մասում, որտեղ ընդ-  
հանրապես նախախլված է բարձրաքանդակներով զարդարանքը, որ վան-  
քերի պատերին, Հայաստանի և մյուս վայրերում ստվրական դարձած կտի-  
տորական խմբերի մեջ միասին հանդիպում են քավականին մեծ բարձրա-  
քանդակներով պատկերներ<sup>19</sup> և այդ առումով պատեղի խաչքարերը բարձ-  
րաքեր ենութ են տալիս ժամանակաշրջանի կենցաղը և հայկական կյանքի  
որոշ մանրամասնություններ ուսումնասիրելու համար:

Խաչքարի մատուցարանից ներքև պահպանվել է խաթարված արձանա-  
գրություն: Այն գրվել է նախքան խաչքարը պատվանդանի մեջ մնելը և այդ  
պատճենով էլ հինգերորդ տողի կեսը և շարտանակությունը մտել են պատ-  
վանդանի մեջ:

Ահա այդ արձանագրությունը.

ՄԵՔ / ՀԵՒԵՑ / ԻՒԱՅՈՐ / ԴԻՔՍ ՊԱՊԱ[Ս]Ն ՊԱՍ [ՍԱՐԳԻՒ]...

Արձանագրությունից վերև, կնոջ և տղամարդու հարթաքանդակների  
կողքերին պատկերված են մեկական փոքրիկ խաչեր, իսկ խաչքարի կողին.

<sup>19</sup> И. А. Орбели, Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII—XIII вв.,  
Петроград, 1915, стр. 327.

աջ կողմից, ստորին մասում՝ քալքայված չորստողանի գրեթե: Նկատվում են հետևյալ տառերը:

**ՀԵ/ՆՄ/ՅԱ../ՍՄ.../**

Երկրորդ խաչքարը՝ կերտված 1253 թ. (արձանագրությունը գրի է առաջ Մ. Բարիտուդարյանցը) ևս աչքի է ընկնում իր կատարողական վարպետությամբ:

Սուանձնապես ուշադրության է արժանի հուշարձանի ներքնամասը, որը շրջանակի փոխարեն կլոր սեղան է, որի վրա շարված են զանազան ուտելիքներ, շուրջը նատած տղամարդ և կին՝ երեխան գրկին:

Այսուեղ, ի տարրերություն առաջին հուշարձանի, տղամարդը գտնվում է սեղանի աջ կողմում և ձախ ձեռքով բռնել է գիճու բաժակը:

Վերոհիշյալ սեղանից սկիզբ է առնում մեծ ո գեղաքանդակ խաչը, որը կնոր երեխայի և տղամարդու բարձրաքանդակների հետ միասին խորհրդանշում է կենաց ծառը և հավեռդության գաղափարը:

Մեծ հետաքրքրություն են Երկայացնում նաև XIX դարի սկզբին բնորոշ որոշ տապանաքարերն: Դրանցից մեկը, որը գտնվում է խաչքարերին ամմիշապես մոտ, աչքի է ընկնում ուշագրավ քանդակապատկերներով: Կենտրոնական պատկերված է բարձրատոհմիկ աստիճանավոր, որի հանդերձները իշխանական տոհմի պատկանելությունն են խորհրդանշում: Խշխանավորը ձախ ձեռքը դրել է կողքի սափորի վրա, իսկ աջ ձեռքով բռնել է գավաթ, որը խորհրդանշում է պատվասիրության և հյուրասիրության այսադույլությունները:

Տապանաքարի հակադիր բնեուներում քանդակված են նրահյուս հավասարածն խաչեր, որոնք խորհրդանշում են հավատի և կատամարք ունեցած մեծ ակնածանքը, իսկ թիկունքին՝ համառոտագրված արձանագրություն՝ 4 տոռ.

ԱՅՍ Է ՏԱՊ[Ա]Ն ՄԻՐԶԱԲԵԿԻՆ ՈՐ Է / ՈՐԴԻ ՅԱՐՈԹՅՈՒՆ ԹՈՌ-ՆՈՐ Է/ ՔՅՈՎԼԵՆ ՄՄՆԿԱՍՍՐԻՆ ՌՄՀ (1821 թվին) ՈՎ ԿԱՐԴԱ. ԱՍԼ ԱԾ ՈՂՈՐՄԻ

Բերդապանի երկրորդ գերեզմանատունը գտնվում է «Բերդանորի» աջ եզրին, բերդի հարավ-արևելյան լանջին, անտառախիտ վայրում: Այսուեղ թաղումներ կատարվել են հավանաբար IX դարից սկսած:

Գերեզմանատունը, որն ընդգրկում է ավելի քան կես հեկտար մակերես, պարունակում է հիմնականում անխման, աղանձին դեպքերում՝ գեղաքանդակ, բայց անարձանագիր մի տաճրակի հասնող խաչքարեր ու կիսամշակ բազմաթիվ տապանաքարեր՝ կիսովին խրված գետնի մեջ:

Խաչքարերից մեկը, որը դասվում է XIII դարի հուշարձանների շարքին, աչքի է ընկնում կենտրոնական քանդակված գեղեցիկ՝ մեկական խաչի՝ դրվագներով: Մի քանի այլ խաչքարերի վրա պատկերված են միայն պարզագույն խաչեր: Դրանք, գրեթե բոլորը, կիսով չափ խրված են հողի մեջ և ճարտարապետական նվազ արժեք են Երկայացնում:

Պարզագույն (անարվեատ) խաչքարեր կան նաև մոտակա «Սանաձոր» վայրում թվով երկու հատ, որոնք գտնվում են սարահարթի հարավ-արևմբտյան կողմում:

Ծիկաքար բերդի շրջակայքում ևս կան պատմական տարբեր ժամանակաշրջաններին հասող հուշարձաններ՝ Հին գյուղատեղիներ, եկեղեցիներ, գերեզմանատուներ, խաչքարեր, որոնք, սփոռված լինելով այժմյան Խանա-

բաղ, Խորամորթ և շրջակա այլ գյուղերի տարածքներում, կարու են մասնագիտական առանձին ուսումնասիրության:

Եերդի շրջակայի բոլոր հուշարձանները ներկայացվում են առաջին անգամ: Դրանցով հարուստ է հատկապես Խանարադ գյուղի տարածքը:

Գյուղի ամենահին թվակիր հուշարձաններից է «Ցեց քար» անվանվող խաչքարը, որը գտնվում է գյուղի 1,5 կմ հարավ-արևմուտք: Բարձրությունը 3 մետր է, լայնությունը վերևում (կիսակլոր ավարտվող մասում)՝ 1 մ 50 ամ, ստորին մասում՝ 1 մ 70 ամ: Խաչքարի հաստությունը՝ 40 ամ է:

Սպիտակ, կոպտատաշ քարի կենտրոնում հնկա խաչն է, որի ստորին ուղղանայաց թևի երկու կողմերում պատկերված են մեկական փոքր չափերի խաչեր: Այլ զարդարանդակներ չկան:

Հուշարձանը պատմական մեծ արժեք է ներկայացնում իր արձանագրությամբ փորագրված ձախ կողին, որից պարզվում է, որ Համբերուշատը խաչքար է կանգնեցրել նահատակված Համամի, Գրիգորի, Ղազարի և այլոց հիշատակին:

Արձանագրությունը, որն ընդգրկում է 12 տող, որից վերջին երկուառ հիմնականում եղջված, հետևյալն է.

Ի ԹԻ Ո Լ/Զ (1187 թ.) ԵՍ Հ[Ա]Յ/ԲԵՐՈՒԵԱՏ / [Գ]ՄԲԵԹ[Ա] /  
[Կ]ԱՆԳՆԵ[ՑԻ] [ՀԻՇ]ԱՏՍ[Կ] ՀԱՄԱՄ... ԵՂ Ա... ՆՈ / ՂԱԶ[ԱՐ] /  
ԳՐԻԳ[ՈՐ] / ՍՈ.../...

Խաչքարին անմիջապես մոտ կա մեկ ուրիշը, որը չնպած չափսերով գիշում է վերոնիշյալին, քայլ հորինվածքով նման է նրան:

Անտարակոյս, այս երկու խաչքարերի ժամանակակիցն է գյուղի հարավ-արևմտյան մասում, շրամքարի մոտ գտնվող խաչքարը, որը կառուցված է նույն քարատեսակից, ունի կիսակլոր վերնամաս և պարզատիպ խաչպատկերներ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև գյուղամիջյան միակ արվեստի կոթողը:

Պարզագույն հյուսվեն զարդարանդակներով օժտված այս հուշարձանի ներքեամասում զետեղված արձանագրությունը վկայում է, որ Սղբայրիկը հուշակոթող-խաչքար է կանգնեցրել եղբոր հիշատակին, որին գերենվարել են:

Արձանագրությունը վիմագրված է ուր տողով.

Ես ա/աղբայրիկ կ/անգնեցի զիաշս նո[գ]ո/ իմ ե[ի] եղբոր / որ անգին գերես/արան ոյէ (1151 թ.)

Համառոտ արձանագրություններ կան «Նահատակ» կոչվող սրբաւորություններում գերեզմանատան խաչքարերի վրա, որոնց թվաքանակը հասնում է մինչեւ:

Առաջին խաչքար. Վերևի մասը կիսակլոր է: Կենտրոնում պատկերված է մեծ խաչ, որի շորջը՝ մեկական փոքր, միատիպ ու միաշափ խաչեր:

Ստորին մասում ունի արձանագրություն, երկու տող.

<sup>20</sup> Այս սրբավայրի անվանման հետ է կապված մի հետաքրքրի պատմություն: Ոչ հետո անցյալում արտադ կար մի խաչքար, որի վրա գրված էր. «Սկսող բարձրակա գայլը փրկել է մանկան»: Ավանդաբար տևագինները պատմում են, որ ասպատակիչները տեղահան են արել բնիկներին, քեզ հեռավոր վայելու: Ենք ճանաբ վերադարձել են իրենց գյուղը, տեսալ են գայլերի ռիմակին ընտեղացած մի պատահու, որը շարժվում էր մի գայլ մետք: Պարզվում է, որ գյուղում մնացած երեխային փրկել է խնամել էր այդ գայլը: Հետագայում երեխյանի կանքը փրկող գայլին քաղաք էր այդ գայլը: Հետագայում երեխյալ տապանագիրը:

Խ[Ա]2Ս Պ[Ա]Ր[Ո]Ն ԱՄԻՐԻՆ:

Երկրորդ խաչքարը գտնվում է սրա կողքին, նման է նրան, բայց կիսակլոր վերնամասը թիշ ավելի լայն է: Ստորին մասի արձանագրությունը նույնպես երկու տող է ընդգրկում.

Խ[Ա]2Ս / ԳՈՒԼ[Պ]ԵԿԻՆ:

Մյուս խաչքարը այս երկու խաչքարերից տարբերվում է ոչ հատակ պատկերված խոյանջյուր քանդակներով, որոնք գտնվում են խաչքարի ներքին մասում:

Ստորին մասում տեղաբաշխված երեք տող ընդգրկող վիմագրությունը նետևյալն է.

ԱՍ ՈՂՈՐՄԻ ԳՈՒԼ/[Ի]ՍՏԱՆԻՆ ԱՄ Կ[Ա]ՆԿՆԵՑԻ / ՁԽ2:

Սուաշին հայացքից առանձնապես պատկերավոր է չորրորդ խաչքարը, որը հիմնական գծերով նման է նիշյալ երեք խաչքարերին, բայց աչքի է ընկալում վար արտահայտված գեղեցկակերտ, խոյանջյուր քանդակներով, որոնք նենալում են կենտրոնական մեծ խաչի ողդահայաց թևի երկու կողմանում կերտված մեկական փոքր խաչերի վրա:

Ի տարբերություն մյուսների, արձանագրությունը գտնվում է վերևում, կենտրոնական խաչի հորիզոնական երկու թևերի (ձախ կողմում՝ 2, աջում՝ 1 տող) վրա.

Խ[Ա]2Ս / ՊԱ/ՊԻՆ:

Գերեզմանատան վերջին արձանագիր խաչքարը, որը ոճով նման է առաջին երեքին, ստորին մասում ունի հետևյալ չորս տող ընդգրկող արձանագրությունը.

Խ Ա/ՀՍՀ/Պ Գ/ՈՒ:

Բոլոր այս խաչքարերն իրենց կառուցվածքով վերաբերում են XIV—XV դարերին:

Այդ ժամանակաշրջանին են բնորոշ նաև գերեզմանատան երկու այլ խաչքարերը, ինչպես նաև, մի այլ խաչքար՝ հուշարձանախմբից արևելք, «Շենատեղ» վայրում, որոնք չունեն արձանագրություններ:

Այսիպսով, գյուղից մոտ 3,5 կմ հարավ-արևմուտք գտնվող «Նահատակ» հնավայրի և նրան անմիջականորեն հարող տարածքում խաչքարերի թիվը հասնում է ութի:

Սակայն այս գերեզմանատունը առանձնապես գերող է ոչ այնքան խաչքարերով, որքան ճնշ պատկերաբանադակներ կրող տապանաքարերով: Այս- տեղից հնարավոր եղավ ներկայացնել միայն երեք արձանագիր տապանաքար, քանի որ մյուսները կիսովին գտնվում են գետնի տակ:

Սուաշին տապանաքարը, որը գտնվում է գերեզմանատան արևմտյան եզրում, դրվագված է բացառիկ ճնշ, բարձրարժեք պատկերազարդման կոմպոզիցիայով:

Մասնավորապես, պատկերված է բարձրաստումիկ իշխանի կենցաղը: Կենտրոնում իշխանն է՝ հեծյալ, զինավար հանդերձներով: Զերքին բռնել է նետ ու աղեղ և պատրաստվում է խոցել նշանակետը: Իշխանի ձախ գոտի կատաղում երևում է ձեսի պարկունք:

Ուշագրավ են նաև տապանաքարի մյուս հատվածները. աջ անկյունում պատկերված են գորգի վրա նատած երաժիշտներ, որոնցից ձախ կողմի երաժիշտը աջ ձեռքով բռնել է դափնի, իսկ ձախ ձեռքը դրել է գոտիկատեղին: Աջ կողմի երաժիշտը երկու ձեռքերով բռնել է ասզր:

Տապանաքարի ձախ անկյունում պատկերված է երկաթ կոռո դարբնի:

աշխատանքը: Դարբնի կողքին, աչ կողմում, հայելին ցուցադրաբար վեր պրզած պատկեր է՝ մարդու ապրած կյանքը դիտելու, վերլուծելու խորհրդանշանը, որը բացահայտում է, որ Անջեցլախ բարյալին կերպարը չի մթագնում անգամ մահից:

Ստորին մասում տապանաքարն ունի այս քանդակները. Չախ անկյունում պատկերված մարդը աչ ձեռքով բռնել է գինու հոկայական սափորը: Վերջինիս կողքին պատկերված է թևնիկատիպ սափոր և գտվաթ:

Տապանաքարի ներքերը պատաժ են հյուսկեն զարդաքանդակներով:

Հետաքրքիր է ձևավորված հաև հուշարձանի հյուսիսային կողմը: Այն ունի քառակուրք հորիզոնական, լորաքանչչուր խորանում մեկական տարրեր չափերի գեղեցկահյուս խաչապատկերներ:

Ստորին մասում դրվագված է վարի տեսարան. գյուղացին երկու գույզ եզներ լծած վար է անում արորով: Տապանաքարի հյուսիսային մասի աչ անկյունը կոտրված է:

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ բոլոր այս կենցաղային պատկերաքանդակները հայանաքար արտահայտում են տվյալ իշխանի կալվածքում առկա զբաղմունքները (բրոտագործություն, դարրնություն, անասնապահություն, հողագործություն, ինչպես նաև՝ որսորդություն և երածըշտույժուն):

Սրձանագրությունը, որն ընդգրկում է մեկ տող, փորագրված է քարի հյուսիսահյաց էջին, վերնամասում:

[ԱՅՍ Է] Հ[աճ]կիստ Մ[ա]զր[եցի] Վ[արդա]ն թ[իվ]ն ՌԾ ԽԲ (1693 թ.):

Անշուշտ, այսուղի խոսքը Մելիք-Շահնազարյան տոհմի ներկայացուցիչներից մեկի մասին է:

Սոթից գավառը՝ Աևանա լճի հարավ-արևելյան անկյունում, որը մինչև XV դարի կեսերը Դօփյանց ժառանգական կալվածքներից մեկն էր, XVI դարում ներկայանում է Մելիքների մի ազգատոհմի ձեռքի տակ, հանձննա հրանց ամենից աշքի ընկնող ներկայացուցիչ Մելիք-Շահնազարի, որը ապրում էր Մազրա գյուղում (Այժմյան Վարդենիսի շրջան)՝<sup>21</sup>

XVII դարի գգալի ավերածությունները (մասնավորապես 1582 թվականի կովկասան լեռնաբնակերի՝ լեզգիների փոթորկալից արշավանքները) Գեղարքունիաց երկիրը ավերակ դարձրին, պատճառ հանդիսանալով բնակչության ցիրոցան լինելուն: Այդ ժամանակ Մելիք-Շահնազարյան տոհմից շատ մելիքներ (մելիք Շահ, մելիք Հյուսեին, մելիք Միրզաքեկ և ուրիշներ) թողեցին Գեղամա լճի եզերը և իրենց ժողովորի մի մասի հետ գալյուցին Ղարաբաղի կողմերը<sup>22</sup>:

Իրենց բնակության համար ընտրելով Վարանդա գավառի Ավետարանց (Չամաշչի) գյուղը, նրանք 1616 թվականին կառուցեցին Կուսանաց Սնապատ, որը եղել է Մելիք-Շահնազարյանների մելիքական տոհմի դամբարան-

<sup>21</sup> Կարաբեն Եպիսկոպոս, Նյութեր հայ Մելիքության մասին, Գոփեանք և Մելիք Շահնազարյանը, թ. պարակ., Ս. Էջմիածին, 1914, էջ 97:

<sup>22</sup> Քաֆֆի, Երկերի ժողովածու, Բատոր 10, Խամսայի մալիքությունները, էջ 176—177:

Աը<sup>23</sup>, 1651 թվականին եկեղեցի և Ավետարանոցը շրջապատեցին ամուր պարհապերով:

1627—1628 թվականներին Մագրայից Ավետարանոց է տեղափոխվում մելիք Բաղին, որն իր հետ բերած ժողովրդի մեծ մասը բնակեցնում է Ավետարանոցում և Ծուշու գյուղում<sup>24</sup>:

Սյափիսով, վերոբիշյալ արձանագրությունը վկայում է, որ Մելիք-Շահնազարյանների շառավիղներից ոմանք հաստատել են նաև Խաչենի գյուղերում:

Գերեզմանատան հաջորդ տապանաքարը ստորին մասում ունի հետևյալ արձանագրությունը՝ երկու տող.

ԱՅՍ Է Հ[Ա]ՆԳ[ԻՍ] Պ[Ո]Ղ[Ո]Ա[Ի] Ի Վախ/

ՃԱՆԵ[ցաւ] ԹՎԻՆ ՌԾԻԶ (1677 թ.)

Տապանաքարի աջ անկյունում դրվագրված է Պողոսը՝ ձեռքերը գոտկատեղին:

Արձանագրությունից վերև, եռախորան հորինվածքի մեջ քանդակված են երեք երբահյուս, հավասարաթև խաչեր, իսկ վերին և ձախ կողմին եղրամասեր հյուսվեն զարդարանատակներ բանեն:

Պողոսի հուշաքարի կողքին է ամփոփված որդին՝ Միրզան, որի տապանաքարը նոյնական պարունակում է հետաքրքիր քանդակներ: Այստեղ Միրզախանը պատկերված է ձիու վրա: Նա աջ ձեռքով բռնել է ձիու ասնձը, ձախ ձեռքով՝ գավաթ: Քանդակի աջ մասում պատկերված են մարդիկ, որոնցից մեկը բռնել է գինու սափորը:

Ստորին մասի արձանագրությունը մեկ տող է.

Տ[Ե]Ր Պողոսի որդի ՄԻՐԶԱԽԱՆՍ

Թվին ՌԾԼԲ (1683 թ.):

Միրզախանի մասին հիշատակում է այժմյան Մարտունու շրջանի Սոս գյուղի Եղիշէ Կույսի Անապատի գերեզմանատան մի խաչկալի հարավային դռան հյուսիսային սեմի վրայի՝ ՌԾԴ (1655) թվականին կատարված վիմագրությունը<sup>25</sup>, որը հնարավորություն է տալիս գուգահեններ անցկացնել Խանարադ և Սոս գյուղերի միջև:

Մյուս տապանաքարը, որի ստորին մասը (արձանագրությամբ հանդերձ) խրված է գետնի մեջ, աչքի է ընկնում իր մեծությամբ: Հուշարձանի աջ անկյունում պատկերված է գավաթը ձեռքին հեծված, որի դիմաց՝ ձեռք-ձեռք տված մարդիկ (պարի տեսարան):

Զախ կողմում, երկու գեղեցկազարդ խորանների մեջ կան մեկական գեղեցիկ, տարրեր չափերի խաչեր, որոնք ունեն եռանկյունաձև (սեպագարդ) և կլոր (պարուրազարդ) վերջույթներ:

Հետաքրքիր ո հնագույն խաչքարի օրինակ է «Սարե խաչ» վայրի խաչքարը, որը գտնվում է գյուղից մոտ 5 կմ արևմուտք: Այն տեղական սպիտակ քարից կերպված հուշարձան է՝ դրվագման պարզագույն լուծումներով: Կենտրոնում հակա խաչն է, որի ուղղահայաց թևի աջ անկյունում քանդակված է մեկ որիշը՝ փոքր չափերով:

Խաչքարը իր ոճով պետք է դասել XII դարին:

<sup>23</sup> Արցախ, էջ 95—98: Տե՛ս նաև Ե. Լալարան, Վարանդա, Հյութեր ապագա ուսումնահիմության համար, Թիֆլիս, 1898, էջ 49:

<sup>24</sup> Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղուանից, հասոր Բ, Թիֆլիս, 1907, էջ 43:

<sup>25</sup> Արցախ, էջ 166:

Խաչքարի կողքին կա մի տապանաքար (1919 թ. թվագրվող), որի տակ ամփոփված է Զավահիր անունով նորագոյոցի կենց մարմինը<sup>26</sup>:

Խանարադ գյուղի տարածքի հաջորդ հուշարձանախումբը տեղադրված է գյուղի մոտ 4 կմ արևմուտք, Վերին Ղիջրաղ (Դիփաջող) վայրում: Ներառում է գյուղատեղի, գերեզմանոց և եկեղեցի: Վերջինս գյուղի շրջակայիր եկեղեցիներից առավել լավ պահպանված է:

Հուշարձանը համառոտ հիշատակված է Մ. Բարխուդարյանցի գրքում<sup>27</sup>: Այն թաղակապ տանիքով, ներքուած կամարատիպ միանալ, ուղղանկյուն հատակագծով շինություն է, արևելյան մասում ունի խորան, որի աջ ու ձախ կողմերում կան մուտքերի վերևի մասը կիսակլոր երկու պահանջանելք: Զախ կողմի պահանջանակ մոտ կա մկրտության ավազան, որի վերևի կիսակլոր ճակատին դրոշմված է ոչ խաչանշան: Խորանի աջ ու ձախ կողմերում, դեմքինաց, մեկական փոքր խորշեր կան:

Տեղանքի ոչ նպատակահարմար լինելու պատճառով միակ մուտքը բացվում է հարավից:

Ի տարբերություն բուն հուշարձանի, որը կառուցված է տեղական սպիտակ, անմշակ քարերով և պալազաղախով, մուտքը, ինչպես նաև խորանի, սրանի և պահանջատների պատուհանները կառուցված են սրբատաշ քարերով: Դռան ճակատակաղ քարի վրա կա 186 ԱՄ մակագրությունը, որը, հավանաբար, գրվել է նախկին, գրեթե փայտաշենք<sup>28</sup> եկեղեցու վերացինման ժամանակ, ըստ երևույթին, XX դարի սկզբներին ի հաշմառորումն հուշարձանի տարիքի: Հուշարձանը ունի մի քանի պատուհաններն են, հարավից՝ երկու, սրանի պատուհանները:

Գյուղատեղիի մյուս հուշարձանները (գերեզմանախումբ) տեղադրված են եկեղեցու արևմտյան և հյուսիս-արևմտյան կողմերում: Դրանք ուշ շրջանին են վերաբերում (XVIII—XX դարերին):

Խանարադ գյուղի տարածքի մյուս հուշարձանախումբը գտնվում է գյուղի 2,5 կմ արևմուտք, «Եթե (Վերին) Ճեն» տեղամասում, որտեղ բնակվում էին այժմյան խանարադիների նախնիները<sup>29</sup>: Գյուղատեղին ընդգրկում է

<sup>26</sup> 1918 թ. Օսմանյան բռնքերի ներխուժման ժամանակ նոտակա բնակչափարեկի խաղաղ բնակչները, բռնելով իրենց տուն ու տեղը, նահանջեցին լեռնաշխարհի խորքը: Մական Զավահիր անոնմով այդ կինը հրաժարվեց փախուստի դիմել, ասելով, որ խաչը իրեն կօգնի: Եվ առ իր երիսադի ներ մնաց «Սարե-խաչ»-ում:

Թուրքերը, տիրելով այդ վայրին, զազանաբար սպանեցին կնոջը, իսկ երիսադին տառ իրենց ներ: Եվ երբ տեղադիմները են վերադարձան, տեսան կնոջ դիմել և նոյն թվականին էլ նրան բանեցին այդ վայրում:

<sup>27</sup> Արցախ, էջ 165:

<sup>28</sup> Արցախ, էջ 165:

<sup>29</sup> Խանարադիների նախնիները սկզբում, հնագույն ժամանակներից սկսած, ապրում էին «Ներքին Ճեն» վարում (այժմյան գյուղից 1 կմ հարավ-արևմուտք): Քանարական հանգամանքների բերումով բնակչները վերաբնակվեցին միշյալ «Ճենատեղ» վայրում: Գյուղն այն ժամանակ, ինչպես վկասում է Խանարադ գյուղի բնակիչ Հազարեկ Հակոբյանը, Հրիմը (Զրինը) անոնն էր կրում: Այս վկասումն անատոլում է Հայաստանի Պատմության պետական արխիվում պահպանված «Արցախի թեմի վերաբերյալ զանազան կազմաձագերի և պայմանագրերի ժողովածու» մեջ ՈԾԺԾԶ (1667) թ. «Խախեն խարձերում» (ժողովրդի նարեկեր) գտնվուած տեղեկությամբ, ըստ որի գյուղն անվանվում է Զքիր (Տէ՛ս Հայաստանի ՊԿՊԱ, ֆ. 57, 8, 1, գ. 3, թ. 113): Հետոնազարդ շրնորդները տեղափոխվեցին և բնակվուած հաստացին «Եթեշենում», որը XVIII դ. կոչվեց Խանարադ, իրը խանարադական բնակվայր:

կիսավեր, XIX դարին բնորոշ Ս. Աստվածածին Եկեղեցի, գերեզմանոց և մի քարովի մատուռ:

Գերեզմանատունը վերաբերում է XII—XX դարերին: Բացի անշահականապատկերներ կրող տապանաքարից, այնտեղ հիշարժան է Հակոբ քյոլսվայի տապանաքրը, որի վրա նրա հիշատակագիրն է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅԱԿՈՎՔ / ՔՅՈՎԼՍԱՆ ՈՐԷ ՈՐԴԻ ՂԱ/ԶԱՐԻՆ ՄԷ-ԼՈՒՆՑ ՎԼՇ ՇԼ/1853 ԱՄԻ

Նրբահյուս զարդանախոչ Երիգված տապանաքարի կենտրոնում պատկերված է ձիու վրա նատած գյուղապետը իր ճոխ հանդերձներով (գյուղի կախված է երկարածին թուր ու դաշովն, աչ ձեռքով բռնել է գիտու գալվարը՝ ձախով թռչում՝ վեր պարզած), որի առջևից ձիու սանձը բռնած շարժվում է նրա մասովակը:

Բացի Հակոբ Քյոլսվայից, այս գերեզմանոցում են թաղված Հայր տեր Միքայել քահանա Բաղալանցը (1901 թ.), վերջինիս կինը՝ Կայանն (1893 թ.), որդին՝ Գաբրիելը, նրա կինը՝ Գյուլին (1922 թ.) և որդիներ, որոնց մասին հշել էր Ղ. Աղայանը<sup>30</sup>:

Գերեզմանոցի միակ հնագույն արձանագիր հուշարձանը մատուռն է, կառուցված Դավիթ Երեցի և նրա որդու՝ Գրիգորի Կողմից՝ 1224 թվականին.

ԵՍ ՏԱՎԻԹ ԵՐՍՅ ԵՒ ՄԻՆ ՈՐՏԻ Ի/Մ ԳՐԻԳՈՐ ԵՐՍՅ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՆ ԲԱՐԵԽԱԽԻՍ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ / ՅՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ Ի ՅԱՂԱԹՍ Հ[Ի]ՇԵՑԵՔ—ՔՍ ԶՀԻՇԵ[Ս]Զ[Ի]Ք ԻՒՐ ԱՐԳԱՅՈՒԹԻՒՆ (ՈՀԳ)—1224 թ.<sup>31</sup>:

Կարեւոր հուշարձաններից են նաև երկու խաչքարերը, որոնք գտնվում են, «Բուշուն Պուն» և «Հարթ» վայրերում: Առաջինը, որն իր զարդարանդակների մոտիկներով վերաբերում է XIII դարին, վերևում ունի կիսակլոր մաս՝ եզրերը մանված զարդարանդակներով:

Կենտրոնում պատկերված է հյուսիսն խաչը, որից Ձերքն մեկական նույնատիպ, բայց փոքր խաչեր: Խաչաթևերի արանքները պարուրված են բուսական քանդակներով:

Ի տարբերություն այս հուշարձանի «Հարթի» խաչքարը, որն անհամեմատ փոքր չափսեր ունի, աչքի է ընկած իրարից տարբերվող երեք պարզաբնիպ խաչերով: Դրանցից մեկը՝ կենտրոնական խաչի ձախակողմյանը, ունի կլոր գնդիկներով վերջովովներ: Այս խաչքարը հնատարքիր է խաչաթևերից կախվող մրգի (հաւանաքար թօղի) քանդակներով: Ելեկով կառուցվածքառնկան որոշ առանձնահատկություններից, խաչքարը պետք է վերագրել XII—XIII դարերին:

Վերջին հուշարձանախումբը, որը գտնվում է գյուղից մոտ 3,5 կմ հյուսիս-արևմուտք «Կաղվան» տեղամասում, եւրառում է հնագույն գյուղատեղի, ավերակ եկեղեցի, կիսովին գետնի մեջ խրված խաչքարեր (3 հատ) և գերեզմանոց (գյուղատեղից 1 կմ հարավ, «Քարեն գլուխ» վայրում), ուր կամ մեկ խաչքար:

Նշված արբիվում հիշատակություն կա Խամարադ գյուղի տարածքում գտնվող Վաղվան գյուղատեղի մասին, ոյք XVII դարում բնակչութեա:

**Յ. Աղայան,** Երևանի ժողովածու, հատ. 2, Երևան, 1962, էջ 13—14: Տե՛ս նաև գրական ժառանգություն, 1-ին գիրք, Երևան, 1940: Ղ. Աղայանի 1881 թ. նոյեմբերի 15-ի ամամկը Միքայելին, էջ 471—472:

<sup>30</sup> Տե՛ս Հայաստանի ՊԿՊՍ, ֆ. 319, գ. 1, գ. 9:

Շարտարապետական տեսակետից փոքր արժեք ունեցող (անխնամ) այս խաչքարերը կարելի է դասել XIV—XV դարերի հուշարձաններից շարքին:

Ծիկաքար բերդի շրջակայի լավագույն հուշարձաններից է արդի Սարդարաշեն (Սորշեն) գյուղի գործող գերեզմանոցի խաչքարը, որը կարելի է հայկական խաչքարակերտուման դասական օրինակներից մեկը համարել: Իր բնույթով ու դրվագմամբ այն անշափ նման է Քարագլխի գերեզմանատան զույգ խաչքարերին: Հետևաքար չի բացառվում միննույն վարպետների մասնակցությունը այդ հուշարձանների կերտման գործին:

Հուշարձանը վերաբերում է XIII դարին: Առանձնապես իմաստավից է ձևավորված խաչքարի ստորին մասը, որտեղ պատկերված մարդը աջ ձեռքով բռնել է գավաթ, իսկ ձախով մատնանշում է մայր հողը և արեգակը խորհրդանշող շրջանակները: Պատկերաքանդակի աջ կողքի խաչը ամբողջական է դարձնում մարդ-բնույթյուն զուգորդության հավատամքը<sup>32</sup>:

Հազվադեպ պատկերաքանդակներ կան Փառուի գյուղի այսպես կոչված «Կաթեն Խորթ» վայրի (Կարմիր աղբյուրի մոտ) խաչքարի վրա: Խաչքարն ունի հյուսածո քանդակներով մեծ քիվ: Ստորին մասում կենտրոնական խաչաթևի երկու կողմերում և երանցից ներքև դրվագված են ծամավոր կանաքը (Երկուը) և փոքր աղջնակ: Կինը ձախ ձեռքով կարծես թե գրիկ է որովայնը, իսկ մյուս ձեռքով բռնել է ոսագոտուց, որը հավասարաց խորհրդանշում է կնոջ երկունքը: Կնոջ և աղջկա գիշավերելում կան հավերժության նշաններ, որոնք խորհրդանշում են կյանքի հարատևությունը երկունքի արդյունքով՝ մայրության առկայությամբ:

Բերդի շրջապատի մեզ հետաքրքրող վերջին հուշարձանը Խորամորք գյուղի եկեղեցին է համանուն գյուղատեղիում, բերդից 1 կմ հարավ-արևելք:


Հուշարձանը իր կառուցվածքով հիմնականում նման է Վ. Ղլիշբաղի եկեղեցուն: Նույն ուղղակիցուն հատակագծով, քաղակապ տանիքով՝ ներքուստ կամարատիպ շինություն է, բայց տարրեր չտիտերով ու արտաքրուստ այլ ձևավորումներով: Առանձնապես լավ է ձևավորված դռան ճակատակալ հատվածը, որտեղ դրշմված են երեք խաչանշներ և «1800 թ.» մակագրությունը:

Քարագլխի վերև կա «1876» մակագրությունը:

Հուշարձանը ունի Յ՝ (հարավից 2, արևմուտքից՝ 1, արևելքից՝ 3) պատուհաններ: Ընդ որում, խորանի պատուհանը խաչած է:


Այսպիսով, Ծիկաքար բերդի, ինչպես նաև երա շրջակայի պատմահնագիտական տեղավայրերի հիմնավորց հուշարձանների արձանագրությունները, կառուցվական արվեստն ու ճարտարապետական սկզբունքները ակնբախտեն ցուց են տալիս, որ Ծիկաքարը որպես բերդ հիմնադրվել է դեռևս վաղ ժամանակներում և արդեն V—VII դարերում անշափ կարևոր ուսումնական կենտրոն էր: Հետագայում, ուզմական իրադարձություններին զուգընթաց, բերդը վերակառուցվել ու ամրացվել է, հարմարեցվելով նոր ժամանակների ուսմարիւտի պահանջներին, որի շնորհիվ այն դարձել է պատմական Հայաստանի անառիկ ու իշխող բերդերից մեկը:

<sup>32</sup> Ուշադրություն է գրավում նաև գյուղի մեկ այլ խաչքարի գիրը. Ի Թիւ Զիգ. (1474 թ.) ԵՍ ԹԱԹՈՒԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉԱՅ: (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 319, Տ. 1, գ. 9):



**„ЭЧМИАДЗИН“**  
**ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА**  
**(ИЮЛЬ—АВГУСТ 1993 г.)**

1. Торжество закрытия учебного 1992—1993 гг. воскресной школы Св. Богородицы, 3 июля 1993 г. Помещено также слово благословения Католикоса всех армян Вазгена I по этому случаю (стр. 3—7).
2. Сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата о церковной жизни армянской епархии Северного Кавказа Российской Федерации, 14 июля 1993 г. (стр. 8—11).
3. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за июль—август месяцы (стр. 12—15).
4. Проповедь архиепископа Шагэ Аджемяна в кафедральном соборе Св. Эчмиадзина на праздник Варданава, 18 июля 1993 г. (стр. 16—19).
5. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в кафедральном соборе Св. Эчмиадзина на праздник Успения Св. Богородицы, 15 августа 1993 г. (стр. 20—23).
6. Вести из армянской епархии Грузии (стр. 24—25).
7. Принятие монашеского обета и помозание в армянской епархии Ирака, 17—18 февраля 1993 г. Помещена также биография иеромонаха Татева Акопяна (стр. 26—28).
8. А. А. Кеосаян—«Свидетельства для проповедей» (исследование, продолжение)—(стр. 29—40).
9. Г. Х. Степанян—Монастыри Ерзинской местности (исследование, продолжение)—(стр. 41—54).
10. Нубар Тер-Микаэлян—Армянская колония Египта в X—XII вв. и армянские церкви (исследование, продолжение следует)—(стр. 55—69).
11. С. Амирджанян—Архимандрит Аракел из монастыря Гтча (исследование)—(стр. 70—77).
12. Слава Саркисян—Крепость Шикакар и окрестные памятники (исследование)—(стр. 78—94).



•ETCHMIADZIN•  
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN  
(JULY--AUGUST 1993)

1. The closing feast of the 1992—1993 school year of Holy Virgin's Sunday school, 3-rd July 1993. It has been given also the address of blessing of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, during the closing feast (pp. 3—7).
2. Communiqué of the Holy See's chancery about the church life of the Armenian diocese of Russia's North Caucasus, 14-th July 1993 (pp. 8—11).
3. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of July—August 1993 (pp. 12—15).
4. The sermon of Archbishop Shahen Adjemian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin, during the feast of Transfiguration, 18-th July 1993 (pp. 16—19).
5. The sermon of Archbishop Nerses Bozabalian in the Mother Cathedral of Holy Etchmiadzin, during the feast of Assumption, 15-th August 1993 (pp. 20—23).
6. News from the Armenian diocese of Georgia (pp. 24—25).
7. Ordination and consecration of celibate priesthood in the Armenian diocese of Iraq, 17—18-th February 1993. It has been given also the biography of the new ordained monk Datev Hagopian (pp. 26—28).
8. **H. H. Keuseyan**—Testimonies for the preachings (study, continuation)—(pp. 29—40).
9. **G. Kh. Stepanian**—The monasteries of Yerzenka (study, continuation)--(pp. 41—54).
- 10 **Nubar Der Hikaelian**—The Armenian colony of Egypt during the XI—XII centuries and the Armenian churches (study, to be continued)—(pp. 55—69).
11. **S. Amirdjanian**—Father Arakel of Gedcha Vank (study)—(pp. 70—77).
12. **Slava Sarkissian**—The Shigakar fortress and the monuments of the neighborhood (study)—(pp. 78—94).



„ETCHMIADZINE“  
**ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE**  
(JUILLET—AOUT 1993)

1. Festivités à l'occasion de la clôture de l'année scolaire 1992—1993 à l'école de dimanche qui porte nom de la Sainte Vierge (3 juillet 1993). Texte de l'allocution de Sa Sainteté Vasken Ier prononcée à cette occasion (pp. 3—7).
2. Communiqué du 14 juillet 1993 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant la vie ecclésiale du diocèse des Arméniens de Russie dans la région du Caucase du Nord (pp. 8—11).
3. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois juillet—août 1993 (pp. 12—15).
4. Sermon de l'archevêque Chahé Adjémian prononcé le 18 juillet 1993 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la Transfiguration (pp. 16—19).
5. Sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé le 15 août 1993 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de l'Assomption (pp. 20—23).
6. Nouvelles du diocèse des Arméniens de Géorgie (pp. 24—25).
7. Ordination sacerdotale et consécration dans le diocèse des Arméniens d'Iraq (17—18 février 1993). Biographie du Père Tatev Hakobian récemment reçu l'ordination (pp. 26—28).
8. H. H. Keuseyan—«Témoignages à l'usage des prédicateurs» (étude, suite et fin)—(pp. 29—40).
9. G. Kh. Stépanian—Les monastères d'Erzincan (étude, suite et fin)—(pp. 41—54).
10. Noubar Ter-Mikaëlian—La colonie des Arméniens d'Egypte aux XIe—XII siècles et les églises arméniennes (étude)—(pp. 55—69).
11. S. Amirdjanian—Le Père Arakel du monastère de Guetitch (étude)—(pp. 70—77).
12. Slava Sarksian—La forteresse Chikakar et les monuments d'alentour (étude)—(pp. 78—94).



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի 1992—1993 ուսումնական տարվա փակման համելաբ	3
Հաղորդագրութիւն Ս. Էջմիածնից	8
ՄԱՅՐ Աթոռությ—Եկեղեցական քև. լուրեր	12
Գերաշնորհ Տ. Շամիկ արքապս. Ամենամի քարոզը Մայր տաճարում՝ Վարդապահ տօնին	16
Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանի քարոզը Մայր տաճարում՝ Ս. Աստվածածին Վերափոխման տոնին	20
Վիրահանց թեմում	24
Կուսակրօն քահանակական ձեռնադրութիւն և օծում Իրաքի հայոց թեմէն ներս «Վկայութիւնը ի պէտս քարոզութեանց»	26
Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ—Երգմելայի վաճքերը	29
ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—Եկիպտահայ գաղութը Ժ—ԺԲ դարերում և հայկա- կան եկեղեցիները	41
Ս. ԱՄԴՐՁՍՆՅԱՆ—Գտչա վանքի Առաքել վարդապետը	55
ԱԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ—Շիկարար թերթը և շրջակայքի հուշարձանները «Էշմիածն» օֆիցիալնայի յարագագահ Էշմիածնի Կատոլիկոսաւ «Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin «Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	70
	78
	95
	96
	97

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՐՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, Էջմիածն**

**«Էջմիածն» ԱՐՄԱԿՐՈՒԹՅՈՒՆ**

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 10.08.1993 թ.: Ստորագրված է տպագրության 25.10.1993 թ.:  
Տպագրական 6,1 մամոլ +3 մերդիր, լուրջը 70×108<sup>1/16</sup>, պատվեր 249:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան



ISSN 0134—5249